ՀՅԴ Պաշտօնաթերթ





# ԴՐՕՇԱԿ








Նոյեմբեր N11 (1626)

2010

ԴՐՕՇԱԿ
ՀՅԴ Պաշտօնաթերթ





**«Դրօշակ»**
ամենամսյա պաշտոնաթերթ
Հայ Հեղափոխական Դաշնակցության

Հիմնադիր՝ **ՀՅԴ**

Գլխավոր խմբագիր՝
**Ռուբեն Հովսեփյան**

Խմբագիր՝ **Կ. Խանլարյան**

Համակարգչային շարվածքը՝
**Ս. Խաչատրյանի**

Ձեւավորումը՝ **Ա. Գրիգորյանի**

Ոճը՝ **Ս. Փարթամյանի**

Գրանցման վկայական 897

Երեւան,375010,Մհեր Մկրտչյան 12/ 1
Հեռ. 521 876
Էլ.փոստ.droshak@ arf.am

Տպագրությունը՝ «Բավիղ» ՍՊԸ-ի

**"Droshak"** monthly,
ARF dashnaktsoutiun publication

Editor-in-Chief: **Rouben Hovsepian**

12| 1 Mher Mkrtchian,Yerevan,375010
Tel. 521 876
e.mail:droshak@arf.am

**Խմբագրական**

Բանակցային գործընթացի
նոր տրամաբանութեան որոնումներ 2

**Հարցազրոյց**

Ընկերվար միջազգայնականի
դիրքորոշումները հստակ են 4

**ՀՅԴ 120**

ՀՅԴ ռազմական գործունեությունը 1918-1920 թթ. 8

**Տարածաշրջան**

Ադրբեջանի «հզոր տնտեսության» կառուցվածքային և
բովանդակային հիմնախնդիրները 14

**Տեղեկանք**

Ռուսաստանի Դաշնությունում թուրքական
հատուկ ծառայությունների գործունեության ու
ակտիվության շուրջ 27

**ՀՀ բանակ**

Ավիացիան Արցախյան գոյամարտում 32

**Խմբագրի անկյուն**

Գավառական ձեռնածու 43

**«Դրօշակ»-ը 100 տարի առաջ**

Միջկուսակցային խորհրդաժողով 45

**Նոր գրքեր**

Սոցիալիստական մոտեցումներ Հայաստանի
մարտահրավերներին. գլոբալ հեռանկարներ,
տեղական իրողություններ 47

**Պատկերասրահ**

Պատկերազարդ ընծա՝ ՀՅԴ 120-ամյակի առիթով 48

Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
A.R.F. BURO
LIBRARY



Digitized by ARF PR Office

# Բանակցային գործընթացի նոր տրամաբանութեան որոնումներ

Հայ-ադրբեջանական բանակցութիւնների վերջին զարգացումները, այդ թւում` Աստրախանում կայացած եռակողմ հանդիպումը, վկայում են, որ բանակցային ձեւաչափի փոփոխութեան որոշ փորձեր են նշմարւում: Բանակցային տրամաբանութիւնն է, առհասարակ, թելադրում բանակցութիւնների ձեւաչափը, հետեւաբար` վերջինիս փոփոխման ազդանշանները, իրականում, բանակցային առկայ տրամաբանութեան ձախողման նախանշաններ են:

Ադրբեջանը, ոգի ի բռին, չի ուզում ընդունել «ինքնորոշման սկզբունքը» եւ այս կապակցութեամբ ուղղակի կամ անուղղակի բազմաթիւ ակնարկներ է արել, քաղաքական հնարքներ յօրինել եւ դիւանագիտական խաղեր մոգոնել:

«Տարածքային ամբողջականութեան սկզբունքը» կորցնում է իր իմաստը, երբ աստիճանաբար պարզւում է հակամարտութեան բնոյթը եւ հակամարտող կողմերի իրական հասցէները: Քաղաքական ամենաանտեղեակ գործիչներն անգամ, հարցին մի փոքր առնչուելով, հասկանում են, որ բուն հարցը ոչ թէ Հայաստան-Ադրբեջան տարածքային վէճն է, այլ արցախահայութեան լիակատար ինքնորոշման ցանկութիւնը: Այս իրողութիւնը, իհարկէ, բոլորովին էլ չի արդարացնում հայկական կողմի քարոզչութեան թուլութիւնը: Մինչդեռ նորանոր դռներ բախելու, նորանոր ականջներ որսալու ադրբեջանական այս մարտավարութիւնը պարզորոշ վկայում է առկայ գործընթացում «տարածքային ամբողջականութեան սկզբունքի» ոչ առաջնային նկատուելու, երկրորդ պլան մղուելու իրողութեան մասին:

Յայտնի է, որ «ռազմական ճանապարհով լուծումների բացառման սկզբունքը»

մի քանի անգամ խախտուել է բացառաբար Ադրբեջանի կողմից: Այս սկզբունքի որդեգրման մասին առայժմ զուր է խօսել, քանի դեռ բացայայտ խախտողը շարունակում է մնալ անպատիժ:

Բանակցային գործընթացի շարունակման մի տարբերակը կարող է լինել այն, որ կողմերը շարունակեն պահպանել բանակցութիւնների եւ տրամաբանութիւնը, եւ ձեւաչափը: Գործող այս տարբերակն է, որ առայժմ յաջողութիւն չի արձանագրում:

Բանակցային գործընթացի շարունակման երկրորդ ուղղութիւնն այն է, որ փոխունեն եւ տրամաբանութիւնը եւ ձեւաչափը: Այս տարբերակին է ձգտում Ադրբեջանը, դիւանագիտական իր լայն հնարաւորութիւններով եւ Թուրքիայի հովանաւորութեամբ: Այս տարբերակով Ադրբեջանը փորձելու է ապահովել գերակայութիւն՝ նոր ձեւաչափի շնորհիւ հասնելով տրամաբանութեան փոփոխմանը:

Հայկական կողմի համար ամենաձեռնտու տարբերակը հետեւեալն է՝ առայժմ պահելով բանակցային ձեւաչափը, հետեւողական քայլերով փոխել բանակցային տրամաբանութեան սկզբունքները կամ գոնէ ճշտել խնդրոյ առարկայ սկզբունքների առաջնայնութեան հարցը:

Պէտք է յամառօրէն արծարծել բանակցային գործընթացում ԼՂՀ ուղղակի մասնակցութեան խնդիրը: Այսպիսի դիրքի ապահովումը, ինքնաբերաբար, առաջնային է դարձնելու «ինքնորոշման իրաւունքի սկզբունքը»:

Պահելով հարցի «ռազմական ճանապարհով լուծման բացառման սկզբունքը», զուգահեռաբար, պէտք է շեշտել հարցի իրաւական հիմունքները եւ առաջ քաշել իրաւականութեան սկզբունքը: Այս առումով որոշ տեղաշարժ է նկատւում հայկական կողմի վարած քաղաքականութեան մէջ: ՀՀ նախագահը իր հոկտեմբերի 16-ի ելոյթում պատմական հիմնաւորումներ ներկայացրեց արցախեան հիմնահարցի առնչութեամբ: Այս գնահատելի նախադէպին, մեր համոզմամբ, պէտք է յաջորդեն պատմագիտական եւ իրաւագիտական հիմնաւորումներ:

Պատմագիտութեան բնագաւառում պէտք է հաշուի առնել այն պարզ ճշմարտութիւնը, ըստ որի Արցախը Հայաստանից անջատելու եւ Ադրբեջանին կցելու լենին-ստալինեան որոշումը մի կերպ արդարացնելու եւ խելամիտ ներկայացնելու նպատակով, սովետական պատմագիտութիւնը, իր ողջ մեխանիզմով, տասնամեակներ շարունակ յօրինել ու յօրինել է տարաբնոյթ հիմնաւորումներ, տարածել ու տարածել դրանք եւ արդիւնքում ձեւաւորել «սկզբնաղբիւրներ»-ի այնպիսի մի արկղ, որից կարելի է դուրս բերել անգամ այլազգի հեղինակների՝ է՛լ ազգագրական, է՛լ անտրոպոլոգիական, է՛լ աշխարհագրական, է՛լ ... տարաբնոյթ փաստարկներ ու հակափաստարկներ մեր հիմնաւորումների դէմ: Այս դաշտում համապատասխան լրջութիւն է պահանջւում:

Իսկ իրաւագիտական իմաստով՝ «հարցին մատների արանքով նայելու» վարքագիծը արդէն անթոյլատրելի է: Բազմիցս այս մասին խօսելուց ու կրկնելուց յետոյ, ցաւոք, դեռեւս չի լսւում իրաւագիտական հիմնաւորումների մեր ծանր հրետանու որոտը:

# Ընկերվար միջազգայնականի դիրքորոշումները հստակ են



«Դրօշակի» հարցերին պատասխանում է
ՀՅԴ Բյուրոյի անդամ Լևոն Մկրտչյանը

*- ՀՅԴ-ն նոյեմբերի 15-16-ը Փարիզում մասնակցեց Ընկերվար միջազգայնականի խորհրդի նիստին: Ժողովի ավարտին ԸՄ-ի խորհուրդն ընդունեց ԼՂՀ հակամարտության մասին բանաձև, որին անդրադառնալուց առաջ արժե վերհիշել Բաքվում կայացած Սոցիալիստների Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Սևծովյան տարածաշրջանի կոմիտեի նիստը: Հիմնականում հաջողված համարելով նիստի արդյունքները՝ Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահ Արազ Ալիզադեն հայտարարեց. «Նիստն ապացուցեց, որ Ադրբեջանը պատրաստ է երկխոսության, մինչդեռ Հայաստանի Դաշնակցություն կուսակցության ներկայացուցիչները այդպես էլ չկարողացան եզրակացություններ անել պարտությունից: Նրանք խրվել են անցյալում՝ շարունակելով տարածքային պահանջներ ներկայացնել հարևան պետություններին և փորձելով համոզել իրենց և հնարավորության դեպքում նաև այլոց, որ Հայաստանի կողմից օկուպացված Լեռնային Ղարաբաղը հանդիսանում է «անկախ պետություն»: Դաշնակների այս դիրքորոշումը ծիծաղից բացի ոչինչ չի առաջացնում»:*

*ՀՅԴ ներկայացուցիչները Փարիզ էին մեկնել նույն դիրքորոշմամբ և, որքան հայտնի է, արդեն ավարտված նիստում ծիծաղ չհնչեց:*

*Ինչպե՞ս ընդունեցին Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատները ընդունված բանաձևը:*

- Նոյեմբերի 15-16-ին Փարիզում կայացած Ընկերվար միջազգայնականի խորհրդի նիստը բավականին կարևոր էր նաև իր օրակարգով: Ղարաբաղյան հիմնահարցը, կամ կովկասյան խնդիրը, այնտեղ ոչ թե առանձին քննարկման առարկա էր, այլ դիտվում էր տարբեր հակամարտությունների ցանկում: Ընկերվար միջազգայնականը, որպես խիստ հեղինակավոր միջազգային կառույց, որի անդամ կուսակցություններից շատերն իրենց երկրներում իշխանություն են կամ իշխանական կոալիցիաների մեջ են, փորձում է նաև իր դերակատարումն ունենալ աշխարհի տարբեր անկյուններում առկա հակամարտությունների խաղաղ կարգավորման քաղաքականության մեջ: Սա է պատճառը նաև, որ Ընկերվար միջազգայնականը վերջին տարիների ընթացքում փորձում է ակտիվորեն մոտենալ կովկասյան տարածաշրջանում առկա հիմնահարցին՝ ղարաբաղյան խնդրին:

Ինչպես դուք ճիշտ նշեցիք, Փարիզից առաջ երկու կարևոր նիստեր էին գումարվել Երևանում և Բաքվում: Դրանք, կարելի է ասել, նախապատրաստական փուլ էին, որովհետև չնայած, որ այդ նիստերը գումարվել էին այլ հարցերի քննարկման օրակարգով, բայց դրանցում ակտիվորեն հասունանում էր մեզ հետաքրքրող հարցի քննարկումը ավելի մեծ՝ Ընկերվար միջազգայնականի խորհրդի նիստին ներկայացնելու համար: Այն փաստը միայն, որ Ընկերվար միջազգայնականը քննարկում է հարցը, արդեն իսկ լուրջ ներդրում է հակամարտության հասարակական ընկալման գործում: Այն մեզ համար կարևորվում է նաև այն տեսանկյունից, որ Ընկերվար միջազգայնականը, իր գաղափարախոսությունից մեկնելով, մի քանի սկզբունքային հիմնադրույթներ ունի, որոնք

մեզ համար, որպես հայկական կողմի, նպաստավոր են: Նախ՝ Ընկերվար միջազգայնականը, որպես ժողովրդավար շարժում, որպես սոցիալական հավասարության և մարդու իրավունքների պաշտպանության շարժում, առաջին հերթին կողմ է ազգերի ազատ ինքնորոշման իրավունքի իրագործմանը: Հենց նույն, Պաղեստինի՝ միջինարևելյան կոնֆլիկտի մեջ ԸՄ-ն աներկբա պաշտպանեց Պաղեստինի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, միևնույն ժամանակ կոչ անելով՝ ճանաչել Իսրայել պետությունը: Այսինքն՝ ԸՄ-ի անդամ կուսակցությունների հիմնադրույթներն ու աշխարհընկալման առանցքը իրոք նպաստավոր են մեզ համար: Իր հերթին՝ Երևանում և Բաքվում Դաշնակցության ներկայացրած պահանջների և տեսակետների մի զգալի մասն էլ բխում էր Ընկերվար միջազգայնականի աշխարհայացքային հիմքերից: Ահա այս իրավիճակում խոսել այն մասին, թե Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահ Ալիզադեի հայտարարությունները ինչ ընկալում ու հետևանքներ ունեցան կամ կունենան, անիմաստ է, իսկ նրա ազդեցության մասին խոսելն ընդհանրապես ծիծաղելի է: Նա, ինչպես ազդեցություն չունի Ադրբեջանում, այդպես էլ Ընկերվար միջազգայնականի շրջանակներում: Պարզապես մարդը փորձել է իր երկրի մյուս կուսակցությունների և քաղաքական գործիչների նման, անկախ այն բանից, ընդդիմադի՞ր են, թե՞ իշխանական, ադրբեջանական հայտնի երգը երգել: Բաքվում ադրբեջանական կողմը, իբրև ղարաբաղյան հակամարտության կարգավորման սկզբունքներ, առաջ էր քաշել իրենց հայտնի սկզբունքները՝ ամենալայն ինքնավարություն Ղարաբաղին, տարածքների վերադարձ, տեղահանվածների վերադարձ և այլն: Սրանից հետո, բնական է, որ նույնիսկ մեզ ոչ համակիր շրջանակներն են հասկանում, որ Ալիզադեի հետ խոսել հակամարտության լուծման մասին այն դեպքում, երբ նա հաղթողին բնորոշ կապիտուլյացիոն պահանջներ է ներկայացնում, նույնիսկ հնարավոր չէ: Բաքվում կայացած ԸՄ-ի տարածաշրջանային հանձնախմբի նիստից հետո նրա մի շարք հայտարարություններ, որոնք դուք նույնպես նկատել եք, ներքին օգտագործման նշանակությունից բացի, այլ ֆունկցիա չունեն: Ես Ալիզադեից բացի, շատ այլ ադրբեջանցի քաղաքական գործիչների եմ հանդիպել զանազան միջազգային ֆորումներում, որոնց հետ մեր շփումներում պարզել եմ մի հասարակ բան՝ նրանց ավելի շատ ոչ թե հետաքրքրում է Ղարաբաղի խնդիրն ու այդ խնդրի լուծումը, այլ այն, թե ինչպես արդարանան իրենց երկրում, ինչ անեն, որ հերոսի կեցվածքով տուն վերադառնան:

Փարիզում, Ընկերվար միջազգայնականի լայն նիստի ժամանակ Ալիզադեն ընդհանրապես չէր կարող նման հայտարարություններ անել, թեև իրենց նույն տեսակետը, որ կար Բաքվում և որը ոչ մի կոնստրուկտիվ նյութ չէր պարունակում, գրավոր տեսքով առկա էր նաև այնտեղ: Ի տարբերություն նրանց այսպես կոչված տարբերակի, մեր տարբերակում, որ ներկայացվել էր ԸՄ-ի ուշադրությանը և որը լուրջ աշխատանքի արդյունք էր, փորձել էինք մեր առաջարկները կապել արդեն առկա փաստերի և իրողությունների հետ: Որպես այդպիսիք նշվել էին և Կոսովոյի հետ կապված իրավարար վճիռը, որի մասին մենք ցանկանանք, որ բարձրաձայնվեր, և 1994 թ. զինադադարի համաձայնագրերը, ինչպես նաև ազգերի ազատ ինքնորոշման կարևորագույն սկզբունքը առաջ մղելու մեր ռազմավարական քայլերը: Արդյունքում, ելույթների և առաջարկությունների հիման վրա էլ ընդունվեց խնդրո առարկա հայտարարությունը, որը, պետք է ասեմ, բավականին հավասարակշռված փաստաթուղթ է: Եթե չեմ սխալվում, Ադրբեջանի ներկայացուցիչը, Բաքու վերադառնալուց հետո, արդեն հայտնել է իր հիասթափությունն այս բանաձևից, ինչը մեկ անգամ ևս խոսում է փաստաթղթի հավասարակշռված լինելու մասին: Նման բանաձևերն իսկապես ազդում են հասարակական կարծիքի ձևավորման վրա, և մենք, իմ կարծիքով, շատ անելիք ունենք միջազգային նաև այլ կառույցներում նման բանաձևեր անցկացնելու համար: Ի վերջո, ինչպես Ընկերվար միջազգայնականում, նաև այլ կառույցներում ներկայացված են կուսակցություններ, որոնք իրենց երկրներում իշխող դիրքեր են զբաղեցնում՝ ընդհուպ մինչև նախագահի ու վարչապետների մակարդակով: Կոնկրետ Սոցինտերնի անդամ կուսակցություններից

շատերն իրենց երկրներում կառավարող կուսակցություններ են, նախագահներ ունեն այդ երկրներում, և Սոցինտերնի բանաձևերն իրոք կարող են լուսաբանող և ուղղորդիչ լինել հասարակական կարծիքի ձևավորման համար: Ես սա կհամարեի այս բանաձևի հիմնական արդյունքը:

*- Ադրբեջանցի նույն քաղաքական գործիչն իր մի հարցազրույցում «բացահայտել է» ՀՅԴ գաղափարախոսությունը և Դաշնակցությունը համարում է ոչ թե սոցիալ-դեմոկրատական, այլ ազգային սոցիալիստական կուսակցություն: Ոչ միայն այդպես է համարում, այլև փորձում է համոզել Սոցինտերնին, որի լիիրավ անդամն է ՀՅԴ-ն: Ալիզադեի կուսակցությունը Սոցինտերնի լիիրավ անդամ չէ, բայց արի ու տես, որ բանաձևի նախաբանում թե Հայաստանի և թե Ադրբեջանի ներկայացուցիչները համարվել են «մեր անդամ» կուսակցությունների ներկայացուցիչներ, այսինքն՝ հավասարության նշան է դրվել լիիրավ անդամի և խորհրդակցական անդամի միջև: Ինչո՞վ է բացատրվում այս երևույթը: Եվ, արդյոք, Ալիզադեն Փարիզում չշարունակե՞ց իր բացահայտումները...*

- Որ Ալիզադեն փորձում է «բացահայտել» Դաշնակցությունը, ինձ համար նորություն չէ: Նա արդեն 20 տարի է, ինչ Ադրբեջանի քաղաքական կյանքում է և տենդորեն տեղ է որոնում իրենց քաղաքական համակարգում: Ու քանի որ Ադրբեջանում կարելի է լավագույն քաղաքական կարիերա անել հայկական ամեն ինչին հարվածելով, Ալիզադեն էլ որպես թիրախ ընտրել է Դաշնակցությանը, որովհետև մենք և իր կուսակցությունը, ճիշտ է՝ տարբեր կարգավիճակներով, բայց նույն Սոցինտերնի մեջ ենք: Բայց ես ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ Սոցինտերնի որևէ պաշտոնական համաժողովում նա չի կարող նման արտահայտություններ թույլ տալ իրեն, որովհետև դա շատ վատ կընկալվի մյուսների կողմից: Հետևաբար, նրա այդ հայտարարությունները ուղղված են իրենց ներքին լսարանին և այդ իսկ պատճառով նույնիսկ մեկնաբանության արժանի չեն:

*- Այժմ անդրադառնանք բուն բանաձևին. առաջին կետով՝ «Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի պաշտոնականացում» արտահայտությունը ի՞նչ է նշանակում: Եթե դե-ֆակտո կարգավիճակին է վերաբերում, ապա ինչպե՞ս հասկանալ հոդվածի շարունակությունը. «...և տարածաշրջանի համար բոլորի կողմից ընդունելի վերջնական կարգավիճակ»:*

- Սա բանաձևի կարևոր կետերից մեկն է: Ի՞նչը կարող է պաշտոնականացվել առաջին հերթին: Պաշտոնականացվում է դե-ֆակտո գոյություն ունեցող վիճակը: Սա մեզ համար կարևորագույն դրույթ է, հենց սա է ադրբեջանցիներին դժգոհելու առիթ տվող հիմնական կետը: Հոդվածի շարունակությամբ էլ, փաստորեն, Սոցինտերնը փորձում է մի կարևոր մոտեցում ևս ամրագրել, այն, որ պաշտոնականացվող կարգավիճակը պետք է բավարարի բոլորին: Այսինքն՝ չպետք է հաղթողներ ու պարտվողներ լինեն, եթե մենք ցանկանում ենք խոսել հակամարտության վերջնական հաղթահարման մասին:

*- Երկրորդ կետը վերաբերում է տեղահանվածների իրավունքների հաստատմանը: Տեղահանված ասելով՝ ո՞ւմ նկատի ունի բանաձևը: Տեղահանվածներ են միայն ԼՂՀ-ի՞ց, թե՞ նաև Ադրբեջանից և Հայաստանից հեռացածները: Եվ արդյո՞ք նկատի է առնված, թե ով ինչպես է տեղահանվել:*

- Սա նույնպես կարևոր հարց է մեզ համար: Երևի թե մենք պետք է այսուհետ ամեն տեղ տեղահանվածներ հասկացության ներքո ներկայացնենք նաև մեր արդար իրավունքները: Հարյուր հազարավոր հայեր են, ի վերջո, տեղահանվել: Նրանց մի մասը տեղահանվեց իր բուն հայրենիքից, ինչպես Գանձակի և Հյուսիսային Արցախի հայությունը, մյուս մասը՝ Բաքվից, որտեղ հարյուրավոր տարիներ ապրել էր ու կառուցել այդ քաղաքը, և նրանց վերադարձի իրավունքը նույնքան բացարձակ իրավունք է, ինչպես մյուս տեղահանվածներինը: Այս իմաստով նման փաստի ամրագրումն իրոք կարևոր էր:

*- Թե 1994 թվականի զինադադարի պայմանագիրը հարգելու, թե համարժեք, հավասարաչափ և միաժամանակյա զիջումների հասնելու նպատակով քաղաքական կամք*

*ցուցաբերելու կոչերը, արդյոք, բացի բարի ցանկությունից, իրականանալու որևէ հիմք ունե՞ն: Եթե նկատի ունենանք նույն Այազ Ալիզադեի, և ոչ միայն նրա, այն հայտարարությունը, ըստ որի՝ Ադրբեջանը երկու տարբերակ ունի միայն. կամ Լեռնային Ղարաբաղին կտա ինքնավարության ամենաբարձր կարգավիճակ և կամ՝ պիտի պատերազմի:*

- Իմ կարծիքով Սոցինտերնի փարիզյան նիստում ընդունված բանաձևի ամենակարևոր հաջողությունը, թերևս, այն է, որ նրանում տեղ գտավ 1994 թվականի հրադադարի պայմանագիրը, որի տակ Հայաստանից ու Ադրբեջանից բացի իր ստորագրությունն է դրել նաև Լեռնային Ղարաբաղը: Պետք է ընդունենք, որ Եվրոպայում ասպարեզ եկած քաղաքական երիտասարդ սերնդի աչքին տարիների ընթացքում Ադրբեջանն իրոք կարողացավ ստեղծել մի պատկեր, որ այս հակամարտությունը հայ-ադրբեջանական տարածքային վեճ է: Ասել է, թե մենք այսօր լուրջ մարտահրավեր ունենք այս ճակատում: Պետք է կարողանանք նորից մեր բոլոր համակիրներին, հասարակական լայն շրջանակներին, Եվրոպային և աշխարհին ներկայացնել արցախյան շարժման բուն էությունը, որովհետև այս շարժումը դեմոկրատական շարժում էր, որ մեծագույն ցնցումներ առաջացրեց Խորհրդային Միության փլուզման ժամանակաշրջանում: Այն, ի վերջո, ամբողջ առաջադեմ մարդկության կողմից ընկալվում է որպես առաջադեմ դեմոկրատական շարժում, ինքնորոշման շարժում, որով Արցախը Խորհրդային Միության օրենքներին համընթաց ձևավորեց իր պետականությունը, ինչպես որ Ադրբեջանը՝ իր: Մենք պետք է կարողանանք խնդիրը ներկայացնել հենց այս համատեքստում:

Նույն օրերին մենք ունեցանք նաև Եվրոպայի Հայ Դատի հանձնախմբերի մի խորհրդաժողով, որի հիմնական խնդիրն էր՝ Հայ Դատի հանձնախմբերի աշխատանքն ամբողջությամբ ուղղորդել նախ և առաջ Լեռնային Ղարաբաղի խնդրի շուրջ դրական հասարակական կարծիքի ձևավորմանը: Դրա համար պետք է, երկրից երկիր, քաղաքից քաղաք անցնելով, աստիճանաբար ընդլայնել Հայ Դատի հանձնախմբերի ընտանիքը, փորձենք այն բոլոր պատգամավորներին, ովքեր իրենց երկրներն են ներկայացնում եվրոպական կառույցներում, բացատրել Արցախի հիմնահարցի էությունը: Սա շատ լուրջ մարտահրավեր է, և եթե մենք այդ մարտահրավերը չդիմագրավենք, Արցախի հարցը կդատապարտենք մեխանիկական քվեարկության: Սոցինտերնի բանաձևի մեջ 1994 թվականի զինադադարի հիշատակումն արդեն իսկ անում է այդ ճանապարհի մի կարևոր քայլը, որը, ինչպես ասացի, զինադադարի փաստաթղթի տակ դրված երեք համազոր ստորագրությունների առկայության փաստի ամրագրումն է:

Իսկ ինչո՞վ է մեզ համար կարևորվում Սոցինտերնի ընդունած բանաձևի այն պարբերությունը, ուր խոսվում է հավասարաչափ, համարժեք և համընթաց փոխզիջումների մասին: Հաճախ աշխարհը, երբ խոսք է գնում Ադրբեջան-Հայաստան հակամարտության կարգավորման գործընթացում անընդհատ հիշատակվող փոխզիջումների մասին, անմիջապես պատկերացնում է տարածքային խնդիր և, առանց խորանալու հիմնահարցի մեջ, փորձում է նախընթաց հարց տալ՝ Հայաստանը պատրա՞ստ է տարածքները վերադարձնել Ադրբեջանին: Բայց երբ մենք խոսում ենք հավասարաչափ, համարժեք և համընթաց փոխզիջումների մասին, դա նշանակում է, որ առաջին քայլն այս հակամարտության կարգավորման մեջ պետք է Ադրբեջանը կատարի՝ ճանաչելով Լեռնային Ղարաբաղը որպես անկախ պետություն իր կազմից դուրս: Քանի դեռ այս ճանաչումն Ադրբեջանի իշխանությունների կողմից չկա, խոսել մեր կողմից հնարավոր քայլերի մասին, ընդհանրապես անիմաստ է: Սա է պատճառը, որ մենք պնդում ենք, որպեսզի լինեն հավասարաչափ, համարժեք և համընթաց քայլեր: Նկատենք, որ սա սոսկ բանաձևային դրույթ լինելուց զատ, նաև հարցի լուծման մեթոդիկա է: Այն Սոցինտերնի անդամ կուսակցությունների համար նախորոշում է բանակցային գործընթացի մեթոդիկան: Սա նպաստավոր է նաև այն տեսանկյունից, որ բանակցային գործընթացում բացառում է ճնշումները Հայաստանի վրա՝ նրանից միակողմանի զիջումներ կորզելու նպատակով:

*- Շնորհակալություն:*

# ՀՅԴ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1918-1920 ԹԹ.

(Հիմնադրման 120-ամյակի առթիվ)

Արարատ Հակոբյան
Պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Այսօր, երբ 120-ամյա հեռավորությունից նայում ենք հայ քաղաքական ամենաազդեցիկ կուսակցություններից մեկի՝ Հայ Հեղափոխական Դաշնակցության (ՀՅԴ) անցած պատմական ուղուն, դժվար չէ նկատել, որ այն ընթացել է հետևյալ չորս հիմնական շրջափուլերով՝

1. 1890-1918 թթ.՝ հայ ազատագրական պայքարի կազմակերպման ու Հայկական հարցի լուծման փորձությունների ժամանակաշրջան,

2. 1918-1920 թթ.՝ Հայաստանի Առաջին Հանրապետության պետական շինարարության տարիներ,

3. 1921-1990 թթ.՝ Սփյուռքյան գործունեություն,

4. 1991-2010 թթ.՝ մասնակցություն Հայաստանի Երրորդ Հանրապետության կայացմանը:

Սույն հրապարակման խնդիրն է ամփոփ անդրադառնալ ՀՅԴ պատմության երկրորդ շրջափուլին՝ պետական շինարարությանը, Հայաստանի Հանրապետության կայացման գործում նրա նշանակալի դերակատարությանը: Հիրավի, Առաջին հանրապետության ժամանակաշրջանը համարվում է ՀՅԴ պետական գործունեության ամենաբեղուն շրջանը: Եվ այդ իմաստով ամենևին էլ պատահական չպետք է համարել, որ տասնամյակներ շարունակ խորհրդահայ պատմագրության մեջ 1918-1920 թթ. ՀՀ պատմությունը նույնացվել է Դաշնակցության պատմության հետ՝ հեգնորեն այն անվանելով «դաշնակների հանրապետություն», «դաշնակների տիրապետություն» և այլն:

Հայ պատմագրության մեջ չկա միասնական հայացք Առաջին հանրապետության ու մասնավորապես ՀՅԴ գործունեության գնահատականի շուրջ: Մի կողմից՝ խորհրդահայ պատմագրությունը, հենվելով Հ. Քաջազնունու և Լեոյի հայտնի աշխատությունների վրա, հասկանալի պատճառներով, ըստ էության, խեղաթյուրել ու անվանարկել է ՀՅԴ գործունեությունը, իսկ մյուս կողմից՝ Սփյուռքի դաշնակցական առանձին հուշագիր-հեղինակներ երբեմն միակողմանիորեն գովերգել են իրենց կուսակցության գործունեությունը՝ նկատելու չտալով թույլ տված առանձին սխալներն ու բացթողումները: Ամեն դեպքում անուրանալի է այն փաստը, որ Դաշնակցություն կուսակցությունն է եղել հայոց պետական մեքենայի առաջ շարժող քաղաքական գլխավոր ուժը:

Լրացուցիչ ապացույցի կարիք չունի հայտնի այն իրողությունը, որ 1918 թ. գարնանը ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրադրության պայմաններում՝ Հայաստանի անկախության հռչակման շատ համարձակ քայլի նախապատրաստությունից մինչև հանրապետության անկման վերջին օրը՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ը, այդ կուսակցությունն է եղել հիմնական կառավարող քաղաքական ուժը, և նա է հիմնականում իր ուսերին կրել իշխանության մարմինների ձևավորման, բանակի կայացման, տեղական ինքնակառավարման հաստատման, արտաքին ու ներքին քաղաքականության վարման հիմնական բեռը: Նա է ստանձնել անկախ



Հովհաննես Քաջազնունի

պետականության, ժողովրդի ու հայրենիքի անվտանգության ամբողջ պատասխանատվությունը[1]:

Հարց է ծագում՝ որո՞նք էին Առաջին հանրապետության շրջանում հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցության պետականաստեղծ գործունեության գլխավոր արդյունքները:

- Ամենից առաջ ՀՅԴ-ն վճռական դերակատարություն ունեցավ Հայաստանի անկախության վճռի կայացման գործում: Չնայած անկախությունը եկավ արագ ու անսպասելի, սակայն այն ուներ իր ներքին տրամաբանությունը: «Մայիսի 28-ի» գլխավոր խորհուրդը կայանում էր նրանում, որ եթե տվյալ պահին Հայոց (կենտրոնական) ազգային խորհուրդը չընդուներ անկախության վերաբերյալ պատմական որոշում և իրեն չհայտարարեր հայկական գավառների գերագույն իշխանություն, ապա հայապատկան տարածքները պարզապես բաժին կդառնային հարևան թուրքերին, ադրբեջանցի թաթարներին և վրացիներին[2]: Այնպես որ Հայաստանի անկախության ակտը պատմական անհրաժեշտություն էր և ստեղծված պայմաններում չուներ այլընտրանք: Ավելին՝ մեծագույն իրադարձություն էր, որի իմաստն ու արժեքը նոր-նոր է հասկացվում ու գնահատվում: Եվ այս տեսակետից միանգամայն անհիմն են խորհրդային ու խորհրդամետ պատմագիրների մեղադրանքները Դաշնակցության և «Մայիսի 28-ի» անկախության ակտի հասցեին:

- Անկախության հռչակումից հետո ՀՅԴ գործունեության առանցքը դարձավ գրեթե ոչնչից (ցարիզմից ժառանգություն ստացած), առաջին վարչապետ Հ. Քաջազնունու բնութագրմամբ՝ «անձև քաոս և ավերակների կույս» համարվող երկրամասից Հայոց պետականության շենքի՝ Հայաստանի Հանրապետության կերտումը: Խնդիր էր դրված ստեղծել պետական մեքենա, պետական իրավակարգ, հաստատել կարգուկանոն, երկիրը դուրս բերել քաոսից ու անիշխանությունից, գաղթականությանը սնունդ ու բնակարան տալ, կարգավորել պարենավորումը, ֆինանսները, հաղորդակցությունը, ստեղծել բանակ, հնազանդեցնել ազգամիջյան ներքին խռովությունները, հարթել սահմանային վեճերը, մի խոսքով՝ ստեղծել կենսունակ և կազմակերպված պետություն[3]: Եվ նման կուտակված խնդիրների պայմաններում հանրապետության նորաստեղծ իշխանությունները ձեռնամուխ եղան պետականության կայացմանը:

Հարկ է նշել, որ ՀՀ գոյության 2,5 տարում կազմվել է չորս կառավարություն (կաբինետ)՝ բացառապես կամ գերազանցապես ՀՅԴ մասնակցությամբ: Երկու դեպքում իբրև պետական կառավարման ժողովրդավարական դրսևորում կազմվել է խառը (կոալիցիոն) կառավարություն՝ մի դեպքում (8 ամիս) ՀԺԿ, իսկ մյուս դեպքում (10 օր)՝ էսէռների հետ: Սակայն, երբ նոր էր ձևավորվում անդրանիկ կաբինետը, և Հայաստանը հայտնվել էր աննկարագրելի ծանր պայմաններում (11 հազ. կմ$^2$, 300 հազարից ավելի գաղթականություն, թուրք-թաթարական շրջապատում, ավեր ու քայքայում) նորընտիր վարչապետ Հ. Քաջազնունին կոալիցիոն սկզբունքով անդրանիկ կառավարություն կազմելու նպատակով մեկ ամսից ավելի բանակցեց Հայոց ազգային խորհրդի մաս կազմող կուսակցությունների հետ, բայց անարդյունք: ՀԺԿ-ն միանշանակ պահանջեց, որ Մ. Պապաջանյանին տրվի վարչապետի պաշտոնը: Էսէռները «սկզբունքային նկատառումներով» որոշեցին չմտնել Քաջազնունու կաբինետ: Նույն կերպ կաբինետ մտնելուց հրաժարվեցին հայ սոց.-դեմ. մենշևիկները՝ պատճառաբանելով, որ չեն ուզում իշխանությունը կիսել բուրժուական որակվող Հայ ժողովրդական կուսակցության հետ[4]: Արդյունքում՝ Հայաստանի համար, իրոք, շատ ծանր ժամանակաշրջանում մյուս կուսակցությունները փաստորեն հրաժարվեցին լծվել նորակազմ պետական սայլին և հայրենիքի ու ժողովրդի ճակատագրի հանդեպ ողջ պատասխանատվությունը ՀՅԴ-ն ստանձնեց միայնակ: Այդպիսով, ՀՅԴ-ն դարձավ պետական գործոն և, հուշագիրների վկայությամբ, գործելու մեծ եռանդ էր ցույց տալիս: «Երեկվան ֆեդայական, հայդուկային կազմա-

1. Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետություն (1918-1920 թթ.), Ե., 1992, էջ 7:
2. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Ե., 1998, էջ 9:
3. «Հորիզոն», 15 օգոստոսի 1918 թ., Ս. Վրացյան, Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, էջ 182:
4. "Кавказское слово", 11 июня 1918 г., «Աշխատանքի դրոշակ», Թիֆլիս, 30 հունիսի 1918 թ., «Ասպարեզ», 28/29 մայիսի 1992 թ.:


*Ալեքսանդր Խատիսյան*

կերպությունը,- գրում է ռամկավար գործիչ Ա. Դարբինյանն իր հուշերում,- այսօր դարձել է օրինական կառավարություն և ղեկավարում է Հայաստանի պետական կյանքը: Շատ ծանր բեռ է առել նա իր ուսերին: Մեր մյուս կուսակցությունները հեռվից և վերապահությամբ են օժանդակում նրան»[5]:

- ՀՅԴ պետաիրավական գործունեության ամենաէական արդյունքներից մեկը իշխանության եռաթև մարմինների ձևավորումն էր՝ գործադիր, օրենսդիր և դատական համակարգերով: Դրանցից առավել ուշադրության է արժանի օրենսդիր մարմինը՝ խորհրդարանը՝ իր երկու գումարումներով: Կարելի ասել, որ ՀՀ խորհրդարանը համապատասխանել է ժամանակվա պառլամենտարիզմի չափանիշներին՝ իր ընտրակարգով, աշխատակարգով, կառուցվածքով, ընդունած օրենքներով և այլն: Հայ ժողովրդի բազմադարյա պատմության մեջ առաջին անգամ 1919 թ. ընդունվեց ընտրական օրենսգիրք և, իր թերություններով հանդերձ, անցկացվեցին խորհրդարանական ընտրություններ: ՀՀ պետականության կառույցի աղյուսներն էին խորհրդարանի ու կառավարության ընդունած 1200-ից ավելի օրենքները և ակտերը, որոնք կարևոր դեր են խաղացել անկախ պետականության ամրակայման, պետական ու հասարակական կյանքը բնականոն հունի մեջ դնելու գործում[6]:

ՀՅԴ ձևավորած կառավարության և խորհրդարանի գործունեության մեջ հիմնարար տեղ է գրավում օրենսդրական աշխատանքը: Այս տեսակետից արժանին պետք է մատուցել ՀԺԿ-ին, որը, ութը ամիս քաղաքական կոալիցիայի մեջ լինելով ՀՅԴ-ի հետ, էապես նպաստեց օրինաստեղծ և դատական համակարգի բարելավմանը:

Յուրաքանչյուր կենսունակ պետության ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նաև նրա դատական համակարգով ու առաջին հերթին երդվյալ ատենակալների ինստիտուտի առկայությամբ: Ցարիզմի ժամանակներից գոյություն ունեցող քառաստիճան դատական ատյաններին փոխարինելու եկավ եռաստիճանը, որը, ի դեպ, շատ գծերով նման է ներկայիս ՀՀ դատական համակարգին:

Ամբողջությամբ վերցրած՝ Հայաստանի խորհրդարանի և կառավարության օրենսդրական գործունեությունը միտված էր այն բանին, որ ընդունվեն Հայաստանի տնտեսական կացութաձևին և ազգային հոգեկերտվածքին հարազատ օրենքներ: Էական քայլեր կատարվեցին հայացնելու ու ազգայինի դարձնելու պետական հիմնարկները, դատարանը, բանակը և այլն:

Անշուշտ, հանրապետությունում պակասում էին շատ օրենքներ, չկար հարգանք նաև եղածների նկատմամբ: Հանրապետության ներքին ու արտաքին անկայուն պայմանները, Հայկական հարցի շարունակ ձգձգումը անորոշության մեջ էին պահում ժողովրդին ու կառավարությանը և դրանով իսկ քաղաքական պատրաստ հող ստեղծում ներքին անկայունության և անիշխանական երևույթների դրսևորման համար: Հասարակության մեջ թույլ էր զարգացած քաղաքական ու իրավական մշակույթը: Հարգանքը պետության նկատմամբ առանձնապես մեծ չէր: Հաճախ գյուղացին չէր ուզում հարկ ու տուրք մուծել և զինվոր տալ պետությանը: Ոմանց մեջ արմատացել էր այն մտայնությունը, որ եթե պետությունը հայկական է, ուրեմն այլևս հարկեր, տուրքեր և այլ պարտավորություններ պիտի չունենան նրա հանդեպ: «Նրանք զարմանքով ու զայրացած կհարցնեին՝ ինչպե՞ս թե, այժմ երկիրը մերն է, դարձյա՞լ, նորե՞ն պիտի տանք զինվորներ և տուրքեր»[7]: Սա ինքնին վկայում է այն մասին, որ հայ ժողովրդի մեծ մասի մեջ տակավին չէր ձևավորվել հայրենիքի, անկախ պետականության պաշտպանության և ամրապնդման համընդհանուր միասնական ըմբռնում: Մյուս կողմից՝ պետք էր հասկանալ եղեռն տեսած ու պատերազմի ահավոր զրկանքներ կրած ժողովրդի հոգեկան խախտված վիճակը և կյանքի նյութական ահավոր պայմանները: Ուստի՝ շատ դժվար էր կարգուկանոն պահանջել գաղթած, քաղցած ու ցնցոտիավոր մարդկանցից, որոնք երբեմն «նախընտրում էին սովի փոխարեն գնդակով մեռնել»[8]: Եվ այդ իմաս-

5. Դարբինյան Ա., Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 432:
6. «Հայաստանի պառլամենտի օրենքները» (1918-1920 թթ.), Ե., 1998:
7. Չալխուշյան Գ., Ինչ էր և ի՞նչ պիտի լինի մեր ուղին, Վիեննա, 1928, էջ 15:
8. Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Է, Լոս Անջելես, 1952, էջ 302:



*Ռուբեն Տեր-Մինասյան*

տով իրավացի ու արդարացի չենք լինի, եթե այս ամենի համար մերկապարանոց մեղադրանքներ ներկայացնենք այն ժամանակվա հիմնական կառավարող կուսակցությանը՝ ՀՅԴ-ին:

- ՀՅԴ տեսական գործունեության բնագավառներից էր սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Տնտեսության ասպարեզում նրա դավանած ու որդեգրած քաղաքականությունը համերաշխվում էր արևմտաեվրոպական երկրների, կարելի է ասել՝ եվրոսոցիալիզմի մոդելին և ընդհանուր ոչինչ չուներ սոցիալիզմի խորհրդային մոդելի հետ: 1920 թ. Հայաստանում ՀՅԴ-ն դեռ մտադիր չէր «սոցիալիզմ կառուցել», որովհետև նա ստիպված էր ժողովրդի հետ միասին մաքառել արտաքին թշնամու, սովի, ցրտի, համաճարակի, խավարի դեմ: ՀՅԴ-ն գտնում էր, որ ընկերվարական բարենորոգումները ՀՀ-ում դեռևս անժամանակ են ու չհասունացած[9]: Ուստի գործնական քաղաքականության ասպարեզում դաշնակցական կառավարությունը պաշտպանում էր սեփականության ձևերի բազմազանությունը, օտար ներդրումները, տնտեսավարման ազատությունը և միաժամանակ պետության կարգավորիչ դերի անհրաժեշտությունը տնտեսական ու սոցիալական քաղաքականության ոլորտներում: Ի դեպ, ՀՅԴ գլխավորած բոլոր կառավարությունների սոցիալական քաղաքականությունը ունեցել է, Դաշնակցության ընկերվարական ոգուն համապատասխան, ընդգծված սոցիալական ուղղվածություն:

Ագրարային հարցում ՀՅԴ-ն, ռուսական էսէռների նմանությամբ, 1907 թ. իր ծրագրով որդեգրել էր գյուղացիությանը շատ հոգեհարազատ հողի (բայց ոչ արտադրության) սոցիալիզացիայի (համայնացման) ծրագիր, սակայն բավարար նախադրյալների բացակայության ու հասկանալի ժամանակի սղության պատճառով այն չգործադրվեց: ՀՅԴ-ն և նրա կառավարությունը իրավացիորեն գտնում էին, որ տնտեսապես ու քաղաքականապես հետամնաց, որբերով ու գաղթականներով լեցուն Հայաստանում վաղաժամ ու ավելորդ էր խոսել սոցիալիզմի մասին[10]:

- ՀՅԴ տեսական գործունեության մյուս կարևոր ոլորտը բնականաբար նրա ձևավորած կառավարության վարած արտաքին քաղաքականությունն էր: ՀՀ արտաքին քաղաքականությունը միտված էր երկու հիմնական խնդիրների: Դրանցից մեկը՝ անմիջական հարևանների հետ բարիդրացիական հարաբերությունների հաստատումը և միջազգային հանրության կողմից աջակցություն ստանալն էր: Իսկ մյուսը՝ Հայկական հարցի լուծումը, այսինքն՝ արևմտահայ նահանգները, Հայաստանի Հանրապետությանը միացնելով, Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը:

ՀՀ արտաքին քաղաքականության միջանկյալ օղակներն են եղել Լոռիի, Զանգեզուրի ու Ղարաբաղի խնդիրները: ՀՅԴ արտաքին քաղաքականության ակտիվին կարելի է դասել 1918 թ. դեկտեմբերյան զինաբախման ժամանակ Հայաստանի կառավարության ցուցաբերած հաստատակամությունը: Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման համատեքստում Ղարաբաղն ու Զանգեզուրը համարվում էին Հայաստանի անբաժան մասը[11]: Ինչպես հայտնի է, Զանգեզուրի հարցը լուծեց տեղի հերոսական ժողովուրդը ու հատկապես կապանահայությունը՝ Գ. Նըժդեհի գլխավորությամբ, իսկ Ղարաբաղի հարցը դարձավ այսօրվա լուծելիք խնդիր:

ՀՀ կայացմանը զուգընթաց ջանքեր էին թափվում արտաքին աշխարհի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ուղղությամբ: ՀՀ միջազգային ճանաչում ապահովելու և Հանրապետության առջև ծառացած քաղաքական, ազգային-պետական անվտանգության, տնտեսական, առևտրային, հումանիտար և այլատեսակ խնդիրները լուծելու համար մեկ-երկու տարում դիվանագիտական կապեր հաստատվեցին և տարաբնույթ շփումներ իրականացվեցին աշխարհի 40-ից ավելի երկրների ու կառավարությունների հետ[12]:

Ընդառաջ գնալով օրվա հրամայականին և համազգային մտայնություն դարձած հայ ժողովրդի գե-

9. «Դրօշակ», 1929, թիվ 4-5, էջ 70:
10. Խուդինյան Գ., Հակոբյան Ա., ՀՅ Դաշնակցության պատմության խեղաթյուրման վերջին փորձերը, Ե., 2005, էջ 40-41:
11. Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. Է, Լոս Անջելես, 1952, էջ 205:
12. ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, 1-ին մաս, թ. 18, ֆ. 113, ց. 3, գ. 40, թթ. 55-56:

րագույն կամքին, 1919 թ. մայիսի 28-ին Հայաստանի կառավարության անունից պաշտոնապես հրապարակվեց Հայաստանի բաժան-բաժան մասերի միացման ու «Միացյալ և Անկախ Հայաստանի մասին» պաշտոնական հայտարարությունը: ՀՅԴ-ն ամենայն պատասխանատվությամբ ու հետևողականությամբ պաշտպանեց ու հետամուտ եղավ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրականացմանը՝ այն դարձնելով Հայաստանի արտաքին քաղաքականության գերխնդիր: Այդ տեսլականը կուսակցության գործնական քաղաքականության հիմնաքարը դարձավ 1919 թ. աշնանը Երևանում գումարված ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովում: Համաժողովի որոշմամբ կուսակցության ծրագրում կատարվեց համապատասխան փոփոխություն. «Նվիրագործել Անկախ և Միացյալ Հայաստանի հայտարարությունը և նրա ամբողջացման ու զարգացման ձգտել բոլոր զորությամբ, Ժողովրդավար (դեմոկրատիկ) հանրապետության հիման վրա»[13]: Պետք է նկատել, որ այն ժամանակ Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը միանգամայն իրականանալի գործընթաց էր, որովհետև Առաջին աշխարհամարտի արդյունքով քայքայվել էին աշխարհի չորս կայսրությունները և վերաձևվում էր աշխարհի քաղաքական քարտեզը:

Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարն իր մարմնավորումը գտավ Սևրի պայմանագրում, սակայն, ցավոք, այն մնաց թղթի վրա և չկենսագործվեց կյանքում: 1920 թ. աշնանը քեմալական Թուրքիայի և բոլշևիկյան Ռուսաստանի համատեղ ռազմաքաղաքական միջամտության և Արևմուտքի մեծ տերությունների դրսևորած անհետևողականության ու անտարբերության հետևանքով ոչ միայն չիրագործվեց Սևրի դաշնագրով նախատեսված Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարը, այլև աշխարհի շատ պետությունների կողմից արդեն պաշտոնապես ճանաչված ՀՀ-ն կորցրեց իր տարածքների զգալի մասը, անկախությունը և խորհրդայնացվեց:

Այդուհանդերձ, վերջին 90 տարում ՀՅԴ նվիրական գերնպատակը եղել ու մնում է, Հայ Դատի ու պահանջատիրության համատեքստում, Միացյալ և Անկախ Հայաստանի գաղափարի իրականացումը՝ անկախ դրան հասնելու ներկայիս հնարավորությունից ու հեռանկարից:

- Յուրաքանչյուր պետության կայացածության աստիճանը և ժողովրդավարության մակարդակը կարելի է չափել նրա հասարակական-քաղաքական կյանքով, կուսակցական համակարգով, ընդդիմության գոյությամբ ու գործունեությամբ: Պետք է ասել, որ ՀՀ-ում գործում էին շուրջ մեկ տասնյակի հասնող կուսակցություններ, որոնք իրենց քաղաքական դավանանքով ու



*Համո Օհանջանյան*

հետապնդած նպատակներով լրացնում էին հանրապետության քաղաքական դաշտի բոլոր երեք թևերը, և կարելի է ասել, որ նրանք հիմնականում կայացած էին, մի բան, որ դեռևս չենք կարող ասել այսօրվա Հայաստանի կուսակցությունների վերաբերյալ: Հանրապետությունում գործել են խորհրդարանական և արտախորհրդարանական կուսակցություններ: Հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցության գլխավորած կառավարությունը հիմնականում ապահովել է խոսքի ու մամուլի ազատություններ, թույլատրվել է այլախոհություն: Ընդ որում՝ ընդդիմադիր մամուլը իր թվաքանակով չէր զիջում կառավարող կուսակցության և իշխանամետ մամուլին[14]:

Անշուշտ, պետականության կայացման գործընթացում հանրապետությունում գործող քաղաքական ընդդիմադիր և ոչ ընդդիմադիր կուսակցությունների միջև գաղափարա-քաղաքական պայքար էր ընթանում Հայաստանի անկախության, քաղաքական կողմնորոշման, պետական իշխանության կառուցվածքի, վարվելիք ներքին ու արտաքին քաղաքականության խնդիրներում: Ավելին, ՀՅԴ կուսակցության ներսում ևս դրսևորվել են մարտավարական բնույթի տարբեր մոտեցումներ կառավարման ձևի, սոցիալ-տնտեսական քաղաքականության, Հայաստանի քաղաքական կողմնորոշման և այլ խնդիրներում: ՀՅԴ ղեկավար շրջանակներում բացորոշ կերպով դրսևորվել է երկու մոտեցում: Դրանցից մեկը՝ **պետական** կամ օրենքներով ու

13. Հակոբյան Ա., ՀՅԴ 9-րդ ընդհանուր ժողովը, Ե., 1994, էջ 28:
14. Հակոբյան Ա., Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն (1918-1920 թթ.), Ե., 2005, էջ 4:

իրավական նորմերով երկիրը կառավարելու: Այս թևի ջերմ պաշտպաններն էին Հ. Քաջազնունին, Ս. Վրացյանը, Ալ. Խատիսյանը, իսկ մյուս թևը՝ Ռուբենի, Ա. Ջամալյանի և մյուսների գլխավորությամբ, պաշտպանում էր կառավարությունը կուսակցականացնելու և երկիրը **հեղափոխական միջոցներով** (օրենքներով) կառավարելու տեսակետը: «Ես կարծում էի,- գրում էր պետականության գաղափարի հավատավոր պաշտպան Ս. Վրացյանը իր հուշերում,- որ իշխանությունը պետք է ղեկավարվի պետական օրենքներով և արտակառավարական անհատական կամ կոմիտեական արարքները պետական գործերը վարելու հարցում անթույլատրելի են, մանավանդ, եթե այդ արարքները չէին վայելելու ժողովրդականություն»[15]: Դրան հակառակ՝ Ռուբենը գտնում էր, որ «Հայ ժողովրդի և Դաշնակցության ուժը կոմիթայության մեջ է»[16]: Սակայն ՀՅԴ շարքերում և ղեկավար շրջանակներում առկա տեսակետների ու մոտեցումների նման լայն սպեկտրը ամենևին էլ չէր վնասում նրա շարքերի միասնությանը: ՀՅԴ-ին միավորողը Հայաստանի անկախության, հայ ազգային դատի ու համազգային հիմնախնդիրների պաշտպանության միակամությունն է: Այսօր ևս դրանք նրա լինելիության ու կենսունակության անօտարելի բաղադրիչներն են:

- Պետական կառուցվածքի տեսակետից Հայաստանը խորհրդարանական գերակայության հանրապետություն էր: Գործադիր իշխանությունը՝ կառավարությունը, ընտրվում և հրաժարեցվում էր խորհրդարանի կողմից: Խորհրդարանն իրեն ենթակա կառույցի՝ պետական վերահսկիչ մարմնի միջոցով վերահսկում էր կառավարության ֆինանսատնտեսական գործունեությունը: ՀՅԴ բարձրագույն գործադիր մարմինը՝ Բյուրոն, իր քաղաքականությունն իրականացնում էր խորհրդարանական խմբակցության միջոցով, այսինքն՝ հիմնականում պահպանվում էին պառլամենտիզմի, ժողովրդավարության սկզբունքները:

ՀՅԴ-ն ՀԺԿ-ի հետ միասին նպատակ էին դրել Հայաստանը դարձնել Արևմուտքի տիպի խորհրդարանական դեմոկրատական (ռամկավար) հանրապետություն: Ընդհանուր առմամբ, ՀՀ-ին բնորոշ էր կառավարման հանրապետական ձևը՝ խորհրդարանի գերակայությամբ: Ծրագրված էր Հայկական հարցի բարեհաջող լուծումից հետո մշակել և ընդունել սահմանադրություն, մտցնել նախագահական ինստիտուտ[17]: Սակայն պատմաքաղաքական հետագա դեպքերն ու իրադարձություններն Անդրկովկասում ու Հայաստանում այնպես աննպաստ ընթացան, որ այդ նպատակները ի դերև ելան: Քաղաքական հանգամանքների բերումով ՀՅԴ Բյուրոն ժողովրդավարական կառավարման տեսակետից նահանջ կատարեց և ՀՅԴ խորհրդարանական խմբակցության առջև պահանջ դրեց իշխանությունը հանձնել իրեն[18]: Հաստատվեց ՀՅԴ Բյուրո-կառավարության դիկտատուրա: Թեև ճնշվեց բոլշևիկների մայիսյան ապստամբությունը, հնազանդեցվեցին թուրք-թաթարական խռովությունները, սակայն ներքին ու արտաքին մի շարք գործոններ թուլացրին պետականության հիմքերը: 1920 թ. աշնանը թուրք-հայկական պատերազմում Հայաստանը ծանր և ամոթալի պարտություն կրեց և չունենալով այլընտրանք՝ ընդունեց 11-րդ Կարմիր բանակի մուտքը երկիր և խաղաղ ճանապարհով խորհրդայնացվեց:

Այդուհանդերձ, չնայած ՀՀ կարճատև գոյությանը, անուրանալի է ՀՅԴ ներդրումը պետականության կայացման գործում: Նրա պետական գործունեությունը նպատակաուղղված է եղել ՀՀ ազգային, քաղաքական, տնտեսական և մշակութային վերաշինությանը:

Անշուշտ, ՀՀ-ն ունեցել է պետական կառույցի իրավաքաղաքական և այլ բնույթի թերություններ ու բացթողումներ: Եվ դա հասկանալի է այն իմաստով, որ հայ ժողովրդի պատմության մեջ առաջին անգամ էր հայ քաղաքական կուսակցությունը դարձել կառավարող: Բնականաբար պակասում էին փորձը, ձեռնհաս ուժերը, կառավարելու այնքան բարդ արվեստը, ուստի և անխուսափելի էին սխալներն ու բացթողումները: Ինչ էլ որ եղած լինի, 1918-1920 թթ. Հայաստանում առկա է եղել այն ժամանակվա ժողովրդավարական չափանիշներով **կազմակերպված պետություն** և նրա հիմնական կառավարող ՀՅԴ կուսակցությունն՝ իբրև պետական գործոն, իր կարելիությունների չափով օժանդակել է Հայոց պետականության հիմքերի ամրակայմանը և զարգացմանը:

Որքան էլ, սակայն, ակնառու լինեն հանրապետության ձեռքբերումները և դրանցում ՀՅԴ խաղացած անուրանալի դերակատարությունը, պատմական գործընթացի գնահատականը սուբյեկտիվ կլինի, եթե անտեսենք ժողովրդին, նրա թափած ջանքերն ու զոհողությունները:

1920 թ. աշնանը, դրսի ուժերի՝ Խորհրդային Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի կոպիտ միջամտությամբ, ՀՅԴ-ն հարկադրված կամավոր զիջեց կառավարող կուսակցության իր դիրքերը և իշխանությունը հանձնեց բոլշևիկներին: Դրանով գործնականում փակվեց Դաշնակցություն կուսակցության թերևս ամենաբեղուն՝ պետական շինարարության ժամանակաշրջանը ու սկսվեց նրա պատմության 3-րդ փուլը՝ Սփյուռքում գործունեության ժամանակաշրջանը:

15. Վրացյան Ս., Կյանքի ուղիներով, հ. Ե, Բեյրութ, 1966, էջ 153:
16. ՀԱԱ, ֆ. 198, ց.1, գ. 57, թ. 12:
17. Քաջազնունի Հ., Հայաստանի Հանրապետություն, Ե., 1993, էջ 12:
18. Հակոբյան Ա., Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), էջ 9:

# ԱԴՐԲԵՋԱՆԻ «ՀԶՈՐ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Սարգիս Մանուկյան
Տնտեսագետ, փորձագետ

*«Ադրբեջանի հզոր տնտեսություն», «Ադրբեջանի բազմակողմանի զարգացում», «դիվերսիֆիկացված տնտեսություն», «ուժեղ սոցիալական քաղաքականություն», «տնտեսության գերարագ տեմպերով զարգացում». այս և նման արտահայտությունները վերջին տարիներին ադրբեջանական մամուլում և հեռուստատեսությամբ հնչում են օրը մի քանի տասնյակ անգամ՝ ադրբեջանական հասարակության մեջ ստեղծելով երկրի հզորության և զարգացման պատրանքներ: Այդպիսի արտահայտությունները շատ են հնչում իշխանության վերնախավի ներկայացուցիչների, հատկապես նախագահ Ի. Ալիևի կողմից: Հարյուրավոր հայտարարություններից ներկայացնենք ընդամենը մի քանիսը. ելույթ ունենալով Ադրբեջանի Գաղջիգաբուլ շրջանում Ի. Ալիևը նշել է, որ «Ադրբեջանը ունի **ուժեղ, բազմակողմանի զարգացող տնտեսություն**»[1]: Մեկ այլ առիթով նա հայտարարել է. «Մենք ունենք **հզոր տնտեսություն**, հսկայական ֆինանսական հնարավորություններ: Այդ ամենը ուղղվել է ադրբեջանական ժողովրդի, մեր տարածաշրջանների զարգացմանը»[2]: «Մենք ունենք **դիվերսիֆիկացված տնտեսություն**: Ճիշտ է, նավթի համաշխարհային գները կտրուկ ընկել են, սակայն մեր տնտեսությունը զարգանում է: Զարգանում է նաև ոչ նավթային սեկտորը»[3]: Նույն ելույթում նշվում է. «Մեր **հիանալի սոցիալ-տնտեսական իրավիճակը**, երկրում գերիշխող կայունությունը, ազգային միասնությունը, միասնական գաղափարների շուրջ համախմբվածությունն իհարկե Ադրբեջանի առջև բացում են նոր հնարավորություններ, նոր հորիզոններ»: «Այսօր համեմատել Հայաստանին Ադրբեջանի հետ հնարավոր չէ: Ադրբեջանը բարգավաճող, ուժեղացող, ժամանակակից, դինամիկ զարգացող երկիր է, որը հիմնվում է սեփական ռեսուրսների վրա»[4]:*

*Այս հոդվածում մենք չենք անդրադառնա, թե հատկապես ո՞ր ոլորտներին են ուղղված այս հայտարարությունները (ավելի շատ քաղաքական հարցադրում է), կամ՝ ինչո՞ւ են հաջողությամբ և արդյունավետ աշխատում այդպիսի քարոզչական տեխնոլոգիաները հատկապես ադրբեջանցիների շրջանում (դա ավելի շուտ էթնոհոգեբանների խնդիր է), այլ կփորձենք տալ այն հարցերի պատասխանը, թե արդյո՞ք «ուժեղ և հզոր» է ադրբեջանական տնտեսությունը, արդյո՞ք այդքան «հիանալի» է այդ երկրի սոցիալ-տնտեսական իրավիճակը կամ «դիվերսիֆիկացված է» ազգային տնտեսությունը:*

*Տարբեր ենթատեքստերում հնչած այս բնույթի բազմաթիվ հայտարարություններից կարելի է շփոթել, թե ինչպիսի մասշտաբներում են դրանց հեղինակները*

1. Ильхам Алиев: У Азербайджана очень сильная экономика, 04 Сентября 2009,
http://www.aze.az/news_ilxam_aliev_u_24845.html.
2. Ильхам Алиев: «Во всех регионах люди Азербайджана должны пользоваться хорошими дорогами», 13.08.2010,
www.1news.az/.../20100813085759938.htm
3. Выступление президента Азербайджан Ильхама Алиева на церемонии ифтара по случаю священного месяца рамазан. Бакинский Рабочий, 7.09.2010,
http://br.az/index.php?newsid=3433
4. Президент Ильхам Алиев назвал причины ужесточения позиции Азербайджана, 21.10.2010 15:40,
Баку, 21 окт - 1NEWS.AZ, http://www.1news.az/analytics/20101021031809549.html

*Ադրբեջանը «հզոր և զարգացած երկիր» համարում՝ ա) աշխարհի բոլոր երկրների շարքում, բ) իր բոլոր հարևանների հետ համեմատած, գ) Հայաստանի և Վրաստանի հետ համեմատ, 4) հենց այնպես, պարզապես Ադրբեջանը հզոր երկիր է, և վերջ: Չնայած ակնհայտ է, որ ադրբեջանցիների ենթագիտակցության մեջ ամեն ինչում Հայաստանի հետ համեմատվելու բարդույթն է գերիշխում:*

*Ընդհանրապես երկրի տնտեսական զարգացման մակարդակը գնահատելու, ինչպես նաև տարբեր երկրների տնտեսական ներուժը միմյանց հետ համեմատելու համար օգտագործվում են մի շարք ցուցանիշներ և չափանիշներ կամ դրանց համախումբը, որոնցից ամենակարևորներն են՝ 1) իրական և անվանական ՀՆԱ-ի ամբողջ և մեկ շնչին ընկնող ցուցանիշները, 2) ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքը, ազգային տնտեսության մեջ բարձր տեխնոլոգիական ճյուղերի մասնաբաժինը, 3) արտահանման և ներմուծման կառուցվածքը, 4) բնակչության կյանքի որակը և մակարդակը, բնակչության զբաղվածության քանակական և որակական մակարդակը, բնակչության գնողունակությունը, աղքատության մակարդակը, սոցիալական արդարության մակարդակը, 5) բնական ռեսուրսների ներուժը, դրանց ներառումը տնտեսական շրջանառության մեջ, ռեսուրսախնայողության և էկոլոգիզացիայի մակարդակը, 6) տնտեսության արդյունավետությունը՝ աշխատանքների կազմակերպումը, աշխատանքի արտադրողականությունը, արտադրանքի որակը, կարևոր է նաև ենթակառուցվածքների որակը ու տարածվածությունը:*

*Հաշվի են առնվում նաև բնակչության երկարակեցության, գիտելիքի, կրթության և կյանքի ստանդարտները, ՀՆԱ-ն ըստ գնողունակության համարժեքության, աշխատավարձի մեծությունը, առողջապահության ծախսերի ու կրթության ծախսերի հարաբերությունները ՀՆԱ-ին և բյուջեին, կրթության որակը, բնապահպանության մակարդակը, վարկային ռեսուրսների հասանելիությունը, ֆինանսական կայունության վիճակը և ցուցանիշները, սեփականության իրավունքը, անկախ դատական համակարգի առկայությունը, մեկ շնչին ընկնող բժիշկների քանակը, հիվանդությունների ցուցանիշները, յուրաքանչյուր սեկտորում տնտեսական ակտիվության վիճակը, հանցագործությունների քանակը, մեկ շնչին ընկնող արտադրված և սպառված էլեկտրաէներգիայի քանակը, օգտագործվող համակարգիչների քանակը, ինտերնետի հասանելիությունը և այլ բազմաթիվ ցուցանիշներ:*

*Նշենք, որ նշված ցուցանիշները և դրանց համախումբը հատկապես արտահայտվում են տարբեր միջազգային ցուցիչներում (ինդեքսներում) և զեկույցներում:*

*Ստորև կդիտարկենք, թե ըստ երկրների տնտեսական և սոցիալ-տնտեսական զարգացածության մակարդակը գնահատող նշված չափանիշների՝ որքանո՞վ է Ադրբեջանի տնտեսությունը համապատասխանում վերը նշված հայտարարություններին:*

### 1. Ադրբեջանի տնտեսությունն ըստ ազգային եկամտի ցուցանիշների

*Ադրբեջանի թվացյալ տնտեսական հզորության առաջին փաստարկը համախառն ներքին արդյունքի (ՀՆԱ) մեծությունն է, որը զգալիորեն գերազանցում է Հայաստանի և Վրաստանի ցուցանիշներին: Ընդունված է, որ ՀՆԱ/ՀԱԱ-ի իրական ծավալը բնութագրում է երկրի տնտեսական պոտենցիալը, իսկ մեկ շնչին ընկնող ՀՆԱ/ՀԱԱ ցուցանիշը՝ երկրի տնտեսական զարգացման մակարդակը: Իսկ ՀՆԱ-ի աճը և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի աճը վկայում են երկրի արտադրական ռեսուրսների արդյունավետ օգտագործումը և քաղաքացիների բարեկեցության միջին աճը: Ադրբեջանի նոմինալ ՀՆԱ-ի ծավալը 2009 թ.-ին կազմել է 43,2 մլրդ. դոլար և ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի դասակարգման աշխարհի երկրների ցանկում գտնվել է 75-րդ տեղում: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ծավալը կազմել է մոտ 4,8 հազար դոլար՝ զբաղեցնելով 83-րդ տեղը: Հայտնի է նաև, որ մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշն էլ ամբողջովին չի բնորոշում երկրի զարգացման մակարդակը, օրինակ՝ Բահրեյնի կամ Օմանի մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն բավականին բարձր է, սակայն տնտեսության ճյուղային կառուցվածքով այն չի համապատասխանում զարգացած երկրների չափանիշներին, քանի որ այդ երկրների ցուցանիշի մեծությունը հիմնականում պայմանավոր-*





ված է նավթային եկամուտներով: Սա վերաբերում է նաև Ադրբեջանին:

Ադրբեջանը ունի այն ամենը, ինչ կարելի է առավելագույնն ակնկալել բնությունից՝ նավթի և գազի պաշարներ, բարենպաստ աշխարհագրական պայմաններ, տրանսպորտային ռազմավարական դիրք, հոյակապ բնական պայմաններ, բարեխառն և առողջարար կլիմա, ելք դեպի ծով, հարուստ բուսական և կենդանական ռեսուրսներ, բարձրորակ սևահողեր, մետաղական և ոչ մետաղական հանքահումքային հարուստ պաշարներ, մակերևութային և ստորերկրյա ջրային մեծ պաշարներ, խորհրդային տարիներից փոխանցված արդյունաբերական և գյուղատնտեսական ենթակառուցվածքներ (հատկապես զարգացած նավթարդյունաբերություն), բավականաչափ մարդկային ռեսուրսներ (ըստ պաշտոնական տվյալների այն կազմում է մոտ 9 մլն.): Եվ այս ամենի արդյունքում 43 մլրդ. դոլարի համախառն ներքին արդյունք (2009 թ.), որի կեսը ուղղակիորեն կապված է մեկ ճյուղի՝ նավթարդյունահանման հետ, իսկ մնացած զգալի մասն էլ նավթավերամշակման և այլ հարակից ճյուղերի հետ, ինչը բացարձակ չի խոսում այս երկրի արդյունավետ և հարուստ տնտեսության մասին: Եթե Ադրբեջանը համեմատենք տարածքով և բնակչության քանակով համարժեք կամ զիջող այլ երկրների հետ, ապա տեսնում ենք, որ օրինակ՝ ավելի քիչ մարդկային ռեսուրսներ ունեցող, տարածքով ավելի փոքր, ինչպես նաև բնական հարստություններով համեմատաբար աղքատ Սլովակիայի ՀՆԱ-ն 2009 թ.-ին կազմել է 88,2 մլրդ. դոլար, իսկ Սլովենիայինը՝ 48,6 մլրդ. դոլար: Չենք խոսում Իսրայելի մասին: Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով Ադրբեջանը զիջում է բնական ռեսուրսներով աղքատ այնպիսի երկրների, ինչպիսիք են Բուլղարիան՝ 6,2 հազար դոլար, Լիտվան՝ 11,1 հազար դոլար, Լատվիան՝ 11,4 հազար դոլար և այլն: Ավստրիան տարածքով և բնակչությամբ մոտ է Ադրբեջանի ցուցանիշներին, սակայն ՀՆԱ-ի ծավալով գերազանցում է 9 անգամ, իսկ մեկ շնչի ՀՆԱ-ն՝ 9,5 անգամ: Եվ այսպիսի բազմաթիվ երկրներ կան, որոնք զիջում են Ադրբեջանին տարածքով, բնակչությամբ և բնական ռեսուրսներով, սակայն գերազանցում են տնտեսական ցուցանիշներով, և որոնք երբեք տեղին կամ անտեղի չեն հպարտանում իրենց «տնտեսական հզորությամբ»:

Քանի որ Ադրբեջանում այս բնույթի հայտարարություններում հատկապես կիրառվում են «հզոր», «ուժեղ» և «զարգացած» բնորոշումները, մենք էլ հիմնականում ուշադրություն կդարձնենք այս ձևակերպումներին: Նշենք, որ ընդհանրապես երկրների տնտեսական զարգացման մակարդակը և ներուժը գնահատելու համար մասնագիտական տեսակետից ավելի շուտ օգտագործվում է «զարգացած, զարգացող կամ թույլ զարգացած» բնորոշումները: Աշխարհում ընդամենը մի քանի երկրների տնտեսություններն են բնութագրվում միաժամանակ և՛ «հզոր», և՛ «ուժեղ», և՛ «զարգացած»: Դրանք այն երկրներն են, որոնք ունեն գերիշխող կամ առաջատար դիրք համաշխարհային տնտեսության մեջ, մրցունակ և դիվերսիֆիկացված տնտեսություն և միաժամանակ զարգացած կենսամակարդակ, այսինքն մեկ շնչին ընկնող բարձր եկամուտներ[5]: Այդ երկրներն են՝ Միացյալ Նահանգները, Ճապոնիան, Գերմանիան, Ֆրանսիան, Մեծ Բրիտանիան, Իտալիան: Այս շարքում կարելի է դիտարկել նաև Իսպանիան, Կանադան և Ավստրալիան: Իսկ օրինակ՝ Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան, Ռուսաստանը, Մեքսիկան կարելի է բնութագրել որպես «հզոր», սակայն՝ «զարգացող երկրներ»: «Ուժեղ», միաժամանակ «զարգացած» տնտեսություն ունեցող երկրները բնութագրվում են համեմատաբար մեծ ՀՆԱ-ով, դիվերսիֆիկացված տնտեսությամբ, սոցիալ-տնտեսական զարգացմամբ և մեկ շնչին ընկնող մեծ եկամուտներով: Այդպիսի երկրներից են՝ Հարավային Կորեան, Հարավ-Աֆրիկյան Հանրապետությունը, Իսրայելը, Ավստրիան, Բելգիան, Դանիան, Նիդերլանդները, Շվեդիան և արևմտաեվրոպական այլ երկրներ: Արդեն հասկանալի է, որ նշված երկրների շարքում Ադրբեջանին համահավասար դիտարկելը պարզապես անլրջություն է:

5. Համաշխարհային բանկի դասակարգման համաձայն, մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն եթե տվյալ երկրում կազմում է տարեկան մինչև 995 ԱՄՆ դոլար, ապա այն համարվում է «ցածր եկամուտ» ունեցող երկիր, 996-3945 ԱՄՆ դոլարի դեպքում՝ «միջին ցածր» եկամուտ ունեցող երկիր, 3946-12195 ԱՄՆ դոլարի դեպքում՝ «միջին բարձր եկամուտ», իսկ 12196 ԱՄՆ դոլարից ավելի ունեցող երկրները՝ «բարձր եկամուտ» ունեցող երկիր:

*Եթե Ադրբեջանը իրեն «հզոր» է համարում իր հարևան երկրների հետ համեմատած, որտեղ, մասնավորապես, Ռուսաստանի (որի ՀՆԱ-ն 2009 թ.-ին կազմել է 1,2 տրիլիոն դոլար), Թուրքիայի (615 մլրդ. դոլար), Իրանի (326 մլրդ. դոլար) և Ղազախստանի (107,8 մլրդ. դոլար) տնտեսությունները այս տարածաշրջանի մասշտաբների համար կարող են բնութագրվել որպես «հզոր և զարգացող», այստեղ Ադրբեջանը նույնպես չի կարող բնութագրվել որպես «հզոր, ուժեղ կամ զարգացած տնտեսություն» ունեցող երկիր, քանի որ պարզապես իր ցուցանիշներով մի քանի անգամ զիջում է այդ երկրներին: Այս երկրներին Ադրբեջանը զիջում է նաև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ով, բացառությամբ Իրանի:*

*Անդրկովկասի հարևան երկրների հետ համեմատած, այս երկու ցուցանիշներով էլ չնայած զգալիորեն գերազանցում է Վրաստանին և Հայաստանին, սակայն եթե բացառենք ՀՆԱ-ից Ադրբեջանի նավթային սեկտորը և դրա հետ ուղղակի կապված ճյուղերը, ինչպես նաև մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ում բացառենք նավթային եկամուտները, ապա Հայաստանի և Վրաստանի ՀՆԱ-ները կմոտենան Ադրբեջանի ՀՆԱ-ին: Առավել ևս միջազգային բազմաթիվ զեկույցների համաձայն՝ Ադրբեջանի տնտեսությունը որակական առումներով շատ է զիջում Վրաստանին և Հայաստանին*[6]*: Եվս մեկ անգամ նշենք, որ Ադրբեջանի ազգային եկամտի ցուցանիշները հիմնականում պայմանավորված են նավթային եկամուտներով:*

*Ադրբեջանցիների հպարտության մեկ այլ աղբյուր են պետական բյուջեի ծավալները և դրանց համեմատումը Հայաստանի և Վրաստանի հետ: Սակայն այստեղ նույնպես բյուջեի եկամուտների զգալի մասը թե՛ ուղղակի, թե՛ անուղղակի ձևավորվում է նավթային եկամուտներից: Այսպես, 2009 թ.-ի բյուջեն կազմել է եկամուտների մասով 12,8 մլրդ. դոլար, ծախսային մասով՝ 13,2 մլրդ. դոլար: Բյուջեի եկամուտների 59%-ը ապահովել է պետական նավթային հիմնադրամը (SOFAZ), որի ուղղակի տրանսֆերտները կազմել են 7,5 մլրդ. դոլար: Իսկ բյուջեում ընդհանուր նավթային ոլորտի եկամուտները կազմել են 8,6 մլրդ. կամ բյուջեի 67%-ը, իսկ ոչ նավթային եկամուտները՝ 4,2 մլրդ. դոլար:*

*Ադրբեջանը, ունենալով Հայաստանի արտաքին պարտքին համարժեք արտաքին պարտք (2009 թ.-ի վերջին այն կազմում էր 3,4 մլրդ. դոլար), պատեհ ու անպատեհ հայտարարում է, թե Ադրբեջանի տնտեսական հզորությունը մի քանի անգամ գերազանցում է Հայաստանին: Ի՞նչն է խանգարում «տնտեսական հսկային» մարել այդ պարտքերը, առավել ևս նոր պարտքեր ձեռք չբերել: Ունենալով նավթային եկամուտների արդյունքում կուտակված հսկայական արտարժութային ֆինանսական միջոցներ՝ Ադրբեջանը չի հրաժարվում նաև դրսից տնտեսական կամ ֆինանսական օգնություն ստանալու ցանկացած հնարավորությունից: Այս ամենը ևս մեկ անգամ հուշում է, որ այդ երկրի տնտեսությունում ամեն ինչ այնպես փայլուն չէ, ինչպես ներկայացվում է:*

*Ընդհանրապես տնտեսական զարգացումը տնտեսության կառուցվածքային վերակառուցումն է տեխնոլոգիական և սոցիալական առաջընթացին համապատասխան: Հայտնի է, որ տնտեսական աճը տնտեսական զարգացում չէ, սակայն տնտեսական զարգացումը ենթադրում է տնտեսական աճ, տնտեսական շարժեր, բնակչության կյանքի մակարդակի և որակի բարելավում: Իրականում վերջին տարիներին բարձր տըն-*

6. Նշենք, որ միջազգային կազմակերպությունների կողմից ներկայացվող մասամբ կամ լրիվ տնտեսական ոլորտը ընդգրկող ամենաթարմ վարկանիշային զեկույցներում Ադրբեջանի տնտեսական ցուցանիշները գնահատման ոչ մի համակարգում չեն համապատասխանում ուժեղ, հզոր կամ զարգացած երկրի կարգավիճակին: Ավելին, դրանք, որպես կանոն, շատ դեպքերում զիջում են Հայաստանի ու Վրաստանի արդյունքներին: Տնտեսական ոլորտը լրիվ կամ մասամբ ներկայացնող 11 զեկույցներից միայն 3 զեկույցներում են՝ Մարդկային զարգացման ինդեքսում (Human Development Index-2010), Երկրների եկամուտների մակարդակում (World Bank, list of economies-2010), Գլոբալ մրցունակության ինդեքսում (Global Competitiveness Index-2010-2011), Ադրբեջանի ցուցանիշները Հայաստանի ցուցանիշներին մի փոքր գերազանցում: Նշենք, որ Ադրբեջանը հենց այս երեք զեկույցներն էլ շատ է օգտագործում իր քարոզչական նպատակների համար:

Իսկ այլ 8 զեկույցներում, որոնք են՝ Տնտեսական ազատության ինդեքսը (Index of Economic Freedom-2010), Կոռուպցիայի ընկալման ինդեքսը (Corruption Perceptions Index-2009), Ձախողված երկրների ինդեքսը (Failed States Index-2010), Գործարարության վարկանիշը (Doing Business-2011), Պետությունների թուլության վարկանիշային հետազոտության ինդեքսը (Index of State Weakness in The Developing World), Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսը (Bertelsmann Transformation Index BTI 2008), Համաշխարհային առևտրի խթանման ինդեքսը (The Enabling Trade Index 2010 rankings), Կյանքի որակի վարկանիշը (2010 Quality of Life Index), Էներգետիկ կենսունակության ինդեքսը (Energy sustainable index), Ադրբեջանը զիջում է Հայաստանին և Վրաստանին: Ավելին, երեք ինդեքսներում՝ «Ձախողված երկրների ինդեքսում» (Failed States Index-2010) Ադրբեջանը համարվում է «համարյա ձախողված երկիր», «Պետությունների թուլության վարկանիշային հետազոտության ինդեքսում» (Index of State Weakness in The Developing World) համարվում է թույլ տնտեսություն ունեցող երկիր, իսկ «Բերթելսմանի տրանսֆորմացիայի ինդեքսում» (Bertelsmann Transformation Index BTI 2008) շատ սահմանափակ երկիր:

Հայաստանը ոչ միայն բազմաթիվ տնտեսական ոլորտի միջազգային ինդեքսներում և զեկույցներում ունի բարենպաստ դիրք Ադրբեջանի նկատմամբ, այլ նաև այլ՝ մարդու իրավունքների, քաղաքացիական ազատությունների, մամուլի և խղճի ազատության զեկույցներում: Հայաստանի և Ադրբեջանի դիրքերին միջազգային ինդեքսներում ավելի մանրամասն ծանոթանալու համար տես Կ.Վերանյանի «Հայաստանի Հանրապետությունը միջազգային վարկանիշային համակարգում» աշխատությունը:

A.R.F. BURO LIBRARY

տեսական աճ ունեցող Ադրբեջանում, քանակական աճից բացի, որակական զարգացում անցած տարիներին տեղի չի ունեցել՝ չհաշված նավթի և գազի արդյունահանման ոլորտում օտարերկրյա տեխնոլոգիական ներդրումները և ծավալների աճը:

Ադրբեջանը հայտարարել է, որ անցած տարի ունեցել է իրական ՀՆԱ-ի 9,3% աճ, սակայն նշենք, որ անվանական ՀՆԱ-ի և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի զգալի անկում է արձանագրվել: Ադրբեջանական վիճակագրական տվյալների համաձայն՝ անկումը կազմել է մոտ 6% (2009 թ.-ին ընթացիկ գներով ՀՆԱ-ն կազմել է 43,2 մլրդ. դոլար, իսկ 2008թ.-ին՝ 46 մլրդ. դոլար)[7]: Ադրբեջանի պաշտոնական վիճակագրական աղյուսակներում ՀՆԱ-ի ցուցանիշները ներկայացվում են անվանական (նոմինալ) արժեքով, սակայն նույն աղյուսակների վերջին սյունակում տոկոսներով արտահայտված ամփոփիչ արդյունքները հաշվարկվում են իրական (փաստացի) արժեքների հիման վրա՝ բազիսային տարվա գներով: Այդ պատճառով ՀՆԱ-ի իրական աճը պայմանավորված է նրանով, որ հաշվարկելով բազիսային տարվա գներով՝ փաստացի ՀՆԱ-ի աճը պետք է որ մեծանար, քանի որ տնտեսության մեջ գերիշխող նավթագազարդյունահանման ոլորտում նավթի արդյունահանման ֆիզիկական ծավալները աճել են 6 մլն. տոննայով՝ 2009 թ.-ին այն կազմել է 50,4 մլն. տոննա, նախորդ տարվա 44,4 մլն. տոննայի փոխարեն, և բնականաբար փաստացի ՀՆԱ-ի տոկոսային աճ նույնպես պետք է տեղի ունենար: Նավթի արդյունահանումը մի քանի անգամ աճել է բազիսային տարվա համեմատ (հում նավթի արդյունահանումը 2000 թ.-ին կազմել է 14 մլն. տոննա, իսկ 2009 թ.-ի դրությամբ՝ աճել 3,6 անգամ, իսկ գազի արդյունահանումը նույն ժամանակահատվածում աճել է 3 անգամ), հենց դրանով և նավթի գների աճով էլ բացատրվում էր վերջին տարիներին ադրբեջանական տնտեսության արագ տեմպերով աճի դինամիկան: Ըստ էության, տնտեսության մեջ էական որակական զարգացում անցած տարիներին տեղի չի ունեցել, այլ միայն նավթի արդյունահանման ծավալների աճ:

Այսինքն, չնայած իշխանավորների և պաշտոնյաների հայտարարություններին, Ադրբեջանի տնտեսությունը նույնպես զգալի տուժել է ճգնաժամից: Սակայն կարելի է ասել, որ հետխորհրդային երկրներից համեմատաբար ամենաքիչ տուժած երկիրն է. նավթի արդյունահանման ծավալների մեծացման և կուտակված դոլարների արդյունքում ճգնաժամի հետևանքները բավականին մեղմացվել են: Եթե նավթի գների անկումը երկար տևեր կամ ճգնաժամը ավելի երկար շարունակվեր, ապա Ադրբեջանում արագ կսպառվեին կուտակված նավթադոլարները: Այսուհետ Ադրբեջանի տնտեսության կախվածությունը նավթի գներից դեռևս կշարունակվի: Ի տարբերություն իշխանությունների, ադրբեջանական փորձագիտական շրջանակները ավելի իրատեսական են գնահատում ադրբեջանական տնտեսության իրական վիճակը և ֆինանսատնտեսական ճգնաժամի ազդեցության հետևանքները: Այսպես, «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի» ղեկավարների խորհրդի նախագահ Գուբադ Իբադօղլին նույնպես ընդունում է, որ «2009թ.-ին նվազել են անվանական ՀՆԱ-ի աճի տեմպերը և մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն, մեծացել է ՀՆԱ-ի և ՀԱԱ-ի միջև ճեղքվածքը, նվազել են ոչ նավթային սեկտորի ծավալները, բյուջեում սոցիալական ծախսերը, ինչպես մրցունակությունը և բնակչության եկամուտների մակարդակը»[8]: Իսկ «Տնտեսական հետազոտությունների կենտրոնի» մեկ այլ փորձագետ՝ Գուբադ Բայրամովը նշում է, «որ ֆինանսատնտեսական ճգնաժամը բացասական ազդեց Ադրբեջանի տնտեսության վրա, հորիզոնական կտրվածքով՝ շուկայի, տեղական ապրանքների արտադրության, ֆինանսների, ազգային արժույթի, վարկերի, արժութային պաշարների վրա, և ուղղահայաց կտրվածքով՝ տնտեսական օբյեկտների, բիզնեսի և տնային տնտեսությունների վրա»[9]:

## 2. Ադրբեջանի ազգային տնտեսության ճյուղային կառուցվածքը

Ուժեղ տնտեսություններին բնորոշ է ազգային տնտեսության մեջ բարձր տեխնոլոգիական ճյուղերի մեծ մասնաբաժին, որակական զարգացման տեմպեր և ծավալներ: Դա իր հերթին պայմանավորում է ուժեղ երկրների մրցունակությունը թույլ երկրների հետ: Թույլ տնտեսություն ունեցող երկրներին բնորոշ է տնտեսության մեջ հանքահումքային ոլորտի կարևորությունը և թույլ զարգացած վերամշակող ճյուղերը: Այսինքն թույլ երկրներում գերիշխում է ցածր ավելացված արժեք ունեցող «շերտերի» դերը՝ մասնավորապես

7. The State Statistical Committee of Republic of Azerbaijan, 2010
8. Gubad Ibadoglu, The problems generated by the global financial crisis and ways to overcome them in Azerbaijan, Economic Research Center, Azerbaijan today, The International Magazine, Baku
9. Gubad Bayramov, Patrick Conway, The Azerbaijan Producers Survey: Dutch Disease and Financial Crisis, 2.07.2010

ավանդական հանույթային ոլորտները, միաժամանակ իսպառ բացակայում են կամ փոքր դեր ունեն բարձրակարգ «շերտերը», կոնկրետ տեխնոլոգիական արտադրությունները, հատկապես բարձրագույն տեխնոլոգիաները:

Ադրբեջանի ՀՆԱ-ն ըստ արտադրական կառուցվածքի 2009 թ.-ին ունեցել է հետևյալ տեսքը՝ գյուղատնտեսությունը, որսորդությունը, անտառային տնտեսությունը – 6,7%, արդյունաբերությունը - 50% (որտեղ՝ արդյունահանումը – 44,8%, վերամշակումը – 4,1%, էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրությունը և բաշխումը – 1,1%), շինարարությունը – 7,4%, առևտուրը և ծառայությունները - 8%, տրանսպորտը և հաղորդակցությունը – 8,6%, զուտ հարկերը – 7,6%: Առաջին հայացքից թվում է, թե Ադրբեջանը զարգացած արդյունաբերություն ունեցող երկիր է, որի արդյունաբերության տեսակարար կշիռը կազմել է ՀՆԱ-ի ուղիղ կեսը: Սակայն արդյունաբերության մեջ ամենակարևոր դերը պատկանում է արդյունահանող ճյուղին, հիմնականում նավթագազարդյունահանմանը, որը կազմում է արդյունաբերության 70,1%-ը, ապա վերամշակող արդյունաբերությանը՝ 23,2%, և էլեկտրաէներգիայի, գազի ու ջրի արտադրությանը և բաշխմանը՝ 6,7%[10]:

Իր հերթին վերամշակվող արդյունաբերության բաղադրիչների մեջ ամենամեծ տեսակարար կշիռ ունեն նավթավերամշակումը՝ 7,4%, տրանսպորտային միջոցների և սարքավորումների արտադրությունը՝ 8,4%, սննդարդյունաբերությունը (պահածոյագործություն, թեյագործություն, գինեգործություն և այլն)՝ 1,8%, մետալուրգիան՝ 1,1%, ոչ մետաղական միներալային արտադրությունը՝ 1,7%, քիմիական արդյունաբերությունը (պարարտանյութերի, սինթետիկ կաուչուկի, անվադողերի արտադրություն)՝ 1,3%, մեքենաշինական սարքավորումների արտադրությունը՝ 0,52% և թեթև արդյունաբերությունը (բամբակամանվածքային, բրդագործություն, մետաքսագործություն, կարպետագործություն)՝ 0,3% և այլն:

Ադրբեջանը իսկապես ունի զարգացած նավթագազարդյունահանում և նավթավերամշակում, որոնք էլ Ադրբեջանի արդյունաբերության մեջ վերջին տարիներին տնտեսական աճ ապահովող հիմնական ճյուղերն են եղել: Ինչպես երևում է վերը նշված թվերից, Ադրբեջանում նավթարդյունահանումը և նավթավերամշակումը միասին ունեն մեծ կենտրոնացվածություն՝ միասին կազմելով արդյունաբերության 75-80%-ը:




Ինչպես տեսնում ենք, ՀՆԱ-ի 44,8%-ը կազմում է միայն բուն նավթարդյունահանումը (առանց նավթավերամշակման և հարակից ճյուղերի), չխոսելով նաև դրանցից կախված մյուս արդյունաբերական ճյուղերի մասին, որոնց գոյությունը ուղղակիորեն կախված է նավթագազարդյունահանումից և առանց դրա գոյություն ունենալ չեն կարող, որոնք են՝ նավթաքիմիական և քիմիական արդյունաբերությունը, տրանսպորտային միջոցների, մեքենաշինական սարքավորումների արտադրությունը, որոնք արտադրվում են տալիս նավթի և գազի հանքավայրերի հետախուզման և շահագործման համար, և այլն այլ ճյուղեր: Եթե հաշվի առնենք նաև նավթագազարդյունաբերության մեջ ներդրված ներդրումներից մուլտիպլիկատորի էֆեկտի հետևանքները տնտեսության այլ ճյուղերի, հատկապես շինարարության և ծառայությունների ոլորտների վրա, ապա տեսնում ենք, որ առանց նավթի և գազի ադրբեջանական տնտեսությունը պարզապես ֆիկցիա է:

Չնայած Ադրբեջանը մեծ գումարներ է ներդնում նաև ոչ նավթային սեկտորի զարգացման ոլորտում, հիմնադրվում են նոր գործարաններ, արտադրամասեր, սակայն տնտեսության կառուցվածքային բազմազանություն առայժմ չի ապահովում: Իսկ ոչ նավթային սեկտորի գոյատևումը, ըստ էության, կատարվում է նավթային սեկտորից ստացվող դոտացիաների հաշվին: Ընդհանրապես առանց նավթագազարդյունաբերությունից եկող ներարկումների և դրա միջոցով շրջանառվող ֆինանսական հոսքերի, ազգային տնտեսությունում ոչ նավթային հատվածների ծավալները

10. The State Statistical Committee of Republic of Azerbaijan, 2010




մի քանի անգամ կսեղմվեն և ադրբեջանական տնտեսությունը պարզապես գոյություն ունենալ չի կարող:

Ցուցանիշների դինամիկան ցույց է տալիս, որ Ադրբեջանում նավթարդյունաբերության տեսակարար կշիռը անընդհատ մեծանում է: Պետք է նշել, որ վերջին տարիներին Ադրբեջանում գյուղատնտեսության, ծառայությունների և շինարարության ոլորտի, ինչպես նաև արդյունաբերության որոշ ճյուղերի քանակական աճ, իհարկե, նույնպես դրսևորվել է, սակայն նավթագազարդյունահանման ծավալների աճի ֆոնին դա այդքան էլ չի նկատվում:

Ադրբեջանում տնտեսության խիստ կենտրոնացման մեկ այլ փաստարկ է այն, որ երկրի ողջ տնտեսական հզորությունը կենտրոնացված է Աբշերոնի թերակղզում, հիմնականում Բաքվում, մասամբ՝ Սումգայիթում: Որոշ քանակի արդյունաբերական ձեռնարկություններ կենտրոնացված են նաև Գյանջայում: Մյուս քաղաքները և շրջանները հիմնականում չունեն արդյունաբերական ենթակառուցվածքներ, եթե կան էլ, ապա հիմնականում սննդի ոլորտի՝ գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործարաններ են, հացաթխման արտադրամասեր ու ալրաղացներ, կան նաև ասֆալտի և բետոնի արտադրամասեր: Այսպես, Ադրբեջանի համախառն արդյունքի ամենամեծ բաժինը ապահովում է Բաքուն՝ 79%, իսկ մնացած տնտեսական ռեգիոնները միասին ապահովել են 21%-ը: Բաքվից հետո հաջորդ տնտեսական ռեգիոններն են Արանը (6%), Գյանջա-Ղազախը (3,1%), Ղուբա-Խաչմազը (2,4%), Աբշերոնը (2,2%), Նախիջևանը (1,9%), Լենքորանը (1,5%), Շեքի-Զաքաթալան (1,5%), Լեռնային Շիրվանը (0,7%):

Այս տեսակետից ևս Ադրբեջանը չի բավարարում դիվերսիֆիկացված տնտեսություն ունենալու պայմանը, այն դեպքում, երբ Վրաստանի և Հայաստանի տնտեսությունները համեմատաբար ավելի դիվերսիֆիկացված են:

### 3. Ադրբեջանի արտահանման և ներմուծման կառուցվածքը

Զարգացած երկրներում, որպես կանոն, արտահանման կառուցվածքում մեծ է տեխնոլոգիական ապրանքների տեսակարար կշիռը, ինչպես նաև արտահանվող ապրանքների բազմազանությունը: Ոչ զարգացած տնտեսություն ունեցող երկրների արտահանման հիմքում ընկած են հումքային ռեսուրսները և բնորոշ է մեծ կենտրոնացվածությունը:

Ադրբեջանում արտահանումը 2009 թ.-ին կազմել է 14,7 մլրդ. դոլար, ներմուծումը՝ 6,1 մլրդ. դոլար: Համեմատության համար նշենք, որ 2008 թ.-ին Ադրբեջանի արտահանման ծավալները կազմել են 47,7 մլրդ. դոլար, իսկ ներմուծումը՝ 7,1 մլրդ. դոլար: 2009 թ.-ին Ադրբեջանում արտահանման անկումը կազմել է 3,26 անգամ, կամ նվազել է 70%-ով: Պատճառը այն է, որ նվազել էին արտահանման համար կարևոր բաղադրիչ հանդիսացող հանքահումքային ռեսուրսների գները, հատկապես նավթի գները:

Ըստ Ադրբեջանի վիճակագրական կոմիտեի 2009 թ.-ի տվյալների, Ադրբեջանի արտահանման մոտ 92,8%-ը կազմել է հանքահումքային արտադրանքը, հատկապես հում նավթը և նավթամթերքները, ինչպես նաև գազը, ալյումինը, երկաթի և պղնձի հանքաքարերը և խտանյութերը: Միայն հում նավթի չափաբաժինը արտահանման մեջ կազմել է 81,6%, իսկ նավթամթերքներինը՝ 10,35%, մրգերը և բանջարեղենը՝ 1,3%, մետաղները՝ 0,7%, այլ ապրանքները՝ 6,3%: Ոչ նավթագազային սեկտորի արտահանումը կազմել է 7,6%, կամ մոտ 1 մլրդ. դոլար: Արտահանման նման կառուցվածքը հուշում է արտադրության տեխնոլոգիական ցածր մակարդակի մասին և արտահանման կենտրոնացվածության մեծ աստիճանի մասին:

Ընդհանրապես, ադրբեջանական նավթից բացի արտահանման ապրանքների մեծ մասը մրցունակ չեն և արտահանման խնդիրներ ունեն: Ճգնաժամի ժա-




*) Աղբյուր՝ http://www.azstat.org/publications/azfigures/2009/en/007.shtml

մանակ մի քանի անգամ կրճատվել է ալյումինի, սև և գունավոր մետաղների խտանյութերի, քիմիական արդյունաբերության արտադրանքների, գյուղատնտեսական մթերքների, բամբակի արտահանման ծավալները:

Ադրբեջանը ունի սահմանափակ ելք դեպի արտասահմանյան շուկաներ արտահանման ապրանքների համար, բացառությամբ էներգակիրների: Մանաթի բարձր կուրսը բերել է տնտեսության լճացմանը. ավելի ձեռնտու է ներկրել, քան տեղում արտադրել: Ադրբեջանի տնտեսության համար օր օրի ավելի դժվար է դառնում մրցակցել երկրի ներքին շուկայում, որտեղ ներմուծվող ապրանքները դուրս են մղում տեղական արտադրողին, իսկ տեղական ապրանքները դառնում են ոչ մրցունակ դրսում:

Հայտնի է, որ նավթը մրցունակության գործոնով պայմանավորված ապրանք չէ և համաշխարհային շուկայում միշտ էլ իր պահանջարկն ունի: Այդ պատճառով Ադրբեջանը մոտակա տարիներին ապահովված է նավթի նկատմամբ պահանջարկով, և նավթի պահանջարկի ծավալների կրճատում տեղի չի ունենա, չնայած մի քանի տարի անց կնվազի իր կողմից նավթի առաջարկը:

Անցած տարի նավթի գների անկումով և պահանջարկի մասնակի կրճատումով Ադրբեջանը լուրջ տնտեսական վնասներ կրեց: Ադրբեջանի պարագայում 10$ նավթի գնի անկումը բերում է 2 մլրդ. դոլար կորուստ: 2009 թ.-ին մեկ բարել նավթի միջին գինը կազմել է 62$, իսկ 2008 թ.-ին այն կազմել է 96,5$, այդ պատճառով Ադրբեջանը 2009 թ.-ին կորցրել է մոտ 8-9 մլրդ. դոլար, որը նավթի գների պահպանման դեպքում կարող էր երկիր հոսել: Այսպիսով, ողջ տնտեսության կախվածությունը նավթի գներից Ադրբեջանը խոցելի է դառնում ոչ միայն տնտեսական և սոցիալական, այլ նաև քաղաքական տեսակետից:

Ըստ էության, Վրաստանի և Հայաստանի արտահանման կառուցվածքը ավելի դիվերսիֆիկացված է, չնայած ծավալներով մի քանի անգամ զիջում է Ադրբեջանի արտահանման ծավալներին: Առանց հում նավթի և նավթամթերքների արտահանման ծավալների Հայաստանի և Վրաստանի արտահանման ծավալները համարյա հավասարվում են Ադրբեջանի արտահանման ծավալներին: Ինչպես տեսնում ենք, հզոր և զարգացած տնտեսությանը բնորոշ դիվերսիֆիկացված արտահանման կառուցվածք և արտահանման մեջ առաջավոր տեխնոլոգիաների մեծ չափաբաժին ունենալու պայմանը Ադրբեջանը նույնպես չի բավարարում:

#### 4. Բնակչության կյանքի որակը, սոցիալական արդարության վիճակը

Զարգացած երկրի հիմնական առանձնահատկությունը աղքատության և չքավորության ցածր մակարդակն է, եկամուտների հավասարաչափ բաշխումը, որը բնորոշ է սոցիալական ուղղվածություն ունեցող տնտեսություններին, մասնավորապես ցածր ապահովված շերտերի՝ թոշակառուների, ուսանողների, հաշմանդամների պաշտպանությանը:

Չնայած Ադրբեջանում մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն 4,8 հազար դոլար է, համարվում է որպես միջին բարձր եկամուտներ ունեցող երկիր, բնակչության 50%-ը աղքատ է, որից 20%-ը ապրում է աղքատության նիշից ցածր (իսկ ըստ պաշտոնական տվյալների՝ աղքատության մակարդակը 13,2%-ից իջել է 11%, իսկ գործազրկությունը իբր կազմում է 1%): Ըստ Gallup-ի հարցումների՝ բնակչության 24%-ը երազում է մշտապես լքել Ադրբեջանի տարածքը, իսկ 15%-ը՝ ժամանակավոր աշխատանք գտնել դրսում[11]:

Ադրբեջանի մայրաքաղաքում կենսամակարդակի ցուցանիշները ավելի բարձր են, քան շրջաններում, և այն բնութագրվում է մեծ խզվածքով: Բաքվի բնակչին ընկնող ՀՆԱ-ն կազմել է մոտ 18 հազար դոլար, այն դեպքում, երբ որոշ շրջաններում այն տատանվում է մոտ 1800-2000 դոլարի սահմաններում՝ միջին թվաբանականը երկրի համար կազմելով մոտ 4,8 հազար դոլար: Բաքվում մեծ ցուցանիշը պայմանավորված է

11. ЦРУ и Gallup: В Центральной Азии миллионы людей живут за гранью бедности. Почти треть населения стремится в гастарбайтеры. 06.08.2010, http://www.ferghana.ru/news.php?id=15327

*նրանով, որ այստեղ է կենտրոնացված Ադրբեջանի արդյունաբերության զգալի հատվածը: Բաքվում շրջանառվում են նավթային ոլորտից եկող հսկայական ֆինանսական միջոցներ, որոնք իրենց արդյունքն են տալիս շքեղ կառույցների և շինությունների տեսքով՝ ստեղծելով շքեղության և բարեկեցիկության պատրանք: Այն դեպքում, երբ մեծ է իրական գործազրկությունը և աղքատությունը, հասարակությունը գտնվում է տնտեսական և սոցիալական ճգնաժամի մեջ, գները անընդհատ բարձրանում են: Ադրբեջանում բնակչության սոցիալական վիճակը բարվոք չէ հատկապես շրջաններում, մեծ է արտագաղթը: Իսլամական ֆունդամենտալիզմը, գողությունը, կողոպուտը, նարկոմանիան, նարկոտրաֆիկինգը, մարդկանց առևտուրը լայն տարածում են գտնում Ադրբեջանում:*

*Զբաղվածության հարցը լուծվում է միգրացիայի հաշվին՝ հատկապես արտագաղթելով դեպի Ռուսաստան և Թուրքիա: Միայն Ռուսաստանում և Թուրքիայում մոտ 2-3 մլն. ադրբեջանցիներ են աշխատում: Արտերկրից ուղարկած գումարները բավական մեծ են. դեպի Ադրբեջան 2008 թ.-ին փոխանցվել է 4-5 մլրդ. դոլար գումար: Հատկապես Ռուսաստանից միգրանտների կողմից մասնավոր փոխանցվող գումարների կրճատումը զգալի հարված հասցրեց Ադրբեջանի սոցիալական շերտերին: Այսինքն, եթե Ադրբեջանի սոցիալ-տնտեսական վիճակը այդքան հիանալի է, ինչպես նշում է Ադրբեջանի նախագահը, ապա ինչպես բացատրել արտագաղթի այդքան բարձր տեմպերը. Ադրբեջանում բնակչությունը այսօր չի գերազանցում 5 մլն.-ը: Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում սոցիալական վիճակը ավելի վատ է և այդ տարածքը լքել է բնակչության երկու-երրորդը[12]:*

*Ադրբեջանում մեծ է ստվերային տնտեսությունը, որն ըստ Արժույթի միջազգային հիմնադրամի կազմում է մոտ 60%: Կոռուպցիան տարածված է հասարակության բոլոր շերտերում, ներառյալ բիզնեսի բոլոր մակարդակները: Ստվերայնությունը հատկապես տարածված է նաև ծառայությունների և առևտրի ոլորտներում: Կա հասարակական անվստահություն պետության և նրա կառույցների նկատմամբ: «Ազատ տնտեսության համագործակցության կենտրոնի» տնօրեն Զոհրաբ Իսմայիլի կարծիքով՝ «չինովնիկները հաճախ են խոսում տնտեսական աճի մասին, սակայն երկրի բնակչության մեծ մասը չի զգում դա: Թոշակները և աշխատավարձերը բավականին հետ են մնում աշխարհի զարգացած երկրների կենսաթոշակներից: Ներդրումային ծախսերի մեծ մասը օգտագործվում է կոռուպցիոն նպատակներով, արդեն երրորդ տարին է, որ բյուջեի եկամուտների կեսից ավելին ստացվում է նավթային հիմնադրամի տրանսֆերտներից: 2015 թ.-ից հետո, երբ նավթի արդյունահանումը հասած կլինի գագաթնակետին, երկրի եկամուտները կկրճատվեն, ինչպե՞ս է կառավարությունը լցնելու բյուջեն»[13]:*



*Արտասահմանում գործող ադրբեջանական ընդդիմադիր սոցիալական ֆորումներում շատ է գրվում Ի. Ալիևի ընտանիքի ֆինանսական կարողությունների, Դուբայում, Մոնթե Կառլոյում, Մայամիում թանկարժեք սեփականությունների, պաշտոնյաների շվեյցարական բանկերում կուտակված միլիարդների մասին: Ի. Ալիևի ընտանիքի ֆինանսական և գույքային կարողությունները գնահատվում են նվազագույնը 30 մլրդ. դոլար, իսկ որոշ այլ աղբյուրների համաձայն՝ նույնիսկ մի քանի անգամ ավելի: Նշվում է նաև, որ արդյունահանված նավթի քանակից առնվազն երկուսից երկուսուկես անգամ ավելի շատ նավթ է Ադրբեջանում արդյունահանվում, քան ներկայացվում է վիճակագրական տվյալներով, որի եկամուտները հոսում են արևմտյան ընկերությունների և իշխող կլանների գրպանը:*

*Օգտագործելով համաշխարհային ճգնաժամի փաստը, ինչպես նաև նավթ և գազ արդյունահանող միջազգային ընկերությունների փակ տեղեկատվական բնույթը, մամուլում ստեղծելով թվերի շիլաշփոթ՝*

---

12. Ս. Մանուկյան, Նախիջևանի Ինքնավար Հանրապետության տնտեսությունը: Նախիջևան. պատմության և արդի ժամանակաշրջանի հիմնահարցեր: Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Երևան, 2010:

13. Увеличение бюджета идет за счет ненефтяного сектора, заявляют власти страны, 22.10.2010, Кавказский узел, http://www.kavkaz-uzel.ru/articles/175879/

*ադրբեջանական իշխանությունները հսկայական անօրինական գումարներ են վաստակում: Նմանատիպ իրավիճակ է նաև բնական գազի արդյունահանման և տնտեսության մյուս ոլորտներում:*

*Ադրբեջանում նավթի և գազի բերած առևտրի եկամուտների միայն փոքր մասն է գնում արտաքին պարտքի մարման, բյուջեի դեֆիցիտի ծածկման, ոչ նավթային սեկտորի ձեռնարկությունների դոտացիայի, ինչպես նաև էներգետիկ, տրանսպորտային, սոցիալական, կրթական ենթակառուցվածքների, դպրոցների, մանկապարտեզների, մարզադահլիճների, ճանապարհների և այլ կառույցների շինարարության վրա: Գործարար միջավայրի թերզարգացածության, տարածված կոռուպցիայի և շրջանների հետամնացության պատճառով այդ ներդրումները, որպես կանոն, արդյունք չեն ապահովում: Իսկ այդ կառույցները շինարարության ավարտից հետո անցնում են օլիգարխների կամ տեղական կլանների վերահսկողության տակ:*

*Ադրբեջանցիները շատ են խոսում նաև իրենց ռազմական բյուջեի մասին, որը 2011 թ.-ին կազմել է 3 մլրդ. դոլար և գերազանցում է Հայաստանի պետական բյուջեն: Բյուջեում այստեղ մեծ ծախսեր անելն ու անընդհատ ավելացնելն էլ պատահական չէ, քանի որ տարբեր ռազմական ծախսերի և տեխնիկայի, ռազմամթերքների մատակարարումների անվան տակ այդ գումարները սեփական ժողովրդից են գողացվում և իշխանությունների համար լրացուցիչ եկամուտներ ունենալու և շահավետ բիզնեսի աղբյուր են:*

### *5. Բնական ռեսուրսների ներուժը, օգտագործման մակարդակը*

*Տնտեսական զարգացման մակարդակը պետք է տարբերել տնտեսական պոտենցիալից: Հայտնի է, որ բնական ռեսուրսների հարստությունը երկրին չի դարձնում առավել զարգացած և մրցունակ: Դա ընդամենը նպաստում է զարգացմանը միայն արդյունավետ և ճիշտ օգտագործման դեպքում: Երկիրը կարող է ունենալ ոչ մեծ տնտեսական պոտենցիալ, սակայն բարձր տնտեսական զարգացման մակարդակ, կարող է լինել նաև հակառակը՝ երկիրը կարող է ունենալ տնտեսական մեծ պոտենցիալ (նաև բնական ռեսուրսների մեծ պաշարներ), սակայն տնտեսական զարգացման ցածր մակարդակ: Այստեղ կարևորվում են նաև շրջակա միջավայրում կատարված ծախսերը, ինչը բնութագրում է տնտեսության էկոլոգիզացիայի աստիճանը, թափոնների օգտահանումը և երկրորդական օգտագործումը, բնապահպանական տեխնոլոգիաների ներդրումը և բնապահպանական արդյունաբերական ճյուղի զարգացումը: Նավթի և գազի առկայությունը Ադրբեջանին չի դարձրել զարգացած և մրցունակ երկիր: Այն, որ բնական պաշարների գերշահագործումը Ադրբեջանի տնտեսության համար մեծ նշանակություն ունի, և այն, որ ամբողջ տնտեսությունը հիմնված է փաստորեն այդ ռեսուրսների էքստենսիվ շահագործման վրա, բոլորին է հայտնի: Ադրբեջանը գերշահագործելով իր բնական ռեսուրսները, միշտ որդեգրել է նավթի և գազի արդյունահանման ծավալների աճի քաղաքականություն՝ դառնալով հումք արտահանող «բանանային պետություն»:*

*Բացի նավթից և գազից, մյուս կարևոր նշանակություն ունեցող հանքահումքային ռեսուրսներից են երկաթը և ալյումինը, որոնք արտահանման կառուցվածքում նույնպես որոշակի, սակայն փոքր կշիռ ունեն: Դաշքեսանի երկաթի հանքավայրի հիման վրա գործում է Դաշքեսանի լեռնահարստացուցիչ ֆաբրիկան, իսկ Զագլիկի ալունիտների (ալյումինի հումք) հանքավայրի հիման վրա գործում են Գյանջայի կավահողային գործարանը և Սումգայիթի ալյումինի գործարանը:*

*Այսինքն, Ադրբեջանի «հզորության» երկրորդ փաստարկը նավթի և գազի ռեսուրսների առկայությունն է: Ընդհանրապես, Ադրբեջանի իշխանությունները տարածում են նավթի և գազի իրականից մի քանի անգամ մեծ պաշարների մասին լուրեր, օրինակ՝ շրջանառության մեջ են դրվել հետևյալ տվյալները, ըստ որոնց Ադրբեջանի նավթի կանխատեսումային պաշարները իբր կազմում են 30 մլրդ. բարել, որից հաստատված պաշարները կազմում են 7-13 մլրդ. բարել, իսկ գազի պաշարները՝ 5 տրիլիոն խոր. մ, որից հաստատվածը՝ 2 տրիլիոն: Դա այն դեպքում, երբ վերջին տարիների երկրաբանահետախուզական աշխատանքները հուսադրող տվյալներ չեն ապահովում և ըստ արևմտյան փորձագետների և նավթարդյունահանող ընկերությունների (British Petrolium) հիմնավորումներով լավագույն դեպքում հաստատված պաշարները կազմում են համապատասխանաբար 7 մլրդ. բարել (կամ 1 մլրդ. տոննա), իսկ գազի պաշարները՝ առավելագույնը 1,28 տրիլիոն խոր. մ, այն էլ 1994 թ.-ի դրությամբ: Ադրբեջանի նավթարդյունաբերության հիմքի՝ Ազերի-Չիրաղ-Գյունեշլի հանքավայրերի պաշարները գնահատվում են 5,4 մլրդ. բարել (750 մլն. տոննա), իսկ գազի արդյունահանման հիմքի՝ Շահ-Դենիզ գազի հանքավայրի պաշարները գնա-*

*հասվում են մոտ 0,8–1,02 տրիլիոն խոր. մ բնական գազ և 200 մլն. տոննա գազակոնդենսատ: Այս թվերին նույնպես պետք է վերապահումներով մոտենալ, եթե նույնիսկ ենթադրենք, որ «Դարի պայմանագիրը» կնքելու ժամանակ Ադրբեջանի նավթի պաշարները կազմել են 7 մլրդ. բարել, ապա հաշվի առնելով շահագործման բարձր տեմպերը վերջին տարիներին (և՛ քողարկված, և՛ բացահայտ), ներկայումս մնացորդային պաշարները ամենաշատը կազմում են 3,5 մլրդ. բարել նավթ, որն էլ շահագործման այս տեմպերի դեպքում (1-1,2 մլն. բարել օրական, կամ 365 մլն. բարել տարեկան), մոտ տասը տարի հետո Ադրբեջանի նավթի պաշարները կգտնվեն սպառման եզրին: Ըստ* Cambridge Energy Research Associates*-ի (միջազգային խորհրդատվական ընկերություն), ԱԶԳ-ում մնացել է 1 մլրդ. բարել նավթ: Ադրբեջանի անկախանալուց հետո նավթի և գազի ոչ մի նոր պաշարներ չեն բացահայտվել (Ազերի-Չիրագ-Գյունեշլին և Շահ Դենիզը հայտնի են եղել դեռևս 80-ականներին), իսկ Կասպից ծովում գտնվող շատ հայտնի Ալով, Արազ և Շարգ նավթահանքերը, որոնց նավթային կանխատեսումային ռեսուրսները գնահատվում են մոտ 6,6 մլրդ բարել, գտնվում են Իրանի և Ադրբեջանի վիճելի ջրային տարածքներում, կամ ավելի շուտ իրանական 20% ջրային հատվածում:*

*Անցած տարի արդյունահանված 50,4 մլն. տոննայից 40 մլն. տոննան արդյունահանվել է Ազերի-Չիրագ-Գյունեշլիից, որի 30 մլն. տոննան ապահովում են միայն Ազերիի նավթահանքերը, իսկ Չիրագի պլատֆորմը՝ 6-7 մլն. տոննա: Չիրագ 1-ի պաշարները մի քանի տարի անց կսպառվեն. այն նախատեսված է եղել շահագործել 1997-2012 թվականների ընթացքում: Կենտրոնական Ազերին տալիս է տարեկան 10 մլն. տոննա և կսպառվի 2019 թ.-ին, այն նախատեսված է եղել 15 տարվա համար: Արևմտյան և Արևելյան Ազերիի պլատֆորմներից յուրաքանչյուրը նույնպես տալիս է տարեկան 10 մլն. տոննա և դրանց նավթը կսպառվի մոտավորապես 2020 թվականին: Գյունեշլին տալիս է տարեկան 3 մլն. տոննայից քիչ և նավթի պաշարները շուտով նույնպես կսպառվեն: Չիրագ 2-ում նավթը քիչ է և այն կգործի մինչև 2017 թվականը: Այսինքն՝ երկու կամ երեք տարի հետո նավթի արդյունահանման ծավալների անկում է դիտարկվելու, իսկ 2010-2012 թվականները նավթարդյունահանման գագաթնակետն է: Իսկ մնացած թե՛ ցամաքային, թե՛ շելֆային նավթահանքերի պաշարներն անկման փուլերում են և արդյունահանումը ծախսատար է:*




*Եթե Ադրբեջանի նավթը կազմում է համաշխարհային նավթի պաշարների ընդամենը 0,3-0,4%-ը, էլ ինչ հզորության մասին է խոսքը: Ցամաքային նավթահանքերը համարյա լրիվ սպառվել են, շելֆի ռեսուրսների արդյունահանումը, որի 70 տոկոսն էլ գտնվում է ծովի հատակից 5 կմ խորության վրա, նույնպես ծախսատար է: Արտասահմանյան նավթային ընկերությունները մի շարք խոշոր անհաջողությունների են մատնվել կասպյան ադրբեջանական հատվածում: Ադրբեջանական նավթը ներկայումս հետաքրքրություն է ներկայացնում ոչ այնքան իր մնացորդային կամ կանխատեսումային պաշարների համար, որքան լավ ձևավորված և գործող էներգատրանզիտային համակարգի համար, որի օգնությամբ տեղափոխելու է նավթն ու գազը, մինչև «նավթային ցիստեռնի» լիակատար դատարկումը:*

*Ինչ վերաբերում է գազարդյունահանմանը, որքան էլ այն հեռանկարային է Ադրբեջանի տնտեսության համար, սակայն լիովին չի փոխարինի նավթարդյունահանմանը: Շահ Դենիզի հանքավայրի պաշարները նույնպես գերագնահատված են, ըստ խորհրդային տարիների երկրաբանատնտեսական գնահատման արդյունքների՝ այն չի գերազանցել 600 մլրդ. խորանարդ մետրը:*

*Այսինքն՝ Ադրբեջանի տնտեսական հզորության ևս մեկ առասպել փշրվելու է նավթի և գազի ռեսուրսների սպառման հետ համընթաց: Իսկ Ադրբեջանը կորցնելով իր նշանակությունը «նավթագազապարտահանման տնտեսական մոդելից»՝ ձգտելու է վերածվել «նավթագազատրանզիտային տնտեսական մոդել» ունեցող երկրի:*

### *6. Տնտեսական արդյունավետության բնութագրիչները, ենթակառուցվածքների վիճակը*

*Երկրի տնտեսական (արտադրական) արդյունավետությունը բնութագրող ամենակարևոր բնութագրիչներից են աշխատանքի արտադրողականությունը, արտադրանքի որակը, մենեջմենթի որակը:*

*Հայտնի է, որ Ադրբեջանում բացակայում է արդյունավետ կառավարման համակարգը, այն կարելի է բնութագրել որպես խորհրդային վարչահրամայական համակարգի և արևելյան տիպի կամ խանական կառավարման սինթեզի մոդել: Հոր կողմից որդուն իշխանության փոխանցումը դրա լավագույն ապացույցն է: Ադրբեջանի իշխանական կլանները ու օլիգարխները իրենց ձեռքում են պահում տնտեսական բոլոր լծակները: Օլիգարխ համակարգը ամբողջովին ինտեգրվել է իշխանություններին: Մենաշնորհ ունեցող ընկերությունները շարունակում են ճնշել մրցակցության ցանկացած փորձ: Հատկապես տուժում է փոքր ու միջին բիզնեսը: Ադրբեջանում եվրոպական և ամերիկյան խոշոր ընկերությունների վրա տեղի իշխանությունների կողմից ճնշումը ավելի թույլ է, քան տեղական, ինչպես նաև Իրանի և Թուրքիայի գործարարների վրա, որոնք ավելի հեշտ են գնում կոռուպցիոն գործարքների: Այսինքն՝ խոշոր արտասահմանյան ընկերությունները ավելի քիչ են տառապում ադրբեջանական կոռուպցիայից, այդպիսի կարծիք է հայտնում կոռուպցիայի գծով ամերիկյան փորձագետ Քրիստոֆեր Սմիթը[14], քանի որ արևմտյան ընկերությունների (հատկապես նավթագազային ոլորտի) դերը մեծ է Ադրբեջանի տնտեսության մեջ և իշխանությունները շահագրգռված չեն դրանց հեռանալով:*

*Անարդյունավետ կառավարման և հովանավորչության օրինակ է այն, որ ճգնաժամի ժամանակ ֆինանսական օգնությունը ուղղվեց ոչ այնքան փոքր և միջին բիզնեսի աջակցությանը, ինչպես հայտարարել էին իշխանությունները, այլ իշխանական շրջանակների վերահսկողության տակ գտնվող ձեռնարկություններին. օրինակ՝ կառավարությունը օգնեց նավթային պետական ընկերությանը (SOCAR) և պետական սեփականություն հանդիսացող ալյումինի ընկերությանը 1,5 մլրդ. դոլարով՝ վարկերի մարման պարտականությունները կատարելու և գների անկումից վնասները փոխհատուցելու նպատակով:*



*Տնտեսական անարդյունավետության մեկ այլ օրինակ է այն, որ Ադրբեջանում արդյունաբերության մեջ ընդգրկված են մոտ 188,6 հազար աշխատող, որից 37,7 հազարը նավթագազարդյունահանման ոլորտում, 108,6 հազարը՝ վերամշակման ճյուղերում, իսկ էլեկտրաէներգիայի, գազի և ջրի արտադրության և բաշխման ոլորտում՝ 42,3 հազար մարդ: Ըստ էության, նավթագազարդյունաբերությունը ապահովելով տնտեսության հիմնական եկամուտները՝ զբաղվածության տեսակետից ավելի քիչ մարդ է ընդգրկում, քան մյուս ոլորտները, ապահովելով աշխատատեղերի ընդամենը 1%-ը: Համեմատելով գյուղատնտեսության հետ՝ նշենք, որ գյուղատնտեսությունը ապահովում է երկրի համախառն արտադրանքի ընդամենը 6-7%-ը, սակայն այստեղ զբաղված է աշխատունակ բնակչության կեսը: Նմանապես անհավասարաչափ են աշխատավարձերը, որն ամենաբարձրը կազմում է նավթագազարդյունաբերության մեջ: Հենց այդ ճյուղի բարձր աշխատավարձերի ազդեցությունն է, որ Ադրբեջանի մակարդակով ապահովում է միջին աշխատավարձի համեմատաբար բարձր ցուցանիշներ (396 դո-*

14. Коррупция общепринятый элемент политической и экономической системы Азербайджана, Deyerler AIN, Azerbaijan Islam News, 25.01.2010

*լար), քան Վրաստանում (318 դոլար) և Հայաստանում (283 դոլար): Սակայն հենց նույն այդ ճյուղի ներսում զգալի տարբերություն կա օտարերկրյա աշխատողների և ադրբեջանցիների աշխատավարձերի միջև, ինչը կարող է տատանվել մի քանի տասնյակից մինչև մի քանի հարյուր անգամ:*

*Մի քանի խոսք Ադրբեջանի արտադրական ենթակառուցվածքների մասին. Բաքվում, Գյանջայում և Սումգայիթում գործող գործարանների մեծ մասը հնամաշ, խորհրդային տարիներից եկող հին տեխնոլոգիաներով գործող գործարաններ են, որոնք աշխատում են պարզապես աշխատելու համար, ապրանքները մրցունակ չեն, տնտեսության մեջ ապրանքների և ծառայությունների մեծ մասն էլ ուղղակի կապված են նավթարդյունաբերության ոլորտի պատվերների հետ: Ձեռնարկություններից շատերը վնասով են աշխատում և գոյատևում են նավթային դոտացիաների հաշվին: Արդյունաբերության և արտահանման հիմքում գտնվում են հումքային կամ ցածր ավելացված արժեք ունեցող ապրանքները: Տեղական շուկայում դիտարկվում է ցածր սպառողական պահանջարկ տեղական անորակ ապրանքների և ծառայությունների նկատմամբ, դիտարկվում է շուկայի ոչ հավասարակշռված և անհամաչափ զարգացում: Եվ դա բացատրել միայն հոլանդական հիվանդությամբ՝ ճիշտ չէր լինի, դա ադրբեջանական տնտեսության խրոնիկ հիվանդությունն է: Ինչպե՞ս կարող է Ադրբեջանի տնտեսությունը հզոր լինել, եթե չունի ինքնաբավարարման գործող համակարգ, բնորոշվում է արտադրական սեկտորի ցածր արտադրողականությամբ և ունենալով գյուղատնտեսական հզոր ներուժ՝ նույնիսկ չի կարողանում բավարարել սեփական գյուղատնտեսական մթերքների և սննդի պահանջարկը:*

*Հզոր և զարգացած երկրները ունենում են նաև զարգացած ենթակառուցվածքներ: Դրանք են, մասնավորապես, ճանապարհները, կապը և հեռահաղորդակցությունը, տրանսպորտը, պահեստային տնտեսությունը, էներգամատակարարումը, ջրամատակարարումը:*

*Ադրբեջանը վերջին տարիներին փորձում է բարելավել իր ենթակառուցվածքները՝ նավթից եկած եկամուտների մի մասը ուղղորդելով այդ ենթակառուցվածքների բարելավմանը: Սակայն դա տնտեսության ենթակառուցվածքային զարգացածության որակ առայժմ չի ապահովում: Ջրամատակարարման և էներգամատակարարման մեջ մեծ են կորուստները: Ադրբեջանի որոշ տեղերում, հատկապես գյուղերում, ենթակառուցվածքները բնութագրվում են որպես թերզարգացած: Ցածր է տրանսպորտային ծառայությունների որակը և ազգային տրանսպորտային համակարգի մրցունակությունը: Ճիշտ է, ճանապարհները մեծ ծավալներով վերանորոգվում են: Սակայն որակական առումով դրանք չեն համապատասխանում միջազգային ստանդարտներին, չնայած դրանք կարելի է գնահատել որպես միջին որակի: Հետաքրքիր է նաև այն փաստը, որ վերջերս Ադրբեջանում կառուցված և լայնորեն գովազդված դեպի Բաքու մտնող ավտոմաճանապարհային մայրուղու 1 կմ-ի ինքնարժեքը պետության վրա արժեցել էր մոտ 20 մլն. ԱՄՆ դոլար այն դեպքում, երբ Վրաստանում նման պարամետրերով մայրուղու կառուցման 1 կմ-ի վրա ծախսերը կազմել են ընդամենը 900 հազար ԱՄՆ դոլար:*

**Ամփոփում**

*Զարգացած տնտեսությունը ենթադրում է զարգացած շուկայական հարաբերություններ, պետության կողմից երաշխավորված սոցիալական պաշտպանություն, մեծ սպառողական պահանջարկ, գիտության և տեխնիկայի առաջընթաց. երևույթներ, որոնք բացակայում են Ադրբեջանում: Ադրբեջանական պատկերացումներով՝ տնտեսական հզորությունը համախառն ներքին արդյունքի, պետական բյուջեի, նաև ռազմական բյուջեի համեմատական մեծ ցուցանիշներն են, ինչպես նաև նավթի և գազի պաշարների առկայությունը:*

*Չնայած պատկառելի տնտեսական ցուցանիշներին, այնուամենայնիվ Ադրբեջանը թույլ և խոցելի տնտեսություն ունի, տնտեսական աճը ունի քանակական բնույթ և ուղիղ համեմատական է արդյունահանված նավթի տակառներից և համաշխարհային շուկայում ածխաջրածինների գնից:*

***Այսպիսով, Ադրբեջանի «հզոր» տնտեսություն կոչվածը, ինչպես նաև ադրբեջանական պետականության հիմքը Ազերի-Չիրաղ-Գյունեշլի ու Շահ-Դենիզ հանքավայրերը շահագործող պլատֆորմներն են և Սանգաչալ տերմինալը:***



# Ռուսաստանի Դաշնությունում թուրքական հատուկ ծառայությունների գործունեության ու ակտիվության շուրջ

Լևոն ՀՈՎՍԵՓՅԱՆ
Թուրքագետ

Ռուսաստանի Անվտանգության դաշնային ծառայության (այսուհետ՝ ԱԴԾ) տվյալների համաձայն՝ թուրքական հատուկ ծառայությունները* 1990-ական թթ. համարվել են Ռուսաստանի հարավային շրջաններում գործող ամենաակտիվ հետախուզական մարմիններից մեկը: Թուրքական արտաքին հետախուզությունը հատկապես 1990-ական թթ. խիստ ակտիվություն է դրսևորել հատկապես Ռուսաստանի Կրասնոդարի, Ստավրոպոլի երկրամասերի, ինչպես նաև Հյուսիսային Կովկասի նկատմամբ: Ռուսաստանի հակահետախուզական մարմինների համաձայն՝ Թուրքիայի Սամսուն, Տրապիզոն, Ստամբուլ քաղաքներում գործել է կադրային հետախուզական ապարատ, որը կոչված է եղել հիմնականում Ռուսաստանի հարավային շրջաններում հետախուզական գործունեության համար: Թուրքիայի արտաքին հետախուզությամբ զբաղվող հիմնական մարմինը Ազգային հետախուզական կազմակերպությունն է (թուրք. Milli Istihbarat Teskilati), որը գործում է Թուրքիայի վարչապետի հսկողությամբ և հաշվետու է նրան:

Նախ՝ թուրքական հատուկ ծառայությունների համար Կրասնոդարի երկրամասը և Ռուսաստանի հարավային շրջանները կարևորություն և առանձնակի ուշադրություն են ներկայացնում մի շարք տեսանկյուններից և ռազմավարական գնահատականներից: Առաջինը, որ հետաքրքրել և հետաքրքրում է հատուկ ծառայություններին, դա երկրամասի էթնիկական գործոնն է, քանի որ այնտեղ համակարգված բնակվում են թյուրքալեզու, մահմեդական տարրեր, ինչպես նաև հայեր, քրդեր: Երկրորդը տարածաշրջանի աշխարհագրական- ռազմավարական նկատառումն է, քանի որ այդ շրջանը նախ տրանսպորտային- նավահանգստային, սահմանային կարևոր կենտրոն է, եթե հաշվի առնենք նաև երկաթուղային, էներգետիկ տարանցիկ ուղիների առկայությունը: Երրորդը գաղափարախոսական գործոնն է, քանի որ պանթյուրքական նկատառումներից ելնելով Հյուսիսային Կովկասի և Ռուսաստանի հարավային շրջանների մուսուլման և թյուրքալեզու տարրերը գտնվում են Թուրքիայի հետևողական ուշադրության կենտրոնում:

Թուրքական հատուկ ծառայությունները հիմնականում գործել են տարածաշրջանում հիմնված տարբեր շինարարական,

* MIT-ը արտաքին քաղաքական հետախուզության հանրապետական մարմին է, որը ստեղծվել է 1965 թ. հուլիսին՝ դեռևս 1927 թ.-ից գործող Ազգային անվտանգության ծառայության (թուրք. Milli Emniyet Hizmeti) հիմքի վրա: Այն ապահովում է հետախուզական ու հակահետախուզական ծառայությունների գործունեության ամբողջ համակարգի օպերատիվ կառավարումը: Ներկայումս MIT-ը ղեկավարում է Հ. Ֆիդանը: MIT-ի նախատիպը կարելի է համարել դեռ 1913 թ. երիտթուրքերի պարագլուխ Էնվերի կողմից ռազմական նախարարությանը կից ստեղծված «Teskilat-i Mahsusa»-ն («Հատուկ կազմակերպություն»), որը հետախուզական ու դիվերսիոն գործողություններից զատ առավելապես ներգրավված է եղել պանթյուրքական գաղափարների տարածման մեջ: Այդ կազմակերպությունը, ստեղծման հենց սկզբից, իր ուժերը կենտրոնացրել էր Բալկաններում թյուրքացման ծրագրերն ի կատար ածելուն, հունական ու բուլղարական տարածքները բռնազավթելուն, և Էնվերի հրամանով այդ նույն կազմակերպության ջանքերով 1913 թվականին Թրակիայի տարածքների վրա հռչակվում է «Արևմտյան Թրակիայի ինքնավար թյուրքական հանրապետություն» որպես առաջին թյուրքական հանրապետություն, ինչը գոյատևեց մի քանի ամիս: Այդ նույն սկզբունքով և նույն կազմակերպության միջոցով էլ 1918 թ. հայության բնաջնջման ճանապարհով իրականացվեց պանթյուրքական ծրագրերի իրականացման առաջին «լուրջ գործը»՝ Ադրբեջան արհեստածին ու խամաճիկ պետության ստեղծումը:

առևտրային, տուրիստական ընկերությունների, ինչպես նաև կրթական-մշակութային, կրոնական կազմակերպությունների հովանու ներքո: Թյուրքալեզու բնակչության շրջանում հիմնվել են թուրքական տարբեր բարեգործական-կրոնական, գաղափարախոսական կենտրոններ, որոնց գործունեությունը հետագայում բացահայտվել և դադարեցվել է: 2002 թ.-ին ռուսական անվտանգության մարմինների կողմից կասեցվել է Դաղստանում, Կարաչայ-Չերքեզիայում, Բաշկիրիայում և այլ շրջաններում լրտեսական գործունեություն ծավալող շուրջ 50 միսիոներների գործունեությունը: Իսկ միայն Կրասնոդարի երկրամասում 2000-2001 թթ. բացահայտվել են շուրջ 17 կադրային հետախույզներ, որոնց մեծ մասը, ռուսական հակահետախուզության տվյալներով, գործել են Թուրքիայի օգտին: 2002 թ. նույն այդ երկրամասում բացահայտվել և վնասազերծվել են թուրքական հատուկ ծառայությունների 8 գործակալներ:

Ռուսական հատուկ ծառայությունների և հատկապես նահանգային մարմինների համար գլխացավանք է ներկայացնում տարածաշրջանում թյուրքալեզու ժողովուրդների առկայությունն ու նրանց թվաքանակի աճը: Խոսքը նախ և առաջ վերաբերում է երկրամասի թուրք-մեսխեթցիներին: Միջէթնիկական իրավիճակն այնքան անհանգստացնող էր, որ այդ հիմնախնդիրը բարձրացվեց Ռուսաստանի նախագահի կողմից 2001 թ. դեկտեմբերին կայացած Ռուսաստանի ՆԳՆ ընդլայնված կոլեգիայի նիստում, որտեղ հարց բարձրացվեց երկրամասում թուրք- մեսխեթցիների հետագա բնակության նպատակահարմարության վերաբերյալ: Համաձայն ռուսական անվտանգության մարմինների՝ թուրքական հետախուզությունը առավել ակտիվություն է դրսևորում հատկապես թուրք-մեսխեթցիների շրջանում, ինչը կարող է կարևոր հաղթաթուղթ հանդիսանալ նրա ձեռքում: Այդ մասին վկայակոչել է նաև Ռուսաստանի նախկին նախագահ Վ. Պուտինը՝ նշելով, որ թուրքական հետախուզությունը առանձնակի ակտիվությամբ է գործում թուրք-մեսխեթցիների շրջանում՝ Թուրքիայի կողմից նրանց առաջնորդներին ապահովելով անմիջական հրահանգներով: Ռուսական անվտանգության մարմինների պնդմամբ՝ թուրքական հետախուզությունը տարածաշրջանում թյուրքալեզու տարրերի ինտեգրմանն ուղղված գործողություններ է իրականացնում: Առկա է դրանց շրջանակից իրենց հետախուզական գործունեության համար հավաքագրման լուրջ ռեսուրս: Կրասնոդարի հակահետախուզական մարմինների վկայությամբ՝ թուրքական հետախուզությունը թուրք-մեսխեթցիների համայնքի միջոցով հետախուզական տեղեկատվություն է ստանում Կուբանի ռազմական և տնտեսական օբյեկտների մասին, առանձնակի ուշադրություն հատկացնելով նավթային ու էներգետիկ հանգույցներին, Նովոռոսիյսկի ու Տուապսեի տերմինալներին: Թուրք- մեսխեթցիները համակարգված բնակվում են Նովոռոսիյսկ-Աբինսկի մայրուղու ողջ երկայնքով: Որոշ տվյալներով՝ զգալիորեն աճում է նրանց թվաքանակը, ինչը կարող է լուրջ էթնիկական-դեմոգրաֆիական ճգնաժամ առաջացնել երկրամասում: Բացի այդ, բավականին լարված իրավիճակ է առկա տեղի կազակ բնակչության և թուրք-մեսխեթցիների միջև, և ելնելով այդ հանգամանքից Ռուսաստանի կողմից մերժվեց Կուբանում թուրքական հյուպատոսություն բացելու Թուրքիայի առաջարկը: Վերջերս նույնիսկ քննարկվել է թուրք- մեսխեթցիների վերաբնակեցման հարցը, ինչը սակայն հանդիպել է նրանց կատաղի դժգոհությանը: Վերաբնակեցմանը խոչընդոտելու ուղղությամբ նաև ինտեգրացիոն ու գաղափարական հավաքագրման գործունեություն է ծավալել թուրքական հետախուզությունը ևս: 2001 թ. բացահայտվեց MIT-ի գործակալի դիվերսիոն գաղափարական գործունեությունը, որը թուրք-մեսխեթցիների շրջանում տարածում էր ակտիվ պանթյուրքական գաղափարախոսություն կրոնական «Նուրջուլար» կազմակերպության միջոցով: Ընդհանրապես կրոնական, բարեգործական ընկերությունների անվան տակ հետախուզական գործունեությունը հեռու չէ թուրքական հետախուզության գործելաոճից:

Առանձնակի հետքրքրություն է ներկայացնում ազգությամբ թուրք, Նովոռոսիյսկում «Հեքաշ տրեյդինգ» ընկերության հիմնադիր Գենչ Թալաթի գործունեությունը Կրասնոդարի երկրամասում, որի արդյունքում նա մտերմանալով տեղի ոստիկանության աշխատակիցների, օդանավակայանի սահմանապահ ծառայության աշխատակիցների հետ՝ թուրքական հետախուզությանն է տրամադրել շրջանի ռազմատեխնիկական, Նովոռոսիյսկի ռազմական օբյեկտների վերաբերյալ օպերատիվ տեղեկատվություն: Ռուսական հակահետախուզության տվյալներով՝ նրա միջոցով թուրքական հետախուզության կենտրոնական ապարատ են ուղարկվել նաև տեղի հայկական համայնքի, ինչպես նաև քրդերի, Ղրիմի



«ՄԻՏ»-ի տնօրեն Հաքան Ֆիդանը

թաթարների, թուրք-մեսխեթցիների ու ադրբեջանցիների վերաբերյալ անհրաժեշտ տեղեկություններ: Թուրք-մեսխեթցիների շրջանում դիվերսիոն-հետախուզական գործունեություն իրականացնելու մեղադրանքով բացահայտված թուրք գործակալների փաստերը բավականին շատ են և կարելի է դրանք թվարկել: Սակայն ակնհայտ է, որ թուրքական հատուկ ծառայությունները ամեն կերպ աջակցում են տեղի թուրք բնակչության շրջանում ազգայնական տրամադրությունների ձևավորմանն ու ամեն կերպ փորձում ինտեգրել նրանց հենց Կուբանում՝ որպես ռազմավարական հաղթաթուղթ:

Թուրքական հատուկ ծառայությունները գործում են տարբեր շինարարական, առևտրային, տուրիստական ընկերությունների հովանու ներքո, ինչպիսիք էին՝ «Ոլուսոյ», «Իլ Ումուս», «Քիլի տուր», և այս ցանկը կարելի է շարունակել:

Հարկ է նշել, որ թուրքական հատուկ ծառայությունները ակտիվ գործել են նաև Հյուսիսային Կովկասում, հատկապես Չեչնիայում, կազմակերպել մի շարք խոշոր դիվերսիոն, ահաբեկչական գործողություններ, զինամթերք մատակարարել չեչեն գրոհայիններին, Թուրքիայի տարածքում հատուկ պատրաստման կենտրոններում մարզել նրանց և այլն: Ռուսաստանի պաշտպանության այն ժամանակվա նախարար Իվանովը 2004 թ. սեպտեմբերին Եվրոպայի Խորհրդի մարդու իրավունքների հարցերով հանձնակատարի հետ զրույցում նշել է, որ Թուրքիան Հյուսիսային Կովկասում ահաբեկչության և անջատողականության ակտիվ կազմակերպիչներից է: Հետաքրքիր է, որ Իվանովը հարկ է համարել չհիշատակել ռուսաստանյան այլ շրջաններում դիվերսիոն-հետախուզական, անջատողական գործունեություն ծավալած թուրքական հատուկ ծառայությունների հարուստ փաստերը:




Հարկ է նշել, որ չի բացառվում այն հեռանկարը, որ Կրասնոդարի և Ռուսաստանի հարավի երկրամասերի հայկական համայնքներն ու հատկապես տնտեսական գործունեությամբ զբաղվող հայ գործարար շրջանակները կարող են թուրքական հատուկ ծառայությունների գործուն միջամտությամբ ենթարկվել տարբեր դիվերսիոն-սադրանքների, հրահրվել ազգամիջյան բախումների՝ առաջացնելով տեղի կազակ և սլավոն բնակչության բուռն դժգոհությունն ու վտանգավոր հետևանքներով լի «հայկականության դեմ քսենոֆոբիան»:

2007 թ. ապրիլին Ռուսաստանի Դաշնության գերագույն դատարանը արգելեց Ֆ. Գյուլենի ղեկավարությամբ գործող «Նուրջուլար» (թուրք. Nurcular) թուրքական կրոնական համայնքի գործունեությունը Ռուսաստանի ամբողջ տարածքում: Դատարանի որոշման մեջ ասվում էր, որ թուրքական «Նուրջուլար»-ի գործունեությունը Ռուսաստանի տարածքում արգելվել է «կրոնական ծայրահեղ արմատական գաղափարներ տարածելու համար»: Դատական նիստին գլխավոր դատախազության ներկայացուցիչների հետ միասին մասնակցել են նաև ՌԴ արդարադատության նախարարության և Անվտանգության դաշնային ծառայության ներկայացուցիչները: Ըստ որոշ աղբյուրների՝ այդ կազմակերպության անվան տակ գործել են թուրքական հետախուզական-լրտեսական խմբեր, որոնք էլ բացահայտվել են ռուսական հակահետախուզության կողմից: Գաղտնիք չէ, որ թուրքական հետախուզությունը իր գործունեությունն իրականացրել է նաև այդ կազմակերպության անվան տակ, ուստի նման դատական գործի ընթացքը ավելի շուտ պայմանավորված էր հենց այդ հանգամանքով:

Ռուսական մամուլը փաստել է, որ թուրքական «Նուր» կրոնական համայնքը 35 երկրներում 300 կրթական կազմակերպու-





Նիկոլայ Պատրուշև և Վլադիմիր Պուտին

թյուններ ունի: Ռուսաստանում դրանք գործում են «Սերհադ», «Էֆլաք», «Թորոս», «Թոլերանս» և «Ուֆուք» կոչված հիմնադրամների անվան տակ: Ենթադրվում է, որ ՌԴ գերագույն դատարանի այդ որոշումից հետո «Նուրջուլարի» հետ կապեր ունենալու հիմնավորմամբ հետաքննություններ կսկսվեն ՌԴ-ում գործող թուրքական դպրոցներում, գործարար կազմակերպություններում և հրատարակչություններում:

Դեռ 2002 թ. ԱԴԾ-ն հայտարարեց, որ Ռուսաստանի տարածքում դադարեցվել է թուրքական «Նուրջուլար»-ի գործունեությունը: ԱԴԾ տնօրեն Ն. Պատրուշևը հայտարարել էր, որ այդ կազմակերպության կողմից ստեղծված ֆոնդերն ու ընկերությունները հետախուզական գործունեությամբ են զբաղվել, Հյուսիսային Կովկասում տեղի ունեցող գործընթացների մասին տեղեկատվություն են հավաքել, իրականացրել պանիսլամիստական ու պանթյուրքական գաղափարների տարածում, հավաքագրել գործակալների, որոնք պետք է ներթափանցեին ռուսական պետական ու իրավապահ մարմիններ:

2009 թ. Թուրքիայում որոշում կայացվեց որոշ փոփոխություններ իրականացնել հետախուզական մարմինների գործունեության առաջնահերթություններում, ինչը կապված է միջազգային ժամանակակից իրադրությանն ու աշխարհաքաղաքական զարգացումներին համարժեք արձագանքելու և Թուրքիայի քաղաքականությունն ավելի արդյունավետ իրականացնելու անհրաժեշտության հետ: Հետախուզական գործունեության նոր ռազմավարության շրջանակներում Թուրքիայի ազգային հետախուզական կազմակերպությունը իր գործունեության «ծանրությունը» կենտրոնացնում է արտաքին հետախուզության ոլորտում: Ազգային հետախուզական կազմակերպության կառուցվածքում իրականացված փոփոխությունների շրջանակում վերանայվել և հստակեցվել են նոր առաջնահերթությունները, որոնք վերաբերում են արտաքին հետախուզությանը: Տարածաշրջանային, տնտեսական, քաղաքական, մշակութային ու ժողովրդագրական առումներով «առաջնահերթ թիրախներ» են ընտրվել Կովկասը, Բալկանները, Մերձավոր Արևելքը, Միջերկրական, Սև, Էգեյան ծովերը, Կասպյան ավազանը, Ասիա- Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանը, Աֆրիկան: Բացի անգլերենից, կարևորություն է տրվելու արաբերեն, հայերեն, վրացերեն, հունարեն, բուլղարերեն, սերբերեն, ռուսերեն ու չինարեն լեզուներին: Դեռ 2007 թվականի հունվարին ԱՀԿ-ի ղեկավար Է. Թաների ելույթներից մեկում առաջ քաշվեց ազգային անվտանգության ապահովման ու ազգային շահերի պահպանման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով հետախուզության գործառույթների վերաձևման ու զարգացման անհրաժեշտությունը:

ԱՀԿ-ի կողմից առաջնահերթություն ստացած 10 «ռազմավարական ոլորտներ» էին սահմանված.

Կովկասյան տարածաշրջանում Ռուսաստանի նոր ռազմավարությունը, Վրաստանի ձգտումները դեպի ՆԱՏՕ, Թուրքիա-Հայաստան-Ադրբեջան հարաբերությունները, Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը:

Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակը, Իրաքում և Լիբանանում կատարվող զարգացումները, իսրայելա-պաղեստինյան հարցը, Իրանի հաստատակամությունը միջուկային հարցի հետ կապված, տարածաշրջանում Սիրիայի դերակատարությունն ու դիրքորոշումը, արաբական մի շարք էմիրություններում հնարավոր քաղաքական



զարգացումներն ու իշխանափոխությունները:

Բալկանյան տարածաշրջանի երկրների միջև հարաբերությունները ու լարվածությունը, Կոսովոյի անկախությունից հետո զարգացումները, Եվրամիությանը Սերբիայի և Խորվաթիայի անդամությունը, տարածաշրջանի երկրներում Հունաստանի ֆինանսատնտեսական ու հեռահաղորդակցության ոլորտում ներդրումները:

Սևծովյան ավազանում նավթի պաշարները ու որոնողական աշխատանքները, էներգետիկ ենթակառուցվածքները, ավազանի երկրների կողմից Սև ծովում ազդեցություն սահմանելու ձգտումները:

Միջին Ասիայում ու Կասպյան ավազանում նավթի ու գազի բաժանումը, բաշխումը, հնարավոր խողովակաշարերի կառուցումն ու ուղիները, տարածաշրջանի երկրների նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումը, Ռուսաստանի ու Չինաստանի միջև էներգետիկ պայմանագրերը, Կասպյան ավազանում նավթի ու գազի պաշարների արդյունահանումն ու ռազմավարական ծրագրերը:

Հեռավորարևելյան, Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի երկրների հետ ԱՄՆ-ի ու ԵՄ-ի տնտեսական մրցակցության ուժեղացումը, Չինաստանի ու Ճապոնիայի միջև մրցակցությունը տարածաշրջանային դերակատարության համար, Աֆղանստանում իրավիճակն ու ահաբեկչական գործողությունները:

Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ ներկա միջազգային հարաբերություններում Թուրքիան փորձում է ավելի մեծացնել իր դերակատարությունը, ինչի համար մտադիր է բարձրացնել արտաքին հետախուզության աշխարհագրությունն ու բնագավառները: Բավականին լուրջ ուշադրություն է դարձված էներգետիկ-կոմունիկացիոն խնդիրներին, որով Թուրքիան պատրաստվում է ավելի մեծ դերակատարություն ստանձնել տարածաշրջանային ու արտատարածաշրջանային էներգետիկ-տրանսպորտային ու քաղաքական-տնտեսական գործընթացներում, ինչը հնարավորություն կտա ապահովել ոչ միայն սեփական անվտանգությունը, այլ նաև մեծացնել իր դերակատարությունը տարածաշրջանային ու միջազգային գործընթացներում:

2010 թ. ԱՀԿ-ի ղեկավար նշանակվեց Հաքան Ֆիդանը, որը նախկինում ղեկավարել է «Թյուրքական համագործակցության ու զարգացման գործակալությունը-TIKA», որի հիմնական գործունեության շրջանակը եղել է թյուրքալեզու երկրներին ու ժողովուրդներին թուրքական սոցիալ-տնտեսական, կրթական ու մշակութային օժանդակության ծրագրերը: Նա համարվում է վարչապետ Էրդողանի համար վստահելի անձ, ինչը հնարավորություն կտա էլ ավելի ուժեղացնել կառավարության և հատկապես վարչապետ Ռ. Թ. Էրդողանի վերահսկողությունն այդ կառույցի նկատմամբ: Նոր ղեկավարը հայտարարեց, որ այդ կառույցի կառավարման ու գործունեության հետ կապված իրականացվելու են լայնամասշտաբ բարեփոխումներ, որոնք վերաբերելու են ինչպես կազմակերպչական, կառուցվածքային, այնպես էլ օպերատիվ-գործնական ոլորտներին: Ըստ նոր ղեկավարի՝ երկրի արտաքին քաղաքականության գերակայությունների իրականացման համար առաջին հերթին անհրաժեշտ է ուժեղ արտաքին հետախուզություն, որի ուղղությամբ էլ իրականացվելու են աշխատանքները: Բացի այդ, Թուրքիայում լուրջ խնդիր է համարվում հետախուզական ոլորտում միջգերատեսչական մարմինների աշխատանքի համակարգումը և այդ ուղղությամբ իսկ իրականացվում են գործնական քայլեր:

**Ծանոթագրություն.** Թուրքիայում միմյանցից անկախ գործում են մի քանի հիմնական հատուկ ծառայություններ: Որպես արտաքին քաղաքական հետախուզության հիմնական մարմին՝ MIT-ը, ռազմական հետախուզության ոլորտում՝ ԶՈՒ գլխավոր շտաբի 4-րդ գլխավոր վարչությունը կամ Գլխավոր հետախուզական վարչությունը (թուրք. Genelkurmay Istihbarat Dairesi), ներքին անվտանգության ոլորտում՝ ՆԳՆ Անվտանգության տնօրինությունն (Emniyet Genel Mudurlugu) ու Ժանդարմերիայի հետախուզական ծառայությունը:



Թուրքական ախորժակ

# ԱՎԻԱՑԻԱՆ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՄԱՐՏՈՒՄ



Արծրուն Հովհաննիսյան

**ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՆ**

Ինչպես հայտնի է, Արցախի հայաթափման գործն ադրբեջանական ՕՄՕՆ-ը սկզբից նախաձեռնել էր խորհրդային զորքերի հետ համատեղ, իսկ ԽՍՀՄ-ի փլուզումից հետո կիսատ թողած գործը շարունակում էր ռուսական զորքերի հետ համատեղ: Նրանց համար դըժվար կլիներ առանց համապատասխան տեխնիկայի և միջոցների իրականացնել այդ բարդագույն գործընթացը: Հետևաբար ավիացիան հենց սկզբից ունեցել է լայն կիրառություն: Մեկ անգամ չէ, որ ադրբեջանական օդաչուները ցուցադրել են իրենց «հերոսությունը»՝ գյուղերում ամրացած մի քանի ազատամարտիկների ու խաղաղ բնակիչներին ռմբակոծելով, մեր ուղղաթիռների հետևից կրակելով և այլն: Նույնիսկ «Մի-8» ուղղաթիռներից ձեռքի նռնակներ էին նետվում Գետաշենի և այլ գյուղերի բնակիչների վրա: Ավիացիան ներկայացված էր փաղափացիական և Խորհրդային Ադրբեջանի տարածքում տեղակայված ռազմաբազաների ռազմական ուղղաթիռներով:

1990 թ. հունվարի 20-ին ուղղաթիռների 15 չվերթներով Մալիբեյլի գյուղ են հասցվում ադրբեջանական ՕՄՕՆ-ի հատուկ ջոկատները: Սեպտեմբերի 23-ին նույն տխրահռչակ ստորաբաժանման ջոկատները հարձակվում են գործում Մարտակերտի Չափար գյուղի վրա: Հարձակվողներին օդից աջակցում էին ուղղաթիռները, որոնցից նետվում էին ձեռքի նռնակներ: Երկու օր հետո քաղաքացիական երկու ուղղաթիռներ նման ռմբանետում են կազմակերպում Ստեփանակերտ քաղաքի և այլ գյուղերի վրա: 1991 թ. սկզբին հայտնի «26»-ի դիրքերից «Ստրելա-2Մ» դյուրակիր զենիթահրթիռային համալիրով (ԶՀՀ) խոցվեց ադրբեջանական «Մի-8» ուղղաթիռը:

1991 թ. ապրիլի 2-ին ազատամարտիկները նույն զենքով խոցում են ադրբեջանական մեկ այլ «Մի-8» ուղղաթիռ, որում այլ ուղևորներից բացի թռչում էր նաև Ադրբեջանական ԽՍՀ Մինիստրների խորհրդի փոխնախագահ Թամերլան Կարաևը: Ապրիլի 30-ին Գետաշենի վրա հարձակման ժամանակ ցամաքային ուժերին նորից աջակցում էին ռազմական և այլ ուղղաթիռներ: Մայիսի 8-ին Մեծ Շենը նորից ենթարկվում է ձեռքի նռնակների ռմբակոծման: 1991 թ. հուլիս-օգոստոս ամիսներին «Մի-24»-երը հարվածում էին Շահումյանի և այլ հայկական շրջանների գյուղերի բնակիչներին և ազատամարտիկներին: Հուլիսի 20-ին Բուզլուխ գյուղի վրա գրոհելիս երեք ուղղաթիռներն էլ վնասվում են, օդաչուներից մեկը վիրավորվում է: «Օղակ» գործողության ժամանակ յուրաքանչյուր ըմբոստացող գյուղ ենթարկվել է ուղղաթիռների կրակային ու հոգեբանական ճնշման:

1991 թ. սեպտեմբերի 18-ին Ասկերանի շրջանի Բերքաձոր, Մեհտիշեն և Նորագյուղ գյուղերի բնակիչները և ազատամարտիկները ենթարկվում են «Մի-24»-երի հերթական հարվածներին: 1991 թ. հոկտեմբերի 14-ին Կարաչինար գյուղի մոտ վայրէջք է կատարում մի ուղղաթիռ: Բնակիչները կարծելով, որ հայկական ուղղաթիռ է և օգնություն է բերել, վազում են դեպի ուղղաթիռը, սակայն ընկնում ժամանած ՕՄՕՆ-ականների կրակի տակ: Ադրբեջանական կողմը պնդում է, որ 1991 թ. հոկտեմբերի 29-ին Խանաբադ գյուղի մոտ խոցվել է քաղաքացիական «Ան-2» ինքնաթիռ, որը վարում էր փորձառու օդաչու Ա. Ասադովը:

Ըստ ռուսական տվյալների՝ նույն թվականի նոյեմբերի 21-ին Մարտունու շրջանի Քարաքենդ գյուղի մոտ խոցվել է մայոր Վյաչեսլավ Կոտովի ռուսական «Մի-8» ուղղաթիռը, որի մեջ քսանմեկ անձանց հետ էր նաև շրջանի պարետը՝ գեներալ-մայոր Նիկոլայ Ժինկինը: Գործողության համար մեղադրում են հայկական կողմին:

1992 թ. հունվարի 28-ին հայկական կողմը դյուրակիր ԶՀՀ-ով խոցել է Աղդամից Շուշի թռչող ադրբեջանական «Ազալ» ավիաընկերության քաղաքացիական «Մի-8» ուղղաթիռը, որում գտնվում էին 30-40 ուղևորներ: Ուղղաթիռի հրամանատարն էր Վ. Սերյոգինը:

Ըստ ռուսական տվյալների՝ փետրվարի 14-ին ադրբեջանցիները երկրում եղած ռուսական ավիացիայից գողանում են 7 ուղղաթիռ և ստեղծում առաջին ադրբեջանական ուղղաթիռային էսկադրիլիան: Հետագայում Սանգաչալի քաղաքում նրանց ժառանգություն մնացին այլ ուղղաթիռներ ևս: Այդ բոլորը միասին կազմում են երկու ուղղաթիռային էսկադրիլիա՝ 14 «Մի-24» և 9 «Մի-8» ուղղաթիռներ: Խորհրդային բազաների հաշվին նրանք ստացան այլ օգնություն ևս:

ԽՍՀՄ-ը փլուզման պահին Անդրկովկասում ուներ մի քանի ռազմական օդանավակայան, որոնք մտնում էին ՀՕՊ 19-րդ առանձին բանակի և 34-րդ օդային բանակի կազմի մեջ: Վրաստանի տարածքում կար ինը, իսկ Ադրբեջանի տարածքում՝ հինգ ռազմական օդանավակայան: Դրանցից էին Սիտալ-Չայում տեղակայված խորհրդային 80-րդ «Սու-25» գրոհիչների առաջին ավիագունդը, Նասոսնիում՝ ՀՕՊ 82-րդ կործանիչային ավիագունդը՝ զինված «ՄիԳ-25» կործանիչներով, Քյուրդամիրում՝ 976-րդ ռմբակոծիչային ավիագունդը՝ «Սու-24» ինքնաթիռներով, և Դալյարում՝ 882-րդ հետախուզական ավիագունդը՝ «ՄիԳ-25ՌԲ» և «Սու-24ՄՌ» ինքնաթիռներով: Ադրբեջանը ցանկացած գնով ձեռք էր բերում այդ ինքնաթիռներից, չնայած որ Ռուսաստանը փորձում էր դուրս բերել




դրանք: Նույնիսկ դեպք է եղել, երբ թռիչքից առաջ ինքնաթիռի անիվները ծակվել են, այլ համակարգեր խափանվել են, միայն թե ինքնաթիռը մնար: Ադրբեջանի տարածքից հանվող մարտավարական միջուկային սպառազինությունն անգամ քիչ էր մնում բաժին ընկներ ծայրահեղականների ձեռքը: Թալանի գործում մեծ դեր էին խաղում նաև ադրբեջանամետ ռուս օդաչուներն ու հրամանատարները: Նրանցից էին՝ Վլ. Կրավցովը, որն օգնեց լուծարելու 82-րդ ավիագունդը (մոտ 30 կործանիչ բաժին հասավ Ադրբեջանին, իսկ հետո նա ստացավ գեներալի կոչում և դարձավ ադրբեջանական ՌՕՈՒ-ի հրամանատարը), Ա. Պլետը, որն ադրբեջանցիներին տեղեկացնում է գնդի դուրս բերման մասին, հետագայում ադրբեջանական ՌՕՈՒ-ի էսկադրիլիայի հրամանատար էր, Յու. Պախոմովը, որը մի քանի միլիոն դոլարի դիմաց վաճառում է 23-րդ մոտոհրաձգային դիվիզիայի ամբողջ սպառազինությունը և տեխնիկան, բարձրաստիճան զինվորական, գեներալ-լեյտենանտ Ս. ՌԼ. Բեպպաևը, որը Թիֆլիսից զենք էր փոխադրում Ադրբեջան:

Ա. Պլետը տասնյակ թռիչքներ էր կատարել, ռումբեր նետելով հայկական գյուղերի ու քաղաքների վրա, իսկ վերջում խոցվել և գերի է ընկել: Նման վարձկաններ շատ կային: Իհարկե, կային և հակառակ հայացքներ ունեցող սպաներ, որոնք ինքնաթիռներն ամեն կերպ շարքից հանում էին: Ադրբեջանը կարողանում է ձեռք գցել մի քանի տասնյակ ինքնաթիռներ: Ընդհանուր առմամբ ադրբեջանական ՌՕՈՒ-ն խորհրդային «մեծ եղբորից օժիտ» ստացան ավելի քան 150 մարտական և ռազմաուսումնական թռչող սարքեր: Ադրբեջանը, իհարկե, ուներ նաև քաղաքացիական ավիացիա: Հենց քաղաքացիական ուղղաթիռներից էին ձեռքի նռնակներով կատարվում ռմբահարումներ: Համեմատության համար նշենք, որ հայկական կողմը ստացել էր մոտ 25 թռչող սարք:

Հայկական ուժերը ևս անզեն չէին: Ճիշտ է, պատերազմը սկսել ենք որսորդական հրացաններով, սակայն ժամանակի ընթացքում զինվեցինք գրավված, գնված և այլ ճանապարհներով ձեռք բերված զենիթային թնդանոթներով, դյուրակիր և այլ ԶՀՀ-ներով:

1992 թ. փետրվարի 19-ին Ղարագալի գյուղի մոտ նորից հայտնվեցին ուղղաթիռները, այս անգամ ադրբեջանական օդուժի: Դրանք վարում էին նախկին ԽՍՀՄ-ի այլազգի օդաչուները, որոնք պայմանագրով ծառայության էին անցել Ադրբեջանի ԶՈՒ-ում: Նրանք օդային գրոհներով զգալի վնաս էին հասցնում և՛ ազատամարտիկներին, և՛ խաղաղ բնակչությանը: Ադրբեջանական բանակի ագրեսիան ուղեկցվում էր ուղղաթիռների օրեցօր աճող հարվածներով: 1992 թ. ապրիլի 8-ին ադրբեջանական ՌՕՈՒ-ն «ստանում են» իրենց առաջին ինքնաթիռը՝ «Սու-25»-ը: Գրոհիչի օդաչու, լեյտենանտ Վաղիֆ Բախշիար-օղլի Կուրբանովը ինքնաթիռը գողացել էր Սիտալ-Չայ քաղաքում տեղակայված ռուսական օդանավակայանից: Ավելորդ չենք համարում նշել, որ այս օդաչուին իր նախկին գնդի հրամանատարը բնութագրում էր որպես միջակից ցածր սպա: Ռուսական կողմն սկզբից ցույց է տալիս, որ անհանգստացած է այդ առումով: Հրաման էր տրված Վազիանի (Վրաստան) օդանավակայանից կործանիչներ պատրաստ պահել փախստական գրոհիչին խփելու համար, սակայն ամեն ինչ ձևական բնույթ էր կրում: Իսկ «Սու-25»-ն անցնում է ակտիվ գործունեության և մարտի 8-ից մշտական ռմբակոծում Ստեփանակերտը: Այդ մարտում Կուրբանովը միայնակ չէր. ամենաքիչը չորս մարտական ուղղաթիռ էր գրոհել հայկական գյուղերի վրա:

Հավանական է, որ հենց Կուրբանովն է մայիսի 9-ին խփել հայկական «Յակ-40» ինքնաթիռը, որը Ստեփանակերտից դուրս էր բերում ծերերին և վիրավորներին: Միևնույն ժամանակ Կուրբանովի զոհն էին դառնում խաղաղ բնակիչները: Միայն մայիսի 8-ին և 9-ին նրա հարձակումից զոհվեցին 30 և վիրավորվեցին 120 մարդ: Կուրբանովը Շուշիի ազատագրման հաջորդ օրը խնդիր է ստանում ղեկավարվող օդ-երկիր դասի հրթիռներով խոցել Ղազանչեցոց եկեղեցին, որտեղ գտնվում էին մեծ քանակությամբ հրետանային արկեր: Նպատակն էր դետոնացիայի միջոցով պայթյուն առաջացնել: Սակայն Ադրբեջանի ապագա հերոսը չի կարողանում արդարացնել իր ժողովրդի վստահությունը: 1992 թ. մայիսի 7-ին ադրբեջանական հետևակն ու զրահատեխնիկան երեք «Մի-24» մարտական ուղղաթիռների աջակցությամբ հարձակվում են Ստեփանակերտի հարավ-արևմտյան հատվածի պաշտպանական դիրքերի վրա: Հաջորդ օրը ցերեկը ադրբեջանական ուղղաթիռները, ներխուժելով Արցախի օդային տարածք, հարձակման են անցնում՝ ռմբակոծելով Մարտունու Ավդուռ, Մյուրիշեն, Նորշեն, Ասկերանի Շոշ և այլ գյուղերը:

1992 թ. մայիսյան փայլուն հաղթանակներից հետո թուրքերն ավելի անզուսպ դարձան: Չկարողանալով մարտադաշտում հաղթել, նրանք փորձում էին վրեժը լուծել խաղաղ բնակիչներից: Մայիսի ընթացքում ռմբակոծվել են Վերինշեն, Հայ Պարիս, Դահրազ, Ալբուլաղ և այլ հայկական գյուղեր, Ստեփանակերտ քաղաքը, Ասկերան և Մարտունի շրջկենտրոնները: Կուրբանովի «Սու-25»-ն այդ ժամանակներում իրեն զգում էր, ինչպես ամերիկյան «թռչող ամրոցները»՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ գերմանական ռազմաարդյունաբերական համալիրը ոչնչացնելիս: Արցախը հողին հավասարեցնելու խնդիրը կատարում էին նաև այլ ինքնաթիռներ: Կուրբանովի անպատիժ թռիչքը երկար չի տևում: Հունիսի 13-ին Ասկերանի բերդի մոտ հայ հրաձիգներից մեկն իր «Ստրելա-2Մ» դյուրակիր ԶՀՀ-ով խոցում է Կուրբանովի ինքնաթիռը: «Սու-25»-ի վրա «աշխատում» էր նաև Ալբերտ Դանիելյանի «ԶՍՈՒ-23-4 Շիլկա» զենիթային ինքնագնաց



*Ադրբեջանական ՕՄՕՆ*

կայանքը (ՁԻԿ): Կուրբանովի «վաստակն» արժանի գնահատական է ստանում:

1992 թ. մայիսի 13-ին Թիֆլիսից Նախիջևան էր թռչում ռուսական բեռնատար «Մի-26» ուղղաթիռը: Ուղղաթիռը Ղազախի մոտակայքում վթարի է ենթարկվում, անձնակազմը մայոր Սերգեյ Վոյեվոդինի հրամանատարությամբ զոհվում է: Քննությունն այդպես էլ չի կարողանում ստույգ պարզել վթարի իսկական պատճառները: 1992 թ. մայիսի 26-ին ադրբեջանցիները Աղդամի կողմից Մարտակերտի վրա են արձակում «երկիր-երկիր» տիպի հրթիռներ:

1992 թ. հուլիսին Մարտակերտի համար մղված մարտերում ադրբեջանական ավիացիան գործում էր կազմակերպված և գրագետ: Բարձունքների վրա տեղակայված հայկական բոլոր ուժերը ծանր կորուստներ են կրում ուղղաթիռների հարվածներից: Դրանց օդաչուները այլազգիներ էին և զգացվում էր աֆղանական փորձը: Ինքնապաշտպանական ուժերը կորցնում են զենիթային միջոցներ: Մարտերի ամբողջ ընթացքում ադրբեջանական օդուժը բացի ուղղաթիռներից կիրառում էր նաև «Սու-25» գրոհիչներ և ձևափոխված ուսումնամարզական «Լ-29» ինքնաթիռներ: Հայկական կողմն այդ ժամանակ ևս ունեցել էր հաղթանակներ: Հակառակորդը կորցրել էր որոշակի տեխնիկա, սակայն զգացվում էր զենիթային միջոցների պակաս: Հուլիսի 31-ին հակառակորդի ինքնաթիռները մեծ բարձրությունից ռմբակոծում են Ստեփանակերտ քաղաքը: Նույնը կրկնվում է օգոստոսի 5-ին:

1992 թ. օգոստոսից այդ ռմբակոծությունները թեժանում են: Մեծ վնասներ էին հասցնում հատկապես «ՌԲԿ-250» և «ՌԲԿ-500» ռմբային կասետները: 1992 թ. օգոստոսի 23-ին Ստեփանակերտ քաղաքի վրա գցված «ՌԲԿ-500» ռմբային կասետից զոհվում է 14 խաղաղ բնակիչ: Նույն ամսի 31-ին նետվում է 12 (այլ տվյալներով՝ 20) ննանաշիտ ռումբ, որոնցից զոհվում են 16 և վիրավորվում 121 մարդ: Մեկ շաբաթվա ընթացքում քաղաքի վրա նետվում է ավելի քան 20 տոննա ռումբ: Օգոստոսի 20-ին ադրբեջանական զինուժի կողմից Մարտակերտի Մեհմանա, Գյուլաթաղ և Հարությունագոմեր գյուղերի վրա լայնածավալ հարձակման ժամանակ կիրառվում էր նաև օդուժ: Նույն ամսի վերջերին Հայաստանից Արցախ տեղափոխվեցին երեք «Օսա» ՁՀՀ-ներ, որոնք կարող էին իրադրությունը կըտրուկ փոխել: Սեպտեմբերի 4-ին ադրբեջանցիներն Աղդամի կողմից մեծաքանակ ուժերով և միջոցներով հարձակվում են Մարտունու Ավդուռ, Հացի և Նորշեն գյուղերի վրա: Հիմնական ուժերին աջակցում էր նաև օդուժը:

Ականատեսների վկայությամբ՝ 1992 թ. հոկտեմբերի 28-ի երեկոյան անհայտ մակնիշի ռազմական ինքնաթիռը ռմբակոծել է Գանձասարի վանքը, մի քանի տասնյակ չղեկավարվող հրթիռներ արձակելով վանքի վրա: Նույն օրը և նախորդ երեկոյան հակառակորդի օդուժը մի քանի անգամ ռմբակոծել էր նաև Ստեփանակերտը:

1993 թ. ապրիլի 7-ին ադրբեջանական ինքնաթիռը 500 կիլոգրամանոց ռումբ է նետել Մարտունու շրջկենտրոնի վրա: 1993 թ. օգոստոսի 19-ին երեք ադրբեջանական ինքնաթիռներ հարվածներ են հասցնում Կապան քաղաքին: Իսկ օդաչուների ռմբահարության սխալների պատճառով 1994 թ. մարտի 25-ին երկու ինքնաթիռ Հորադիզում հարվածում են նաև ադրբեջանական դիրքերին: 1994 թ. ապրիլի 13-ին մի քանի ադրբեջանական ինքնաթիռներ բազմիցս խախտելով օդային սահմանը ռմբակոծում են Ստեփանակերտը և այլ բնակավայրեր: Այդ օրն այն ոչ եզակի օրերից էր, երբ կատարվում էին անգամ մի քանի տասնյակ մարտական թռիչքներ: Նման ռմբակոծությունները դարձել էին սովորական:

«ՄիԳ-25ՌԲ» ռմբակոծիչները 1994 թ. ռմբակոծել են Հադրութ և Ստեփանակերտ քաղաքները, և չնայած մեծ ավերածություններին, այնուամենայնիվ, մեծ արդյունավետություն չեն ստացել: Մի անգամ նույնիսկ օտարազգի օդաչուները այսպիսի մարտավարություն են փորձարկել. վերևից բավականին բարձր և արագ թռչող երկու «ՄիԳ» են մոտենում Ստեփանակերտին, միևնույն ժամանակ բավականին ցածր թռչելով քաղաքին են մոտենում նաև երկու այլ, հավանաբար «Սու-24» (կամ՝ «Սու-25») ինքնաթիռներ: Դա ծուղակ էր ՀՕՊ-ի համար, բայց «ներքևի» ինքնաթիռները հայտնաբերվում են, իսկ «վերևի» ինքնաթիռները չեն կարողանում դիպուկ ռմբանետում կատարել:

Մինչև հրադադարն ադրբեջանական ինքնաթիռները մշտականորեն հարվածում էին Ստեփանակերտ քաղաքին: Եթե անգամ ճակատներում տիրեր հարաբերական անդորր, միևնույն է, մայրաքաղաքը պիտի ենթարկվեր հարվածների: Քաղաքը ենթարկվել է ոչ միայն ինքնաթիռների, այլ նաև հրետանու ակտիվ ռմբահարմանը: 1991 թ. վերջից մինչև 1994 թ. գարունը Ստեփանակերտ քաղաքի վրա նետվել են «Գրադ» համազարկային կայանքի ավելի քան 20000, «Ալազան»-ի մոտ 2700 հրթիռներ, ավելի քան 1900 հրետանային այլ արկեր, 180 ռմբային կասետ և ավելի քան 100 հատ 500 կիլոգրամանոց ռումբեր, այդ թվում նաև վակուումային ռումբեր: Ադրբեջանական օդուժի կատարած մարտական թռիչքները մոտենում են 10.000-ի, ինչն աննախադեպ է այս տարածաշրջանի համար: Հակառակորդն անպատիժ չէր գործում. որոշ ինքնաթիռներ խոցվել էին, իսկ որոշ հարվածներ էլ խափանվել էին: Ինքնապաշտպանական ուժերը ոչ միայն սովորել էին ժամանակին հայտնաբերել, այլ նաև զին-

վում էին համապատասխան միջոցներով: 1992 թ. աշնանը Արցախում արդեն հայտնվել էր «Կրուգ» ԶՀՀ-ն, որը զգալիորեն ավելի հեռահար և բարձրահար էր, քան «Օսա»-ն, որից ադրբեջանական օդաչուները խուսափելով թռիչքների մարտավարությունը փոխել էին: «Կրուգ»-ի մասնագետներ ևս չկային, սակայն հայ հակաօդայիններ, որոնցից շատերը բարձրագույն տեխնիկական կրթություն ունեին, յուրացրեցին համալիրը մի քանի շաբաթում և ինքնաթիռներ էին խոցում:

Դեռ 1992 թ., երբ առաջին անգամ ռմբակոծվեց Կապանը, այդ ուղղությամբ կազմակերպվեց ՀՕՊ-ի միջոցների տեղադրություն: Մասնավորապես՝ մի քանի 57 մմ-ոց «Ս-60» հրանոթներով սարքավորվում էր համալիր:

Ադրբեջանական ինքնաթիռների խոցման դեպքերի վերաբերյալ տարբեր աղբյուրներ տալիս են տարբեր տվյալներ: Ադրբեջանական կողմը խոստովանել է 10 կորցրած ինքնաթիռի և ուղղաթիռի մասին: Հեղինակավոր ռուս փորձագետ Ա. Խրամչիխինը բերում է 20-21 ադրբեջանական թռչող սարքերի խոցման փաստ: Սակայն մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դրանք մոտ են 30-ին:

| Հ/Հ | Տեղը, ամսաթիվը | Խոցման միջոցը | Օդանավի մակնիշը/տեսակը |
|---|---|---|---|
| 1 | - 1989 թ. հուլիսի 14 | դյուրակիր ԶՀՀ | «Մի-8» |
| | Շուշի, հունվարի 28 | դյուրակիր ԶՀՀ | «Մի-8» |
| 2 | Ղաջար-Կարմիր Շուկա միջտարածում, 1992 թ. ապրիլի 4 | «Շիլկա»[1] | ուղղաթիռ |
| 3 | - ապրիլի 8 | «Շիլկա» և «Ստրելա-2Մ» | «Մի-24» |
| 4 | - 1992 թ. ապրիլ | ՀՄՄ-ի, «Շիլկա» | երկու ուղղաթիռներ |
| 5 | Մարտունի, մայիսի 15 | «Ստրելա-2Մ» | «Մի-8» |
| 6 | Ջլդրան, օգոստոսի 20 կամ 31 | - | «ՄիԳ-25ՊԴ»[2] |
| 7 | - օգոստոսի 25-ին և 27-ին | «Օսա-ԱԿ» | երկու ինքնաթիռներ, մեկը՝ Սու-24 |
| 8 | - սեպտեմբերի 4 | «Օսա-ԱԿ» | «ՄիԳ-21» կամ «Սու-25» |
| 9 | - սեպտեմբերի 17 | «Օսա-ԱԿ» | «Մի-24» |
| 10 | Ստեփանակերտ, սեպտեմբերի 20 | «Օսա-ԱԿ» | ինքնաթիռ |
| 11 | Լիսագոր, հոկտեմբերի 5 | «Օսա-ԱԿ» | ինքնաթիռ |
| 12 | Լաչին, հոկտեմբերի 8 | «Ստրելա-2Մ» | ուղղաթիռ |
| 13 | Մալիբեյլի, հոկտեմբերի 10 | «Օսա-ԱԿ» | «Սու-24» |
| 14 | Մարտակերտ, հոկտեմբերի 28 | «Օսա-ԱԿ» | «Մի-24» և «Լ-39» |
| 15 | - հոկտեմբերի 31 | «Օսա-ԱԿ» | ինքնաթիռ |
| 16 | Մարտակերտ, հոկտեմբերի 31 | «Ստրելա-2Մ» | ինքնաթիռ |
| 17 | Մարտունի, դեկտեմբերի 6 | «Ստրելա-10» և «Շիլկա» | «Սու-25» |
| 19 | Առաջաձոր, դեկտեմբերի 6 | «Օսա-ԱԿ» | «Մի-24» |
| 20* | Վաղենիս, դեկտեմբերի 11 | - | «ՄիԳ-21» |
| 21 | Առաջաձոր, 1993 թ. հունվարի 14 | «Օսա-ԱԿ» | ինքնաթիռ |
| 22 | Մարտակերտի ճակատ, հունվարի 15 | «Օսա-ԱԿ» | «ՄիԳ» կործանիչ |
| 23 | Մարտակերտի ճակատ, հունվարի 15 | դյուրակիր ԶՀՀ | ինքնաթիռ |
| 24 | Մարտակերտի ճակատ, հունվարի 15 | «Օսա-ԱԿ» | ինքնաթիռ |
| 25 | - հունվարի 20 | «Կրուգ» | «Սու-25» |
| 26** | Կուսապատ, մարտի 20 | «Օսա-ԱԿ» | ուղղաթիռ |
| 27 | Հարավ-արևելյան ճակատ, 1994 թ. հունվարի 12 | «Կրուգ» | ինքնաթիռ |
| 28 | - հունվարի 23 | - | «Սու-25» |
| 29 | Հարավ-արևելյան ճակատ, հունվարի 31 | «Ս-60» | «ՄիԳ-21» |
| 30 | - փետրվարի 2 | «Ս-60» | «Սու-25» |
| 31^ | - փետրվարի 17 | «Իգլա» և «Օսա-ԱԿ» | «ՄիԳ-21»*** |
| 32 | Մարտակերտ, Ջալլու, ապրիլի 13 | «Իգլա» | ուղղաթիռ |
| 33 | Գորիս-Լաչին հատված, ապրիլի 23 | «Կրուգ» | «ՄիԳ-25ՌԲ»**** |

** Ադրբեջանական ՌՕՈՒ-ն 1992 թ. մայիս-հոկտեմբեր ամիսներին կորցրել են 14 թռչող սարք, որից 11-ը միայն հունիսի 13-ից մինչև օգոստոսի վերջը:*

*** 1993թ. հուլիս-հոկտեմբեր ամիսներին Արցախի տարածում հիմնականում «Օսա-ԱԿ» համալիրով ոչնչացվել է չորսական ինքնաթիռ և ուղղաթիռ: Դրանցից մեկը ոչնչացվել է հունիսի 26-ին Մարտակերտի համար մղված մարտերի ժամանակ, իսկ մյուսը եղել է «Մի-24» ուղղաթիռ և ոչնչացվել է սեպտեմբերի 3-ին:*

**** Օդաչուն՝ թաթար վարձկան Մ. Իշկևիչը զարմացել էր, որ իրեն խոցել են: Լինելով հրահանգիչ և սովորեց-*

1. «Շիլկա» ԶԻԿ-երը բավականին արդյունավետ են կիրառվել Արցախյան գոյամարտում, դրանց քանակը մեծ չի եղել, որոնցից մեկը գրավվել էր ադրբեջանցիներից:
2. Օդաչուն Յու. Բելիչենկոն էր (15-րդ մարտական թռիչքը):

*նելով այլ վարձկանների նա իր թռիչքով փորձել էր ցույց տալ, որ հայերը չեն կարող խոցել իրենց: Ապշած էր, որ այդ սառնամանիքին լեռան վրա նստած շարքայինը ժամերով հերթապահություն է կատարել: Հետո պարզվեց, որ այս վարձկանը ԽՍՀՄ-ի ժամանակ եղել էր հայկական ՌՕՈՒ վարչության պետի տեղակալ գնդապետ Բ. Բաբայանի աշակերտը:*

***** Ստեփանակերտի օդային տարածք մտան միանգամից յոթ ինքնաթիռներ: ՄիԳ-երը շատ մեծ արագությամբ էին անցնում (650-700 մ/վ) և միշտ չէ, որ հաջողվում էր նրանց խոցել, սակայն նրանք էլ չէին կարողանում իրենց խնդիրը կատարել: Օդաչուն կարողացավ անկարգելով իջնել և ազատվել հայկական կողմի հետապնդումից: Սա փառահեղ հաղթանակ էր, և առանձնահատուկ պետք է նշել, որ «Կրուգ» ԶՀՀ-ն առաջին անգամ կիրառվել է հենց Արցախյան գոյամարտում և շնորհիվ հայ մասնագետների փայլեց խոցելով աշխարհի ամենահզոր ինքնաթիռներից մեկը:*

*^ Այստեղ, իհարկե, նշված չէ 1994 թ. մարտի 17-ին «Կրուգ» համալիրով Մեհտիշեն գյուղի մոտակայքում սխալմամբ խոցված իրանական «Ց-130» ռազմատրանսպորտային ինքնաթիռի մասին:*

***Նշված ինքնաթիռների և ուղղաթիռների տեսակների և ամսաթվերի մեջ կարող են լինել որոշակի անճշտություններ, որոնք հիմնականում կապված են հակամարտության և ռուսական կողմի տեղեկատվության հրարամերժությունից: Հաճախ, քանի որ խոցված օդանավերը հասցնում էին անցնել ռազմաճակատի գիծը, հնարավոր չէր լինում ստույգ ճշտել տեսակը: Հայկական կողմից, որպես զենիթային միջոցներ, հիմնականում օգտագործվել են խորհրդային արտադրության «Ստրելա-2Մ», «Ստրելա-3» և «Իգլա» ԿԶՀՀ-ներ, «Շիլկա» ԶԻԿ-ներ, ինչպես նաև «Օսա», «Ստրելա-10» և «Կրուգ» ԶՀՀ-ներ:***




*1. Մի 8, 2. Մի 24, 3. Մի 26, 4. Մի 8*

**ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արցախյան շարժումը խեղդելու ճանապարհներից մեկը ադրբեջանական ղեկավարության կողմից ընտրվել էր Արցախի ցամաքային և օդային ճանապարհների փակումը: Շատ դժվարին ժամանակներ էին, Արցախ հասնելը ուխտագնացության նման մի բան էր, որից վերադառնալը գրեթե անհնար էր:

Քաղաքացիական ավիացիայի «Էրեբունի» օդանավակայանի օդաչուների մի մասը դեպի Արցախ էր թռչում անվտանգության աշխատակիցների հսկողության, Մոսկվայի արգելքների և հակառակորդի դարանակալ գնդակների տակ: Մինչ 1988 թ. դեկտեմբերը թռիչքներն իրականացնում էին հիմնականում «Էրեբունի»-ի չորս-հինգ «Մի-8Տ» ուղղաթիռները, տասը-տասներկու փոքրիկ՝ «Ան-2» և մի քանի «Յակ-40» ինքնաթիռները: 1988 թ. մայիսից գյուղատնտեսական «Ան-2» ինքնաթիռները հաճախ թռչում էին նաև Գորիսից ու Սիսիանից:

«Մի-8» ուղղաթիռները և «Յակ-40» ինքնաթիռները հասցնում էին օրական մի քանի թռիչք կատարել (ընդհանուրը՝ օրական մի քանի տասնյակ թռիչք): Մեկ անգամ չէ, որ քաղաքացիական ուղղաթիռների վրա կրակ է բացվել և՛ գետնից, և՛ մարտական ուղղաթիռներից: Ուղղաթիռների դեմ պայքարելու համար սկզբից խորհրդային հրամանատարները Կիրովաբադի (Գանձակ, այժմ՝ Գյանջա) ավիաբազայից հատկացրել էին մի քանի «Մի-24» մարտական ուղղաթիռներ:

1988 թ. նոյեմբերին իրավիճակը լարված էր նաև Կիրովաբադում, հայկական թաղամասի բնակչությանը սպառնում էր կոտորածը: Արդեն տեղի էին ունեցել ընդհարումներ: Հարկավոր էր դեսանտ հասցնել և իրավիճակը ճշտել: Հայ օդաչուներն ուղղաթիռով գազամուղի ստուգման պատրվակով մի քանի րոպեով վայրէջք են կատարում քաղաքի հայկական թաղամասի հայկական եկեղեցու բակում: Օդանավակայանի կարգավարը թույլ չի տալիս հայ օդաչուներին թռիչք կատարել, սակայն օդաչուները վերցնելով մի քանի վիրավորի օդ են բարձրանում: Նրանց թռիչքը փորձում են կանխել մարտական ուղղաթիռներով: Սակայն հայերը մի կերպ սողոսկում են:

Երկրաշարժից հետո այդ թռիչքներն առժամանակ դադարեցին, քանի որ աղետի գոտու բեռնափոխադրումները մեծացրել էին հայ օդաչուների ծանրաբեռնվածությունը: Հատկապես ծանրաբեռնված էին ուղղաթիռների օդաչուները: Նրանց օգնելու համար Վրաստանի, Ուզբեկստանի, Ղազախստանի ԽՍՀ-ներից և Ռուսաստանի ԽՖՍՀ-ից Հայաստան են տեղափոխվել ուղղաթիռներ՝ իրենց անձնակազմերով:

Տասնյակ անգամներ հայ օդաչուներն իրենց բացառիկ մասնագիտական ունակությունների և հնարամտության շնորհիվ փրկվել են մահից: Անվտանգության նկատառումներով նրանք ձգտում էին թռիչքները

կատարել գիշերային ժամերին և վատ եղանակային պայմաններում (անձրև, ձյուն, մառախուղ, ձմի և այլն): Առանձին դեպքերում բավական էր մեկ անգամ հայկական ուղղաթիռը վայրէջք կատարեր ինչ-որ հարմարեցված վայրում, որպեսզի այն ռմբակոծվեր տարբեր զինատեսակներով:

Գործը ծայրահեղությունների էր հասնում. խորհրդային ավիացիայի փորձառու հրամանատարներին զարմացնում էր Արցախի բարդ լեռնաանտառային տեղանքում հայ օդաչուների գիշերային թռիչքներ կատարելու կարողությունը: Պետք է նշել, որ մեր օդաչուների մարտավարությունը հիմնավորված էր. ադրբեջանցիները հիմնականում քնած էին լինում, երբ մեր ուղղաթիռներն անցնում էին նրանց գլխավերևով, կամ եղանակը նրանց խանգարում էր խոցել:

Հայտնի են զարմանալի դեպքեր, երբ՝

* վայրէջքի տարածքի բարձրությունը ընդամենը 30-50 սմ-ով էր ավել լինում ուղղաթիռի վերին պտուտակների բարձրությունից,

* վայրէջք կատարած ուղղաթիռին մոտենալիս՝ հենց օդաչուների աչքի առաջ, վիրավորներով լի երկու մեքենա պայթում են ականների վրա,

* խորհրդային ռազմական ուղղաթիռներից խուսափելու համար մեր օդաչուները ծանրաբեռնված ուղղաթիռով մտնում են ամպրոպավտանգ ամպամածության մեջ: Հետևող ռազմական օդաչուները չեն համարձակվում կրկնել հայերի խենթությունը և վերադառնում են ետ,

* ուղղաթիռի անձնակազմը, ճկատելով գետնից հրթիռի արձակումը, ուղղաթիռը զիգզագաձև ուղղել է ամպրոպի գոտի: Արձակված հրթիռը կայծակից պայթում է:

Սակայն ամեն անգամ չէ, որ հայ օդաչուների հնարամտությունը կամ մասնագիտական ունակությունները կարող էին երաշխավորել նրանց անվտանգությունը:

Ազատագրական ջոկատներն ու Արցախի ժողովուրդը կտրված էին արտաքին աշխարհից: Միակ կապն արտաքին աշխարհի հետ ուղղաթիռներն էին, որոնց վայրէջքը տեղացիներին միայնակ և լքված չլինելու հավատ էր ներշնչում: Հակառակորդը ջանք չէր խնայում թռիչքները խափանելու համար, քանի որ բեռներն ունեին ոչ միայն կենսական, այլ նաև հոգեբանական նշանակություն: Ա. Տեր-Թադևոսյանի խոսքերով՝ «Օդաչուներին մենք սպասում ու ընդունում էինք, ինչպես Աստծո»: Վերադարձին օդանավերը հիմնականում մարտական գործողությունների գոտուց դուրս էին բերում խաղաղ բնակիչների: 1989 թ. Արցախից, կրակի ու ռմբակոծության տակից դուրս է բերվել ավելի քան 5 հազար ծեր, երեխա, կին ու վիրավոր:

1989 թ. նոյեմբերի 5-ին տեխնիկական անսարքության պատճառով Երևանից նոր օդ բարձրացած «Մի-2»-ը վթարային վայրէջք է կատարում Արտաշատի Մխչյան գյուղի մոտակայքում: Ինքնաթիռը բեռնված էր այլուրի պարկերով, որի մեջ զենք կար:

1990 թ. ապրիլին Մարտակերտի բնակիչները դաշտում սարքավորել էին թռիչքադաշտ «Մի-2»-ի համար: Ադրբեջանական ՕՄՕՆ-ը և խորհրդային զորքերը




փակում էին այդպիսի թռիչքադաշտերը: Մասնավորապես արդեն մայիսին ադրբեջանցիները փակում են Մարտակերտի թռիչքուղին:

1990 թ. օգոստոսի 1-ին Երևան-Ստեփանակերտ թռիչքի ժամանակ հակառակորդի զենիթային հրթիռից Լաչինի շրջանի Ֆարրաջ գյուղի մոտակայքում խոցվում է «Յակ-40» ինքնաթիռը, անձնակազմը զոհվում է:

1990 թ. հոկտեմբերի 17-ից Արցախի միակ օդանավակայանը գտնվում էր ադրբեջանական ՕՄՕՆ-ի հսկողության տակ, որի պատճառով հայկական կողմը հրաժարվում է «Յակ-40» ինքնաթիռների կիրառումից: Թեև ուղղաթիռները հին էին և աշխատում էին գերբեռնվածության պայմաններում, սակայն հայ օդա-

չուներն ուղղաթիռներով 1990 թ. կատարել են 5200 ժամ թռիչք:

Արցախ թռչելը դյուրին գործ չէր նաև փաստաթղթերի ձևակերպման առումով: Հաճախ թռիչքը հիմնավորելու պատվերն անհրաժեշտ էր ձևակերպել տարբեր պետական հիմնարկների վրա: Թռիչքները պետք էր համաձայնեցնել օկրուգի հակաօդային պաշտպանության (ՀՕՊ) հրամանատարության հետ, ուստի անպայման պետք էր պահպանել օրինական կողմը: Օդաչուները թռչում էին և հասցնում կենսական կարևոր բեռները: Ուղղաթիռները բարձում էին սահմանվածից կրկնակի ավելի բեռ: Եղել է դեպք, երբ 25-30 տեղանոց «Յակ-40» ինքնաթիռը Ստեփանակերտի օդանավակայանից վերադարձել է 86 ուղևորով: Հայկական կողմի առաջին ուղղաթիռի կորուստը, չնայած առանց մարդկային զոհերի, սակայն եղել է հենց այդ պատճառով: Այդ օրը (1991 թ. փետրվարի 26) Շահումյանից մեծ թվով վիրավորներ էին տեղափոխվում: Ուղղաթիռում այնքան մարդ էր խցկվել, որ օդաչուները ստիպված պատուհանից են նստում իրենց տեղերը, ինչը սովորական երևույթ էր դարձել: Ճանապարհի կեսին ուղղաթիռն այլևս չի ենթարկվում ղեկերին, բայց հրամանատարն իրեն չի կորցնում և փորձում է մեքենան իջեցնել ավելի քան 3000 մ ծովի մակարդակից բարձրություն ունեցող տեղանքում, ինչն ինքնին հերոսություն է, քանի որ ուղղաթիռը նման բեռով և նման բարձրության վրա չի իջնում, այլ ընկնում է:

Ցավոք, հաջորդ կորուստն առանց մարդկային զոհերի չեղավ: 1991 թ. հունիսի 14-ին ուղղաթիռը կործանվում է դիպչելով բարձր լարման էլեկտրալարերին՝ Երևանի կենդանաբանական այգու մոտ:

1991 թ. վերջին հայկական կողմը լիովին հրաժարվում է նաև «Ան-2»-ից, որի հիմնական պատճառը հակառակորդի ՀՕՊ-ի ակտիվությունն էր: Ի դեպ, պատերազմի ընթացքում «Ան-2»-ի կորուստ չի եղել, թեև եղել են վնասվածքներով վայրէջք կատարելու դեպքեր: Ընդհանուր առմամբ այս փոքրիկ ինքնաթիռներն Արցախի օդային ճանապարհին աշխատել են մի քանի հազար ժամ և զգալի զենք ու զինամթերք տեղափոխել:

1991 թ. դեկտեմբերի վերջին ՕՄՕՆ-ականները, ծեծի ենթարկելով հայ օդաչուներին, ուղղաթիռ են առգրավում: Այդ պատճառով հայ օդաչուները, խուսափելով օդանավակայանից, վայրէջք էին կատարում հարմարեցված տեղերում: Այդպես աստիճանաբար հայկական կողմը զրկվում է օդային այլ միջոցներից, և մնում են միայն ուղղաթիռները:

Տասից էլ քիչ «Մի-8Տ» ուղղաթիռները քանակապես և որակապես ի վիճակի չէին դիմանալու 1988-90 թթ. թռիչքների ինտենսիվությանը: Օդանավակայանի ղեկավարությունը դիմում է կառավարությանը, և մեծ դժվարություններով ՌԴ-ից գնվում է հինգ նոր «Մի-8 ՄՏՎ-1» ուղղաթիռ: Նոր մեքենաները 3-4 տոննայի փոխարեն կարող էին 5-5,5 տոննա բեռ կրել: Օդաչուները նախկին խորհրդային ավիաբազայում ծառայող հայերի օգնությամբ հատուկ վարժանքներ էին անցնում ուղղաթիռներից զենքի կիրառման և հակառակորդի զենիթային միջոցներից պաշտպանվելու համար:



*Մեռնիք*

Խոջալուի կրակակետի լռեցման համար հարկավոր էին զենքի, զինամթերքի, վառելանյութի և այլ պիտույքների անհրաժեշտ պաշարներ: Ուղղաթիռների անձնակազմերը գիտակցում էին Արցախի միակ օդանավակայանի ազատագրման կարևորությունը: Նախատեսված բեռները տեղ էին հասցվում՝ հոգնածությունը, լարումը և հակազդեցությունը արհամարհելով:

1992 թ. փետրվարին Խոջալուի կրակակետի լռեցումից հետո օդանավակայանն անցնում է ինքնապաշտպանական ուժերի հսկողության տակ և վերսկսվում են «Յակ-40» ինքնաթիռների թռիչքները: Դրանք կապված էին անասելի դժվարությունների և վտանգների հետ: Հակառակորդի զենիթային պաշտպանության հակազդեցությունից խուսափելու համար ինքնաթիռները Ստեփանակերտին մոտենում էին 5000 մ բարձրության վրա, իսկ հետո սկսում փոքր շառավղի զսպանակավոր պտույտներով իջնել: Նույն ձևով վեր էին բարձրանում և ուղղվում դեպի Երևան: Հնարն այնքան էլ դյուրին չէր, իսկ այս հատուկ մարզավարությանը տիրապետում էին ոչ բոլոր օդաչուները:

Շուշին ազատագրելու գործողության նախապատրաստման ընթացքում կատարվում էր մինչև 15 թռիչք/օր: Մարտի 12-ից մինչև մայիսի 5-ը կատարվել է 690-ից ավելի ինքնաթիռաթռիչք: Արցախ է տեղափոխվել ավելի քան 2700 տոննա բեռ: Շուշիի ազատագրման գործողությունը մշակելիս ուղղաթիռների միջոցով կատարվել է նաև հետախուզություն:

1992 թ. հուլիսին, Շահումյանի անկումից հետո, այնտեղ մնացած ինքնապաշտպանական ուժերին դուրս բերելու գործում ևս ներգրավվել են ուղղաթիռներ, որոնք գնալիս սողոսկել են Սարսանգի ջրամբարի վրայով, սակայն վերադառնալիս վնասվել և հրաշքով են տեղ հասել:

Պատերազմի ամենաակտիվ փուլերից էր 1992 թ., երբ սպառազինությամբ գերազանցող ադրբեջանցիները, իսկական պատուհաս դարձած ռեակտիվ համազարկի «Գրադ» կայանքներով, հրթիռակոծում էին հայկական բնակավայրերը: Ինքնապաշտպանական ուժերի հրամանատարությունն ուղիներ էր որոնում հակահարված տալու համար, անհրաժեշտ էր նման մի համակարգ Արցախ տեղափոխել: Մի քանի տարբե-

րակների քննարկումից հետո, ի վերջո, երկրի ղեկավարությունը Մոսկվայից ժամանակավոր խնդրում է քսան տոննա բեռնատարողություն ունեցող երեք «Մի-26» բեռնատար ուղղաթիռներ:

Հենց առաջին թռիչքի ժամանակ, երբ Ստեփանակերտ էին տեղափոխում ալյուր, հետդարձին ադրբեջանցիները փորձում են խփել ուղղաթիռը, սակայն միայն կարողանում են վնասել: Գորիսի օդանավակայանում տեխնիկները վերանորոգում են ուղղաթիռը, որի հաջորդ թռիչքով Վարդենիսից «Գրադ» կայանքը հասցվում է Քոլատակ: Երկրորդ կայանքը Շահումյան է հասցվում, սակայն հետդարձին (ապրիլի 3-ին) «Մի-26»-ը խփվում է «Իգլա» ԿԶՀՀ-ով և վայր ընկնում Օմար լեռան մոտակայքում, ավելի քան 2800 մետր բարձրության վրա: Ուղղաթիռի մեջ կային ծերեր, երեխաներ ու վիրավորներ: Մեկ մետրանոց ձյան մեջ հայկական ուղղաթիռներն իրականացնում են փրկարարական գործողությունը: Դուրս է բերվում 39 մարդ, սակայն դեպքի վայրում մնում են վեց վիրավորներ: Ամբողջ փրկարարական գործողության ընթացքում օդից հակառակորդի դիրքերին հարվածելով աջակցում էին երկու «Մի-24»-եր: Հաջորդ առավոտյան «Սպիտակ» փրկարարական ջոկատի օգնությամբ դուրս են բերվում մյուսները, որոնցից երկուսը սառել էին, քանի որ գտնվել էին ուղղաթիռից հեռու: Իսկ մոտիկ ընկածները կենդանի էին մնացել՝ շարժիչների տաքության շնորհիվ:

Մարտի 27-ին «Յակ-40» ինքնաթիռը խափանված, անսարք և գետնից դյուրակիր ԶՀՀ-ով խոցված մեկ շարժիչով հրաշքով վայրէջք է կատարում «Էրեբունի» օդանավակայանում:

Մայիսին ունենում ենք միանգամից երկու կորուստ՝ բարեբախտաբար առանց մարդկային զոհերի: Դրանցից առաջինը տեղի է ունենում մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրման օրը: Քելբաջարի մոտակայքում ադրբեջանական «Սու-25»-ը խոցում է վերադարձող «Յակ-40»-ը: Շարքից դուրս են գալիս շարժիչները, խափանվում է հիդրոհամակարգը, և նույնիսկ անիվները չեն բացվում: Օդաչուն սկզբից որոշում է վայրէջք կատարել Ջերմուկում, սակայն հետո հասկանում, որ թռիչքուղին հարմար չէ: Մեծ ջանքերի գնով օդանավն ուղղում է դեպի Սիսիանի օդանավակայան և առանց անիվների վայրէջք կատարում: Օդանավի ֆյուզելյաժը վերևից հիմնովին այրվել էր հրդեհից, սակայն փորձառու օդաչուն այնպես է վայրէջք կատարում, որ ներքևի մասը սահնակի դեր է կատարում: Ինքնաթիռի պոչը պոկվում է, «Յակ-40»-ը գրեթե լիովին կործանվում է, սակայն անձնակազմը և ուղևորները փրկվում են: Սա, թերևս, միակ օդային մարտն է Արցախյան գոյամարտի ընթացքում: Մեր տեսակետը հիմնված է օդաչու Հ. Դավթյանի խոսքերի վրա: Կա նաև ԶՀՀ-ով խոցվելու վարկած:

Մայիսի 15-ին «Գրադ»-ի արկը դիպչում է զինամթերք տեղափոխող «Յակ-40»-ին, որն արդեն վայրէջք էր կատարել: Հրդեհից կարող էին տուժել մյուս ինքնաթիռները, և օդաչուները վտանգի գոտում հայտնված օդանավը հեռացնում են կառամատույցի մյուս ծայրը:

Լաչինի մարդասիրական միջանցքի բացումից հետո նորից կարևոր բեռներ տեղափոխողներ դարձան ուղղաթիռները, «Յակ»-երն այլևս այն ինտենսիվությամբ չէին թռչում Արցախ, սակայն ակտիվորեն ներգրավված էին վիրավորների տեղափոխման գործում:

1992 թ. հունիսի 13-ին Քոլատակի մոտ վարվող մարտական գործողությունների ժամանակ խոցվում է հայկական «Մի-24» ուղղաթիռը, իսկ սեպտեմբերի 29-ին՝ Շահումյանի պարտիզանական ջոկատների համար զենք տանելու ճանապարհին ևս մեկ ուղղաթիռ: 1993 թ. ապրիլի 17-ին այսպիսի մի թռիչքի ժամանակ հրթիռով խոցված ուղղաթիռում զոհվում է Շահումյանից վերադարձող ինը ազատամարտիկ, այդ թվում՝ Շահեն Մեղրյանը: Իրենց ընկերների դիակները հակառակորդին չթողնելու համար՝ հաջորդ օրը երկու ուղղաթիռներից բաղկացած խումբը մեկնում է վթարի վայրը: Գիտակցելով, որ հակառակորդի ՀՕՊ-ի միջոցներն իրենց սպասելու են, ուղղաթիռներից մեկը ստանձնում է «թիրախի» դեր, որպեսզի մյուսը դուրս բերի զոհվածների դիակները:

Ընդհանուր առմամբ քաղաքացիական ավիացիայի օդաչուները միայն տրանսպորտային նպատակներով կատարել են ավելի քան 3700 թռիչք, ընդհանուր 11000 թռիչքաժամով, որից միայն 1500-ը գիշերային ժամերին, իսկ մնացածը՝ հիմնականում բարդ օդերևութաբանական պայմաններում: (Այս տվյալները վերցված են «Էրեբունի» օդանավակայանի գրանցման մատյաններից: Հաշվառված չեն մատյաններում Գորիսի կամ Կամոյի գրանցումով դեպի Արցախ կատարված թռիչքների տարբերությունը կազմող ժամերը):

## ՀԱՅԿԱԿԱՆ ՌՕՈՒ

ՀՀ ռազմական ավիացիայի մասին նշելիս պետք է սկսենք քաղաքացիական ավիացիայից, քանի որ նույն օդաչուներն ամեն ինչ անում էին, որպեսզի կատարեին նաև մարտական թռիչքներ: Անօրինական ճանապարհով ձեռք էին բերել երկու «Մի-24» ուղղաթիռ, սակայն հետագայում այդ մեքենաները հետ են վերադարձել ռուսական կողմին՝ առանց իսկ մարտական կիրառության: 1991 թ.-ից հայ օդաչուների համառ ջանքերի շնորհիվ ռուսները մեկ «Մի-8» մարտական ուղղաթիռ են տրամադրում, որով քաղաքացիական օդաչուները կատարում են մարտական թռիչքներ: Դեպի Նախիջևան տարվող խորհրդային «Մի-24»-երը ժամանակավոր վայրէջք են կատարում Երևանում և քաղաքացիական ավիացիայի աշխատակիցներն առգրավում են դրանք: Շատ օդաչուներ իրար հերթ չէին տալիս թվարկված ուղղաթիռներով մարտական թռիչքների նրբությունները յուրացնելու և կատարելու համար: Սկզբից Վարդենիսի Զոդի կողմում ադրբեջանական մի նշանակետի էին հարվածում, որը դառնում է բոլոր նորուսույց օդաչուների հիմնական նշանակետը: Մի քանի ամիս ծառայելուց հետո նվիրած «Մի-8»-ը, որին փաղաքշական «Մուկ» էին անվանում, շարքից դուրս է գալիս: Հետո պարզվում է, որ այն նախատեսված էր ընդամենը մի քանի թռիչքի համար:

1992 թ. փետրվարին հայկական ինքնապաշտպանական ուժերին օգնելու համար «Մի-24»-երով հարվածել են Շուշիին: Բոլոր ձեռք բերված ուղղաթիռ-



*Թամերլան Կարաև*

ներն օրինականացնելու համար Մոսկվա են գնում հայկական ավիացիայի ներկայացուցիչները: Ինչպես հաճախ լինում էր, կոնյակներով ու այլ կաշառքներով հարցը լուծվում է: Ահա այսպես տարբեր եղանակներով կազմակերպվում էին մարտական թռիչքներ: Ադրբեջանական հրոսակները բազմիցս Նախիջևանում, Օրդուբադում, Շուշիում, Ջոդի հակառակ կողմում իրենց վրա զգում են այդ հարվածների ուժգնությունը: Քաղաքացիական ավիացիայի նվիրյալների այս և նախկինում նշված սովորական թռիչքները հիմնականում կազմակերպվում էին Վազգեն Սարգսյանի բանավոր կարգադրությամբ, առանց բյուրոկրատիկ բարդությունների: Այս ամենը, իհարկե, շատ ոգևորող էր, սակայն հարկավոր էին կանոնավոր ուժեր, ռազմական ավիացիայի հիմքերը դեռ դրված չէին:

1992 թ. հունվարից ՀՀ Պաշտպանության նախարարության կազմում ստեղծվում է Ավիացիայի և ՀՕՊ զորքերի համատեղ վարչությունը: Ինչպես ցանկացած նոր նախաձեռնություն, այնպես էլ նման նոր կառույց ստեղծելը հանդիպում էր դժվարությունների, հատկապես՝ պատերազմական պայմաններում: Արտերկրից գրեթե հնարավոր չէր հայրենիք տեղափոխել ավիացիոն տեխնիկայի պահեստամասեր: Չկային բավարար և անհրաժեշտ որակավորման մասնագետներ, համապատասխան տեխնիկա և սպառազինություն, սարքավորումներ, օդանավակայաններ և այլն: Ակտիվորեն համալրվում են ավիացիայի հետ որևէ կապ ունեցող բոլոր անձինք, գալիս են տասնյակ հայրենասերներ արտերկրից:

Երևանում տեղակայված արդեն ռուսական ուղղաթիռային առանձին էսկադրիլիան, միջպետական համապատասխան համաձայնագրերով հանդերձ, հունիսից արդեն հանձնվում էր հայկական կողմին: Սակայն դա նվեր չէր եղբայրական ազգին: Այդ գործընթացը տեղի է ունենում ազատամարտիկների համառ ջանքերի շնորհիվ: 1992 թ. ապրիլին տեղեկանալով, որ այդ զորամասն ուզում են հանել ՀՀ-ից, քաղաքացիական օդաչուները սկզբից փորձում են ուղղաթիռների վրայից մասեր հանել խափանելով այդ գործընթացը, հետո օգնության են գալիս ազատամարտիկները, որոնցից մի փոքր ջոկատ միշտ գտնվում էր օդանավակայանում և ուղեկցում էր թռիչքները:

Մոսկվայից ժամանած գեներալին պատանդ վերցնելու միջոցով կանխվում է Երևանից 7-րդ գվարդիական բանակի 382-րդ առանձին ուղղաթիռային ավիաէսկադրիլիայի (Զ/Մ 32923) դուրս բերումը և նույնիսկ որոշ ուղղաթիռներ հետ են վերադարձվում թռիչքից: Գործողությունը ղեկավարելու պատասխանատվությունը ստանձնել էր Վ. Սարգսյանը:

Արդեն կային ուղղաթիռներ, սակայն խնդիրներն ավելի շատ էին: Համալրված օդաչուների երկու խմբերը հունիսի 17-ին Արզնիում կատարում են առաջին ուսումնական թռիչքը: Նախապատրաստական աշխատանքներում շատ էին օգնում քաղաքացիական ավիացիայի օդաչուները: Հայրենիք եկած հայ ավիատորներից ոչ բոլորն էին մեր ունեցած տեխնիկաների մասնագետներ: Շատերն իրենց մասնագիտությամբ այստեղ առհասարակ անելիք չունեին: 1992 թ. հունիսի 23-ին կատարվում է հայկական օդուժի առաջին մարտական խնդիրը:

Մարտական խնդիրը կատարվում էր երեք ուղղաթիռային անձնակազմով: Հակառակորդի կողմից ուղղաթիռները հրետակոծվում և վնասվում են: Երկու մարտական «Մի-24» ուղղաթիռները կատարում են հարկադրված վայրէջք: Սակայն երրորդ «Մի-8» ուղղաթիռի անձնակազմը գնում է վայրէջքի՝ փրկելով իր ընկերներին թշնամու ճիրաններից:

1992 թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ պաշտպանության նախարարի հրամանով ավիացիայի վարչությունն առանձնանում է ՀՕՊ-ի վարչությունից և դառնում առանձին կառույց: Ստեղծվում են առանձին զորամասեր և ստորաբաժանումներ:

1992 թ. ամռանը դաժան մարտեր էին ընթանում Մարտակերտի և շրջակա գյուղերի համար, հանգիստ չէր նաև այլ ճակատներում: Հակառակորդը չափազանց ակտիվ էր նաև Ասկերանի և Մարտունու ուղղություններում: Սեպտեմբերին ռազմական ավիացիան գործում էր Լաչինի ուղղությամբ: Հարվածներն ուղղվում էին մարդասիրական միջանցքին սպառնացող հակառակորդի Քարիղշլաղ (Կարիկիշլակ), Ղոչազ և Սաֆյան գյուղերին, Մարտունի-Ֆիզուլի բնագծի վրա գտնվող և հատկապես Մարտունուն սպառնացող Փիրջամալ, Ղաջար բնակավայրերի կրակակետերին և դիրքերին:

Արցախի հանրային հեռուստատեսության հաղորդած տեղեկությունների համաձայն՝ հայկական «Սու-25» գրոհիչը Ստեփանակերտի երկնքում խոցվում է հայկական ՀՕՊ-ի կողմից (1992 թ. սեպտեմբերի 4, օդաչու՝ կապիտան Մ. Մելիքյան): Նույն ամսի 16-ին նորից Մ. Մելիքյանը «Սու-25»-ով հարված է հասցնում Կարմիր Շուկա և Ղաջար բնակավայրերի մոտակայքում տեղակայված ադրբեջանական մարտական դիրքերին:

1992 թ. հոկտեմբերին ՀՀ ԶՈՒ մարտական և ուսումնա-

պորտային-մարտական ուղղաթիռները հարվածներ են հասցնում Լաչինի միջանցքին հյուսիսից և հարավից սպառնացող հակառակորդի Մոլլալար բնակավայրի, Մուզուզդաղ և Ղոչազ լեռների ուղղությամբ տեղակայված կրակակետերին: Այստեղ մղվում էին դաժան մարտեր և երկու կողմերն էլ ավիացիա էին կիրառում:

Ուղղաթիռներով հարվածներ են հասցվում նաև 1993 թ. հունվարին՝ հակառակորդի Սաֆյան բնակավայրի և շրջակա տեղանքի ուղղությամբ տեղակայված դիրքերի վրա, իսկ 1993 թ. մարտին՝ Չարեքտար բնակավայրի և շրջակա տեղամասերի ուղղությամբ տեղակայված դիրքերին:

Ուղղաթիռներով հարվածներ են հասցվել նաև Նարեշտար, Նախիջևանիկ, Մեծ-Շեն, Դրմբոն և այլ տեղամասերում: Հայկական ուղղաթիռները կրակով աջակցել են նաև ինքնապաշտպանական ուժերի հարձակողական գործողություններին: Մասնավորապես, 1993 թ. հուլիսին Աղդամի ազատագրման ընթացքում չղեկավարվող ավիացիոն սպառազինությունով հարվածներ են հասցրել:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Խորհրդային Միության փլուզումից հետո նրա կազմի մեջ մտնող յուրաքանչյուր պետություն ստացավ որոշակի քանակությամբ զենք և մարտական տեխնիկա: Բոլորովին այլ հարց է, թե ինչպե՞ս և ինչքա՞ն է մեզ բաժին հասել «եղբայրական» չափաբաժնից: Մեզ բաժին հասած թեկուզ չնչին, բայց եղած զենքի դերը պիտի համարենք կարևոր:

«Մեծ եղբոր» համար հայկական և ադրբեջանական նորաստեղծ պետությունները իրար նման էին և սակայն չստացան նույն տեսակի սպառազինություն: Ադրբեջանն իր տարածքում եղած պահեստներից բաժին ստացավ 11000 բեռնավագոն սպառազինություն, իսկ Հայաստանը 500 վագոն սպառազինություն: Ադրբեջանում ավելի մեծ քանակի ավիացիա կար, ինչպես նաև դեռ գործում էր ինքնաթիռավերանորոգման գործարանը, որը շատ մեծ դեր կարող էր խաղալ ցանկացած պատերազմի ժամանակ:

Ադրբեջանական ավիացիան նյութական և տեխնիկական հզոր բազայի, անհրաժեշտ մասնագետների առկայության և լավ փորձի շնորհիվ գործել է բավականին ակտիվ և արդյունավետ հատկապես պատերազմի նախնական փուլում, երբ հիմնական մասնագետները ԽՍՀՄ բանակի այլազգի սպաներն էին: Ադրբեջանն ակտիվորեն հավաքագրում էր վարձկանների: 1993 թ. օգոստոսի 4-ին ռուսական «Մեգապոլիս էքսպրես» թերթում հրապարակված մի հաղորդագրության մեջ տեղեկանում ենք, որ Պերմում հավաքագրվում են վարձկաններ Ադրբեջանի բանակի համար, իսկ Թաթարստանում հավաքագրում էին միայն մահմեդականների: Կատարվում էին հարյուրավոր մարտական թռիչքներ: Օրինակ՝ գերված Ա. Չիստյակովը խոստովանում էր, որ անձամբ կատարել է ավելի քան 30 մարտական թռիչք:

Չնայած ադրբեջանական ավացիան հզոր էր, վարձկան օդաչուները պատրաստված էին, իսկ ինքնապաշտպանական ուժերի կազմում ՀՕՊ-ի անհրաժեշտ մասնագետները փոքրաթիվ էին ու մարտական տեխնիկան քիչ էր, միևնույն է, ադրբեջանական խոցված թռչող սարքերի ընդհանուր թիվը անցնում է 30-ից: Խոցված ինքնաթիռների մեջ մահացած վարձկան օդաչուներից էին նաև մայոր Ս. Մինյուշկինը և կապիտան Ե. Կարլովը:

Ավիացիան ընդհանուր ռազմական գործողությունների կազմակերպման ժամանակ հանդես էր գալիս ժամանակին և բավականին արդյունավետ: Ունեցած տեխնիկայի քանակը, գիտելիքներն ու փորձը թույլ էին տալիս հարվածները կազմակերպել համապատասխան ձևերով: Բազմիցս կիրառվել են մարտավարական հատուկ հետախուզման և նշանառման, օգնության, ՀՕՊ-ի ճնշման, շեղման և այլ տեսակի խմբեր, որոնք խելամիտ օգտագործման դեպքում շատ են օգնում հարվածային խմբերին և բազմակի անգամ մեծացնում են ավիացիոն հարվածների արդյունավետությունը: Սակայն հետագայում, ինչպես ցույց տվեց ժամանակը, ադրբեջանցիները ոչ միայն լավ չսերտեցին իրենց դասերը, այլև սխալ մոտեցում ցուցաբերեցին: Շատ այլազգի օդաչուներ ադրբեջանական հրամանատարությունից ոչ միայն չստացան խոստացված գումարը, այլ նաև ենթարկվեցին տարատեսակ հալածանքների: Ադրբեջանն անգամ չկիրառեց նրանց փորձը: Ինչպես ցույց է տվել ավիացիայի կիրառության բազմամյա փորձը, ռմբակոծիչ ինքնաթիռների կիրառության լավագույն թիրախը հակառակորդի ռազմաարդյունաբերական համալիրն է, ղեկավարման կետերը, պահեստները, զորքերի ռեզերվային կուտակումները, կարևոր հաղորդակցման ուղիները և այլն:

Ադրբեջանական կողմն ավիացիան հիմնականում կիրառել է որպես հարվածային միջոց, այդ թվում նաև խաղաղ բնակչության դեմ: Օդային մարտեր չեն գրանցվել, չնայած եղել են դեպքեր, երբ օդաչուները երկնքում տեսել են հակառակորդի ուղղաթիռը կամ ինքնաթիռը: Առանձնահատուկ ուշադրության է արժանի «ՄիԳ-25» ինքնաթիռի կիրառությունը: Սա բացառիկ տվյալներ ունեցող ինքնաթիռ է, որը պահանջում է բարձր մասնագիտական որակավորում և հատուկ վերաբերմունք տեխսպասարկման հարցում: Ունենալով մեծ արագություն, թռիչքի բարձրություն և օդային մարտի յուրահատուկ հնարավորություններ՝ «ՄիԳ-25»-ն իրեն այնքան լավ չի դրսևորում մարտական այլ խնդիրներ լուծելիս: Ինչպես ցույց տվեց փորձը, «ՄիԳ-25»-ը շատ դժվար է կիրառել ցամաքային նշանակետերին հարվածելու նպատակով: Անհաջողության պատճառներից է «ՄիԳ-25»-ի բարդ նշանոցային հարմարանքը: Ադրբեջանն էլ Իրաքի նման չկարողացավ այդ սարքերը մշտապես ճշգրտել: Կործանիչի ուժեղ կողմերը կիրառելու ընագավառ ուղղակի չկար, հայկական կողմը չուներ բարձրաթռիչք ինքնաթիռներ: Մամուլում հայտնված այն տվյալները, թե օդաչուներն այս ինքնաթիռի թևերի տակ եղած օդ-օդ դասի ջերմային ինքնուղղորդվող հրթիռներով խոցել են հայկական տանկեր, չի համապատասխանում իրականությանը:

Պատերազմի այս փուլում ադրբեջանական օդուժի և հայկական ՀՕՊ-ի հակամարտությունը լրացնում է հայոց փառավոր հաղթանակների ցանկը: Առանց

հայկական կործանիչ ավիացիայի ադրբեջանցիները մոտ 150 թռչող սարքերից կորցրել են 30-ը: Հայ հակաօդայինների հաջողության հիմնական գրավականը եղած միջոցների շարժունակությունն էր, դրանցով արագ խուսավարումը և գրագետ կիրառումը:

Ադրբեջանական տրանսպորտային ավիացիան ևս հիմնականում ներկայացված էր ուղղաթիռներով, որոնք ևս գործել են ինտենսիվ:

Հայկական ավիացիայի կողմից եղել են նաև այլ չնշված մարտական թռիչքներ՝ կրակային հարվածներով, հետախուզությամբ և այլն: Պատերազմի դաշտից դուրս է բերվել ավելի քան 980 վիրավոր ու հարյուր սպանված: Դեպի ռազմաճակատ է տեղափոխվել ավելի քան 24 հազար կիլոգրամ սպառազինություն, պարեն և այլ կարևոր բեռներ: Ռազմական ավիացիայի օդաչուները քաղաքացիական ավիատորների դեմ լավ չէին տիրապետում տեղանքին: Նրանք շատ տեղերում մարտական խնդիրներ էին կատարում առաջին անգամ, հին քարտեզներով, առանց կողմնորոշիչների:

Դիրքերն էլ հաճախակի փոխվում էին, իսկ վատ տեղեկացվածության պատճառով կարելի էր նույնիսկ հարվածել յուրայիններին: Եզակի չէին մոլորվելու դեպքերը: Մարտական թռիչքների փորձը ցույց է տալիս, որ հակառակորդի վրա հարձակվելն ավելի դյուրին է, քան հետ դառնալը: Գնալիս քեզ կարող են չտեսնել, իսկ հետդարձին անհամբեր սպասում են: Սակայն լինում էին դեպքեր, երբ մարտական ուղղաթիռները գրոհելիս անմիջապես հայտնվում էին հակառակորդի տեսադաշտում: Շատ էին լինում նաև դեպքեր, երբ ուղղաթիռները մարտական թռիչքներից վերադառնում էին վնասվածքներով, բայց, բարեբախտաբար, մարտական գործողությունների ժամանակ հայկական մարտական ավիացիան հակառակորդի կրակից չի կորցրել և ոչ մի թռչող սարք:

Հայկական կողմից թռիչքների 80-90 տոկոսը կազմել են տրանսպորտային փոխադրումները: Մինչև Լաչինի միջանցքի բացվելը հայկական կողմից տրանսպորտային բոլոր փոխադրումները կատարվել են ավիացիայի միջոցով: Առանց վարանելու պետք է փաստել, որ ավիացիան թույլ չտվեց հակառակորդին հայաթափել Արցախը: Պատմությանը հայտնի են մի քանի դեպքեր, երբ տրանսպորտային ավիացիան որոշիչ դեր է խաղացել այս կամ այն հակամարտության ժամանակ: Մասնավորապես 1940-45 թթ. Չինաստանի փրկության համար կազմակերպված կյանքի ճանապարհը՝ «Գորգը», որն անցնում էր Հնդկաստանի ջունգլիների վրայով: 600 տրանսպորտային ինքնաթիռներն ամսական Չինաստան էին հասցնում մոտ 30000 տոննա բեռ, և դրանց շնորհիվ պայքարը ճապոնացիների դեմ շարունակվեց մինչև հաղթական ավարտ:

Մյուս պատմությունը հայտնի է որպես Բեռլինի «փրկության կամուրջ», որը նորից ստեղծեցին ամերիկյան բեռնատար ինքնաթիռները 1948 թ. մարտին: Խորհրդային ղեկավարությունը շրջափակել էր Գերմանիայի մայրաքաղաքը նպատակ ունենալով տնտեսապես խեղդել վերջիններիս: Ամերիկյան ղեկավարությունն օրական 4500 տոննա բեռների փոխադրման ծավալներով մի կերպ փրկեց քաղաքը սովահարությունից ու ցրտից: Գործողությունը տևել է մոտ մեկ տարի:

Նման մի կամուրջ էին ստեղծել հայ օդաչուներն Արցախի համար: Եվ եթե ավիացիան ունենար ոչ թե 7-8, այլ 30-40 տրանսպորտային ուղղաթիռ, ապա, թերևս, հնարավոր կլիներ նաև հայաթափումից փրկել Շահումյանը: Բացի դրանից, հայկական կողմից ձեռնարկված հիմնական հարձակողական գործողությունների նյութական ապահովման նախապատրաստական աշխատանքները կատարել է ավիացիան: Գոյամարտի փորձից պետք է կատարել ճիշտ եզրակացություններ:

Հայկական ավիացիայի 10-20 տոկոս կազմող մարտական կիրառությամբ թռիչքների ընթացքում չի եղել դեպք, որ զենք կիրառվի խաղաղ բնակչության նկատմամբ: Հայկական կողմից հիմնականում տեխնիկայի անհրաժեշտ քանակության բացակայության պատճառով կիրառվել են հարվածող խմբեր, հազվադեպ՝ օդակի մակարդակով: Լավագույն տարբերակը եղել է զույգը: Հայկական կողմից ավիացիայի կիրառության փորձը լավագույնս ցույց է տալիս, թե որքան մեծ դեր կարող է խաղալ ավիացիան պատերազմի ժամանակ, հատկապես ուղղաթիռային ավիացիան լեռնային տեղանքում: Խնդիրը միայն բեռնափոխադրումները չեն, չնայած միայն դրանց նշանակությունը զգալի է: Մարտական ավիացիան ևս կարող է բավականին հզոր լինել նույնիսկ ուղղաթիռներով:



# Գավառական ձեռնածուն



Ռուբեն Հովսեփյան

Գավառական աճպարարի մատները, սովորաբար, այնքան վարժ չեն լինում, որ կարողանան թաքցնել անհետացող և հայտնվող առարկաների շարժը, և հանդիսատեսը, ով նույնիսկ դահլիճի հեռավոր շարքից է տեսնում, թե ինչպես է այդ ձեռնածուն գրպանից հանածը ծոցը խցկում, ծոցից հանածը՝ բերանը գցում, ուղղակի վիրավորվում է, որ իրեն, ինչպես հարկն է, չեն խաբում: Կրկես է, չէ՞. նա եկել է խաբվելու, իսկ ձեռնածուն դանդալոշ է, խաբելու վարպետություն չունի: Եվ, ուրեմն, խաբում է, թե իբր խաբող է:

Ահա ճիշտ այդ դանդալոշ ձեռնածուի պես, Բաքվում կայացած Ընկերվար միջազգայնականի Արևելյան Եվրոպայի, Հարավային Կովկասի և Սևծովյան տարածաշրջանի կոմիտեի նիստում, Ադրբեջանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության համանախագահ Արազ Ալիզադեն է փորձ արել խաբել հանդիսատեսին՝ խեղաթյուրված և շինծու փաստերը գրպանից ծոցը խցկելով, ծոցից՝ բերանը գցելով: Գոնե բերանում պահեր, շաղ չտար դահլիճում: Թքախառն այդ շաղ տվածից եթե հաջողես ամփոփ միտք արտահայտող նախադասություններ կազմել, ապա կըստացվի, որ Հայաստանը երբեք անկախ պետություն չի ունեցել... Հայերն այս տարածաշրջան են գաղթել չգիտես որ մոլորակներից... Հայաստանի Առաջին Հանրապետությունն էլ ստեղծվել է Էրիվանյան ադրբեջանական խանության վրա... Երևանն էլ մայրաքաղաք կարգելու նպատակով Դաշնակցությունը հարկադրված է եղել խնդրանքով դիմել Մուսավաթին և Մուսավաթը մեծահոգաբար թույլ է տվել... Եվ բազմաթիվ նման անհեթեթություններ...

Հակահայ տրամադրվածությամբ տոգորված ադրբեջանական հասարակայնությունը պատրաստակամ է խաբվելու, միայն թե վարպետորեն խաբիր: Ո՞վ չգիտե, այ Արազ Ալիզադե, որ 1918 թվականին այս տարածքում խանություններ չկային: Ռուս-պարսկական

պատերազմից հետո խանությունները նահանգ էին դարձել, իսկ խանությունների դարաշրջանում՝ նույնիսկ Բաքվի խանությունը ադրբեջանական չէր կոչվում, էլ ուր մնաց Էրիվանյանը: Իսկ ինչ վերաբերում է Երևանը մայրաքաղաք դարձնելու Դաշնակցության խնդրանքին, ապա սույն ձեռնածուն խոստացել էր հրապարակել գրպանում պահված փաստաթուղթը, սակայն չգիտես ինչու ուշացնում է: Հավանաբար բերանում երկար ծամծմելուց չի դիմացել գայթակղությանը՝ կուլ է տվել:



Սեփական երկրում, թերևս, գիտեն Արազ Ալիզադեի իսկական արժեքը, բայց քաղաքական այս գործիչը նաև ոչ այնքան տեղեկացված եվրոպաներում է սիրում շրջագայել և մասնակցել գրեթե բոլոր հիմնադրամային և դրամաշնորհային միջոցառումներին: Եվ ինչ օրակարգով էլ հրավիրված լինի հավաքը, ընդդիմադիրի դիմակ հագած այս մարդը հնարը գտնում է հակահայկական թույն արտաշնչելու:

Հավաքների ընդմիջումներին էլ հանգիստ չունի: Հյուրանոցից հավաքատեղի, հավաքատեղիից՝ հյուրանոց ճանապարհին էլ: Այստեղից-այնտեղից պատառ-պատառ թռցրած դեպքերն ու մտքերն իրար կցմցելով, տեղնուտեղը նոր փաստ հորինելով, ժամանակագրության հերն անիծելով, որտեղ պետք է բարձրաձայն, որտեղ պետք է՝ շշուկով բարբաջում է, հա՜ բարբաջում և չի խորշում նույնիսկ մարդասպանին հերոս կոչել, կացնահարված քնած հայ սպային՝ մեղավոր:

Եվ գավառական այս ձեռնածուն քեզ հետ նստում է Ընկերվար միջազգայնականի միևնույն դահլիճում...



1903–1914: Административная карта – последний имперский вариант [R] | 15

№ 7—9 (213) XX ՏԱՐԻ ՅՈՒԼԻՍ—ՍԵՊՏԵՄԲԵՐ 1910

„Droschak"
Organe
de la Fédération
Révolut. Arménienne.

ԴՐՕՇԱԿ

Adresse:
Rédaction du Journal
„Droschak"
Genève (Suisse)

«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ» ՕՐԳԱՆ

# Միջկուսակցային խորհրդաժողով

(Մ. Վարանդեանի բացման խոսքի շարունակությունը)

«Եթէ այդ այդպէս է, ապա,- մտածում է ՀՅ Դաշնակցութիւնը, - անհրաժեշտ է, որ բոլոր ակտիվ, գործօն կուսակցութիւնները կենտրոնացնեն իրենց ճիգերը գլխաւորապէս ինքնակալութեան դէմ մղելիք կռուի վրայ: Եւ՝ «մարտական կռուի» վրայ- եթէ թոյլ կը տաք այս ոճը գործածել… Պատրաստել պէտք է՝ ոչ թէ կրաւորական, այլ ակտիվ, զինուած ու մասսային դիմադրութիւն:

«Ընկերներ, կարծեօք, չեմ սխալուի, եթէ ասեմ, որ ի շարս այն պատճառների, որոնք առաջ են բերել համառուսական յեղափոխութեան ֆիասկօն, ոչ վերջին տեղն են բռնում այդ երկու պատճառները.

1. Յեղափոխական ուժերի պառակտումն ու երկպառակութիւնները- մէկ կողմից:

2. Մարտական տարրի պակասութիւնը, մասսային ու ռազմական պատրաստութեան ծայրայեղ թուլութիւնը- միւս կողմից:

«Եւ մեզ թւում է, եթէ կամենում ենք օգտագործել անցեալի դասերը, ապա պէտք է ջանանք վերացնել ընդհանուր ուժերով այդ երկու պատճառները:

«Համերաշխ գործակցութեան հրաւէրներ եղել են եւ անցեալում: Այսպիսի խորհրդաժողովներ գումարուել են եւ նախայեղափոխական շրջանում… Եթէ այն ժամանակ ուժերի միացումը անհրաժեշտ էր դիտւում, ապա նա կրկնապատիկ անհրաժեշտ է այժմ, Յեղափոխութեան ջախջախումից յետոյ, երբ բռնակալութիւնը չափել է արդէն ամբողջ խորութեամբ Յեղափոխութեան ռազմական պատրաստութիւնը, երբ նա արդէն գիտէ, թէ ինչքան դիմադրական կարողութիւն ունի հարիւր միլիոնաւոր ժողովուրդը եւ նրա յեղափոխական կուսակցութիւնները եւ երբ այդ գիտակցութիւնը նոր ուժ է հաղորդում նրան, բռնակալութեանը:

«Կայ մի այլ խոշոր հանգամանք, դրդիչ միութեան: Դա այն է, որ ներկայումս եւ այսուհետեւ de facto Յեղափոխութեան միակ կրողը Ռուսաստանում լինելու է սօցիալիզմը: Բուրժուական ռադիկալիզմը (ար-

«Դրօշակի» 1910 թ. հոկտեմբեր, նոյեմբեր և դեկտեմբեր ամիսների համարները չեն տպագրվել:

մատականութիւնը), որ շարժման յայտնի վայրկեաններում տրամադրուած էր յեղափոխականօրէն եւ որ քիչ չը նպաստեց 1905 թուի յաղթանակներին, շուտով իջաւ թատերաբեմից եւ մեծ մասամբ նետուեց ըէակցիայի գիրկը:

«Ես չեմ մտնում ոչ այդ պատմական volte-face-ի վերլուծումի մէջ, ոչ էլ ուզում եմ գնահատել սօցիալիստական կուսակցութիւնների այդ կղզիացման օբյեկտիւ-առարկայական եւ սուբյեկտիւ-ենթակայական պատճառները: Փաստն եմ արձանագրում: Իսկ փաստն այն է, որ յիրաւի, սօցիալիստական կազմակերպութիւնները այսուհետեւ մեն-մենակ պիտի տանեն իրենց ուսերի վրայ Ռուսաստանի «բուրժուական յեղափոխութեան» ամբողջ ծանրութիւնը: Այդ փաստն եւս հրամայականօրէն պահանջում է, որ մենք սեղմենք մեր շարքերը- գէթ համերաշխ գործակցութեան մէջ, քաղաքական ձեռնարկների հողի վրայ:

«Չը մոռանանք եւ այն, որ անցեալ յեղափոխութեան միջոցին, վճռական պատճառների շարքում ունեցանք մի այնպիսի ահագին ծանրակշիռ գործօն, որպիսին էր եապոնական պատերազմը- մի գործօն, որի նմանը այնքան էլ յաճախ չի արտադրում պատմութիւնը... Վերջապէս, հարկ կա՞յ արդեօք յիշեցնելու վերջին մեծ միճուսը, այն, որ ըէակցիայի ներկայ համասփիւռ թագաւորութեան մէջ տեսնում ենք ողբալի մնացորդները միայն նախկին յեղափոխական կուսակցութիւնների, տեսնում ենք ընդհանուր կազմալուծում... Բացառութիւն չեն կազմում նաեւ կովկասեան կազմակերպութիւնները, որ երբեմն բաւականաչափ ուժեղ էին եւ որոնք վերջին տարիներս ենթարկուեցին մի վայրենի արշաւանքի: Բացառութիւն չի կազմում եւ Դաշնակցութիւնը:

«Ընկերներ, ըստ երեւոյթին, ուժերի համագործակցութեան անհրաժեշտութիւնը զգում են գրեթէ բոլոր գործող կուսակցութիւնները: Մնում է հնարաւորութեան խնդիրը: Ահա այդ խնդիրն էլ դրւում է այստեղ ձեր քննութեան: Կարո՞ղ ենք արդեօք գտնել շփման կէտեր քաղաքական գործունէութեան համար, այլեւայլ դաւանանքների պատկանող սօցիալիստական հատուածների միջեւ: Եթէ այո, ապա ինչպէ՞ս պատրաստուել, կազմակերպել ընդհանուր գործը:

«Այսքանը- իմ կողմից: Շնորհակալութիւն Դաշնակցութեան անունից ձեր տուած արձագանքի համար: Ձեզ, կարծում ենք, հասկանալի կը լինի, թէ ինչու այդ կազմակերպութիւնը այդքան տենդային կերպով բռնուած է ուժերի միացման մտահոգութեամբ: Եւ այն՝ յանձին իր երեք խոշոր հատուածների-ռուսահայկական, թիւրքահայկական, պարսկահայկական: Ասե՞լ ձեզ արդեօք, որ թիւրքահայերն ու պարսկահայերը եւս խորապէս շահագրգռուած են այդ խնդրով: Թիւրքիան եւ Պարսկաստանը շարունակում են լինել թատերաբեմ ռուս կառավարական ինտրիգների, դաւերի: Տարրական ազատութիւնները, ճիշտ է, նուաճուած են այնտեղ, բայց դեռ կանգուն կը մնայ սահմանների վրայ ռուսական բռնապետութիւնը, յախտենօրէն դաւող ու խառնակող... Ռուսական ազատագրութեան հարցը այդպիսով միաժամանակ տաճկական եւ պարսկական մի հարց է:

«Ի վերջոյ՝ դրական ու կոնկրետ առաջարկի առթիւ. յայտնելով մեր ջերմ բաղձանքը ուժերի համագործակցութեան նկատմամբ, մենք չենք յաւակնում առաջադրելու այստեղ դիրեկտիւներ եւ կոնկրետ ձեւակերպութիւններ: Բայց, կարծում ենք, Խորհրդաժողովը ինքը կը հոգայ այդ դիրեկտիւները եւ կը տայ գործնական հրահանգներ, ունենալով իր մէջ աւելի փորձուած եւ կացութեանը աւելի գիտակ կուսակցութիւններ ու դէմքեր»:

## Սոցիալիստական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին. գլոբալ հեռանկարներ, տեղական իրողություններ

(Խորհրդաժողովի նյութեր)

Երեւան, 2010, 400 էջ




«Սոցիալիստական մոտեցումներ Հայաստանի մարտահրավերներին. գլոբալ հեռանկարներ, տեղական իրողություններ» միջազգային խորհրդաժողովը, որը կայացավ 2010 թ. Երեւանում, ձեւի եւ բովանդակության առումով աննախադեպ էր:

Խորհրդաժողովին մասնակցում էին Հայաստանի եւ արտասահմանի միջազգային ճանաչում ունեցող, առաջադիմական զանազան գաղափարախոսություններ կրող քաղաքական դեմքեր եւ լավագույն մասնագետներ:

ՀՅԴ Հայաստանի Գերագույն մարմնի նախաձեռնությամբ եւ ՀՅԴ Բյուրոյի աջակցությամբ կազմակերպված խորհրդաժողովը ոչ միայն մտքերի լայն փոխանակության ու բաց խոսակցության միջավայր ձեւավորեց սոցիալ-տնտեսական եւ ֆինանսական հզոր քաղաքականությունների շուրջ, այլ նաեւ ընդգծեց ժողովրդավարական ընկերվարության ներկա հոլովույթը, հատկապես մեր երկրում, ուր տակավին վերացված չեն համայնավարության տարիներից ժառանգած բացասական հետքերը, այն տարուները, ոչ տակավին մնացել են Հայաստանի ժողովրդի ենթագիտակցության մեջ ընկերվարություն հասկացության հետ կապված:

Քննարկվեցին մերօրյա ընկերվարության գաղափարական հիմքերը, գործադրական ժամանակակից մոտեցումները, ինչպես նաեւ Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական մարտահրավերները եւ դրանց հնարավոր լուծումները սոցիալիստական մտքի տեսանկյունից: Նոր մտքեր հնչեցին եւ լույս փորձ կատարվեց, մի կողմից, ՀՅԴ ընկերվարությունը տարբերակելու խորհրդային համայնավարությունից, իսկ մյուս կողմից՝ ուրվագծելու ՀՅԴ ընկերվարության եւ նոր ազատական մտածողության միջեւ էական տարակարծությունները:

Խորհրդաժողովը առաջարկեց ոչ միայն տեսական, այլեւ գործնական եւ իրատեսական մոտեցումներ՝ համաշխարհային տնտեսական եւ քաղաքական գործընթացներին: Քննարկվեց Հայաստանում տիրող սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Բնական է, որ խորհրդաժողովն անդրադարձավ նաեւ համաշխարհային այն մարտահրավերներին, որ այսօր հուզում են համայն մարդկությանը. միջազգային ֆինանսական ճգնաժամ, կլիմայի փոփոխություն, կենսոլորտի պահպանում, տնտեսական աճ, աղքատության վերացում, կայուն զարգացում, ղեկավարման համակարգի բարեփոխում, արդար ղեկավարության հաստատում:

Խորհրդաժողովի նյութերում ներկայացված են Հայաստանում եւ արտասահմանում լայն ճանաչում ունեցող քաղաքական գործիչների եւ մասնագետների զեկույցները:

Զեկույցների թեման բավական լայն է՝ մերօրյա ընկերվարության (սոցիալիզմ) գաղափարական հիմքերից եւ համաշխարհային մարտահրավերներից մինչեւ Հայաստանում առկա սոցիալ-տնտեսական մարտահրավերները եւ դրանց հնարավոր լուծումները սոցիալիստական մտքի տեսանկյունից:

Կոնֆերանսի նյութերը գրքում հրատարակվել են բնագրերի լեզվով՝ հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն եւ իտալերեն: Թեմատիկ առումով դրանք առանձնացված են «Սոցիալիզմը ժամանակակից աշխարհում», «Գլոբալիզացիա եւ զարգացում», «Սոցիալական պաշտպանության համակարգ», «Մշակութային-կրթական քաղաքականություն, հանրային առողջապահություն, կանանց եւ երիտասարդության հիմնախնդիրներ», «Սոցիալ-տնտեսական վերափոխումներ» եւ «Կորպորատիվ կառավարում» գլուխներով: Գրքում տեսական նյութից զատ տեղ են գտել զանազան աղյուսակներ եւ գծապատկերներ, որոնք առավել հասկանալի ու մատչելի են դարձնում արծարծված խնդիրները:

Ասենք նաեւ, որ խորհրդաժողովի նյութերի ու ելույթների այս ժողովածուն «Արդարություն» մատենաշարի վեցերորդ գիրքն է:

# Պատկերազարդ ընծա՝ ՀՅԴ 120-ամյակի առիթով

Հայտնի փաստ է, որ արվեստը նաև ճանաչողական, ուսուցողական և, հատկապես, դաստիարակչական մեծ ուժ ունի: Հենց այս հանգամանքը նկատի ունենալով «Յուշամատեան Հ.Յ. Դաշնակցութեան. Ալբոմ-Ատլաս»-ի խմբագրակազմը որոշել է «Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան թանգարան» հիմնադրամին նվիրել գեղարվեստական մի քանի գործեր, որոնք, ինչպես խմբագրակազմի ղեկավար Հ. Մանճիկյանն է բնորոշում՝ պէտք է «արտահայտեն ասպետական ոգին» այն ողջ սերնդի, որն իր կյանքը նվիրաբերեց հարազատ ազգի ազատագրության գործին:

Նման որոշման համար առիթ հանդիսացավ ՀՅ Դաշնակցության 120-ամյակը, որ լրանում է այս տարի: «Յուշամատեան Հ.Յ. Դաշնակցութեան. Ալբոմ-Ատլաս»-ի խմբագրությունը (խմբագրակազմ՝ Հակոբ Մանճիկյան (խմբագիր), Քնար (Ավետյան) Մանճիկյան, Վրեժ-Արմեն Արթինյան, Լորենց Յագուպյան, Համո Ապտալյան) այս որոշումն ընդունել է՝ նպատակ ունենալով մեր ժողովրդի ազգային ազատագրական պայքարի և Հայ Յեղափոխական Դաշնակցության գործունեության, հատկապես՝ համեմատաբար քիչ հայտնի հերոսական դրվագները հայ հասարակության առավել լայն խավերին ծանոթացնելը, ինչպես նաև երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակությանը նպաստելը: Իր նամակներից մեկում Հ. Մանճիկյանը գրում է, որ իրենց ձեռնարկի նպատակն է նպաստել ներկայացնելու «Հայոց դիւցազնամարտի 1890-1922 թթ. անկրկնելի դէպքերն ու դէմքերը Հ.Յ.Դ. թանգարանի պատերին՝ որպէսզի անոնց ազնուական շունչով ողողուի Հայոց անմահներու յիշատակին յատկացուած դահլիճը»: Այդ նպատակի իրականացմանը նախորդել է «Յուշամատեան»-ի խմբագիր Հ. Մանճիկյանի և «Հ.Յ.Դ. պատմութեան թանգարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ Ա. Աճեմյանի բարեկամական նամակագրական «համագործակցությունը», որի ընթացքում հստակեցվել են առաջարկվող թեմաներին վերաբերող մանրամասները, ընտրվել՝ նկարիչները:

Առաջարկված երեք կտավներից առաջինը պետք է նվիրված լիներ 1903 թ.-ին Բասենի դաշտում հայ ազատագրական պայքարին նվիրված գործիչներ Խանի (Բարսեղ Թիրաքյան) 27 հեծյալների և Նեվրուզի 125 մարտիկների ընդհարմանը թուրքական զորքի հետ: Երկար որոնումներից հետո ընտրությունը կանգ առավ նկարիչներ Գոռ Շահբազյանի և Ռոբերտ Խաչատրյանի վրա, որոնց կատարած աշխատանքն արդեն հանձնված է թանգարանին: Կտավի կենտրոնում, արյունահեղ ճակատամարտի ֆոնին, որպես «հարիւրաւոր անձնուրաց հերոսների խորհրդանշական կերպարներ», պատկերված են մեր ազատագրական պայքարի իրական ու սիրված հերոսներ, կարնեցի ֆիդայիներ Սեթոն ու Գարեգինը: Կտավն անվանված է «Վերջին հրաժեշտը» և ներկայացնում է Գարեգինի սրտահույզ հրաժեշտը ճակատամարտում մահացու վիրավորված մարտական ընկերոջը՝ Սեթոյին:

«Յուշամատեան Հ.Յ. Դաշնակցութեան. Ալբոմ-Ատլաս»-ի խմբագրակազմի ցանկությունն է, որ հաջորդ երկու կտավները ներկայացնեն Վանի 1915 թ. դյուցազնամարտի և Մայիսյան հերոսամարտերի հաղթական ու ոգեշունչ դրվագները:

Անուշ Ամսեյան














# ԴՐՈՇԱԿ





